ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

# ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

***ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ***

# ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

***ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ***

# JOURNAL OF YEREVAN UNIVERSITY

***PHILOSOPHY, PSYCHOLOGY***

**№ 2(47)**
**2025**

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».
Three issues of "Journal of Yerevan University. Philosophy, Psychology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009.

**Խմբագրական խորհուրդ.**
**Редакционная коллегия:**
**Editorial Board:**

**Գլխավոր խմբագիր՝**
**Главный редактор:**
**Editor-in-chief:**
**Հարությունյան Էդվարդ** *(փ.գ.դ., պրոֆ., edvardharutyunyan@ysu.am)*
**Арутюнян Эдуард** *(д.флс.н., проф.)*
**Harutyunyan Eduard** *(Sc. D. in Philosophy, Professor)*
**Ավանեսյան Հրանտ** *(հ.գ.դ., պրոֆ., avanesyanh@ysu.am)*
**Аванесян Грант** *(д.псих.н., проф.)*
**Avanesyan Hrant** *(Sc. D. in Psychology, Professor)*
**Բաղրամյան Մարիա** *(փ.գ.դ., պրոֆ., Իռլանդիա, maria.baghramian@ucd.ie)*
**Баграмян Мария** *(д.флс.н., проф., Ирландия)*
**Baghramyan Maria** *( Sc. D. in Philosophy, Professor, Ireland)*
**Բարսեղյան Հակոբ** *(փ.գ.դ., Կանադա, hakob.barseghyan@utoronto.ca)*
**Барсегян Акоп** *(д.флс.,н., Канада)*
**Barseghyan Hakob** *(Sc. D. in Philosophy, Canada)*
**Գոսսերիես Աքսել** *(փ.գ.դ., պրոֆ., Բելգիա, axel.gosseries@uclouvain.be)*
**Госсериес Аксель** *(д.флс.н., проф., Бельгия)*
**Gosseries Axel** *(Sc. D. in Philosophy, Professor, Belgium)*
**Զաքարյան Սեյրան** *(փ.գ.դ., պրոֆ., szakaryan@ysu.am)*
**Закарян Сейран** *(д.флс.н., проф.)*
**Zakaryan Seyran** *(Sc. D. in Philosophy, Professor)*
**Ժեմոյտել-Պյոտրովսկա Մագդալենա** *(հ.գ.դ., պրոֆ., Լեհաստան, m.zemojtel-piotrowska@uksw.edu.pl)*
**Жемойтель–Петровска Магдалена** *(д.псих.н., проф., Польша)*
**Żemojtel-Piotrowska Magdalena** *( Sc. D. in Psychology, Professor, Poland)*
**Լուբովսկի Դմիտրի** *(հ.գ.դ., պրոֆ., Ռուսաստան, lubovsky@yandex.ru)*
**Лубовский Дмитрий** *(д.псих.н., проф., Россия)*
**Lubovski Dmitri** *(Sc. D. in Psychology, Professor, Russia)*
**Խաչատրյան Նարինե** *(հ.գ.թ., դոց., n_khachatryan@ysu.am)*
**Хачатрян Нарине** *(к.псих.н., доц.)*
**Khachatryan Narine** *(PhD in Psychology, Associate Professor)*
**Կոշկարյան Մարիաննա** *(փ.գ.դ., պրոֆ., ԱՄՆ, markosh@uga.edu)*
**Кошкарян Марианна** *(д.флс.н., проф., США)*
**Koshkaryan Marianna** *(Sc. D. in Philosophy, Professor, USA)*
**Շավերդյան Գայանե** *(հ.գ.դ., պրոֆ., gayaneshahverdyan@ysu.am)*
**Шавердян Гаянэ** *(д.псих.н., проф.)*
**Shaverdyan Gayane** *(Sc. D. in Psychology, Professor)*
**Պետրոսյան Սիլվա** *(պատ. քարտուղար, փ.գ.թ., դոցենտ, silva.petrosyan@ysu.am)*
**Петросян Сильва** *(отв. секретарь, к.флс.н., доц.)*
**Petrosyan Silva** *(Executive Secretary, PhD, Associate Professor)*

**© Բանբեր Երևանի համալսարանի ❋ Вестник Ереванского университета ❋ Journal of Yerevan University**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ✵ СОДЕРЖАНИЕ ✵ CONTENTS

### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ
### ФИЛОСОФИЯ
### PHILOSOPHY


*Սեյրան Զաքարյան* – Գրիգոր Նարեկացու քրիստոնեական հումանիզմը ........ 5

*Сейран Закарян* – Христианский гуманизм Григора Нарекаци

*Seyran Zakaryan* – The Christian Humanism of Gregor Narekatsi

*Սիլվա Պետրոսյան* – Դավիթ Անհաղթի առեղծվածի լուծման նոր փորձ 20

*Сильва Петросян* – Новый опыт разгадки тайны Давида Непобедимого

*Silva Petrosyan* – A New Attempt to Solve a Mistery of David the Invincible

*Նելլի Ալավերդյան* – Արհեստական ինտելեկտի հիմնախնդիրը էկզիստենցիալ գոյաբանության համատեքստում........ 37

*Нелли Алаверян* – Проблема искусственного интеллекта в экзистенциальной онтологии

*Nelli Alaverdyan* – The Problem of Artificial Intelligence in the Context of Existential Ontology


### ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
### ПСИХОЛОГИЯ
### PSYCHOLOGY


*Հրանտ Ավանեսյան, Անաստասիա Շումարովա* – Անհատականության հարմարվողական մեխանիզմների դինամիկայի ուսումնասիրությունը երկարատև զինված հակամարտության պայմաններում (ռուս.) ........ 49

*Грант Аванесян, Анастасия Шумарова* – Исследование динамики адаптивных механизмов личности в условиях длительного вооруженного конфликта

*Hrant Avanesyan, Anastasiia Shumarova* – The Dynamics of Personality Adptation Mechanisms Under Conditions of Prolonged Armed Conflict (in Rus.)

***Վարդուհի Պապոյան, Ալինա Գալստյան, Նարինե Հարությունյան*** – Ընտանեկան դերերի և արժեքների համեմատական վերլուծություն........................................................................ **64**
***Вардуи Папоян, Алина Галстян, Нарине Арутюнян*** – Сравнительный анализ семейных ролей и ценностей
***Varduhi Papoyan, Alina Galstyan, Narine Harutyunyan*** – A Comparative Analysis of Family Roles and Values

***Էմմա Արզիևա*** – Մոր և մանկան հուզական մենահատուկ կապվածության ու մանկան քնի ընթացքի կարգավորման փոխադարձ կապը ....... **78**
***Эмма Арзиева*** – Взаимосвязь между эмоциональной уникальной привязанностью матери и ребенка с процессом регуляции сна ребенка
***Emma Arzieva*** – The Impact of Maternal-Infant Attachment Style on Infant Sleep Regulation

***Անահիտ Գևորգյան*** – Կազմակերպական հաղորդակցման դերը կազմակերպության հանդեպ վստահության ձևավորման գործընթացում (ՀՀ աշխատաշուկայի օրինակով)............................................ **91**
***Анаит Геворгян*** – Роль организационной коммуникации в процессе формирования доверия в организации (на примере рынка труда РА)
***Anahit Gevorgyan*** – The Role of Organizational Communication in the Trust-Building Process in the Organization (on the Example of the RA Labor Market)

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 2(47), հունիս, 5-19
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.2.005

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻԶՄԸ

ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում քննարկվում է միջնադարի խոշորագույն բանաստեղծ և իմաստասեր Գրիգոր Նարեկացու (951-1003 թթ.) աշխարհայացքի և փիլիսոփայական հայացքների գնահատմանը վերաբերող մի հարց, որը պարզաբանելու համար հընթացս վերլուծվում են «Միջնադար», «Վերածնունդ», «Հայկական Վերածնունդ», «քրիստոնեական աստվածակենտրոն հումանիզմ» և «Վերածննդի մարդակենտրոն հումանիզմ» հասկացությունները: Որոշ հետազոտողներ, նկատի ունենալով հատկապես «Մատյան ողբերգության» գիրքը, նրա նորարարական մտքերն ու մոտեցումները, լեզվամտածողության ինքնատիպությունը, «ներքին» մարդու և մարդու փրկության մասին վարդապետությունը, նրան համարում են Հայկական Վերածննդի ներկայացուցիչ, այսինքն՝ ոչ թե Միջնադարի, այլ Վերածննդի դարաշրջանի մտածող: Եթե խորհրդային շրջանում, երբ տիրապետող էր մարքսիստական մեթոդաբանությունը, նման գնահատականի շրջանառումը հասկանալի էր (Արևելյան և Հայկական Վերածննդի տեսությունը կոչված էր հիմնավորելու մարքսիստական պատմափիլիսոփայության այն դրույթը, թե պատմության մեջ «երկաթե անհրաժեշտությամբ» գործում են համընդհանուր օրինաչափություններ, օրինակ, բոլոր ժողովուրդները պետք է անցնեն զարգացման միևնույն փուլերը), ապա անհասկանալի է, թե ինչու են այսօր հետազոտողները պաշտպանում այդ խիստ գաղափարականացված և անարդյունավետ մեթոդաբանական հարացույցը: Հեղինակի կարծիքով՝ այդպիսի գնահատականը պայմանավորված է այն բանով, որ այդ տեսության կողմնակիցները՝ ա) ըստ էության անտեսում են Միջնադարի և Վերածննդի մշակույթների տարբերությունները, ինչի հետևանքով միջնադարյան մշակույթին բնորոշ երևույթները բնութագրվում են որպես վերածնական, բ) զանց են առնում քրիստոնեական (աստվածակենտրոն) հումանիզմի և վերածնական (մարդակենտրոն) հումանիզմի յուրահատկությունները, գ) Նարեկացուն Հայկական Վերածննդի ներկայացուցիչ համարելով՝

* **Սեյրան Զաքարյան** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի վարիչ
**Сейран Закарян** – доктор философских наук, профессор, заведующий кафедрой истории, теории философии и логики ЕГУ
**Seyran Zakaryan** – Sc. D. in Philosophy, Professor, Head of YSU Chair of History, Theory of Philosophy and Logic
Էլ. փոստ՝ szakaryan@ysu.am https://orcid.org/0000-0003-3743-0381

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.04.2025
Գրախոսվել է՝ 20.04.2025
Հաստատվել է՝ 24.06.2025
© The Author(s) 2025

իբր տալիս են նրան հանճարին պատշաճող գնահատական (տվյալ դեպքում են- թադրվում է, որ Վերածննդի դարաշրջանը Միջնադարի համեմատ ավելի առաջա- դիմական է): Մինչդեռ Նարեկացին իր մտածելակերպով, աշխարհայացքային-փի- լիսոփայական հարցերի քննարկման ու լուծման եղանակներով, մարդու փրկութ- յան իր տեսլականով միջնադարյան մտածող է, քրիստոնեական հումանիզմի խոշո- րագույն ներկայացուցիչ, հիրավի՝ «Տիեզերական եկեղեցու վարդապետ»:

**Բանալի բառեր** – *Գրիգոր Նարեկացի, Միջնադար, Վերածնունդ, Հայկական Վերա- ծնունդ, հումանիզմ, աստվածակենտրոն հումանիզմ, վերածնական մարդակենտրոն հումանիզմ*

Հասարակության կյանքում տեղի ունեցող արմատական փոխակերպում- ները, մասնավորապես՝ պատմամշակութային մի դարաշրջանից անցումը մյուսին, բարդ, խճճված ու հակասական գործընթաց է, ինչը, բնականաբար, տեղիք է տալիս տարբեր, հաճախ իրարամերժ մեկնաբանությունների ու գնա- հատականների: Դրա փայլուն օրինակը Միջնադարի և Վերածննդի դարա- շրջանների փոխհարաբերության հիմնահարցն է, որի վերաբերյալ ստեղծվել է մեծաքանակ գրականություն, մշակվել են տարբեր տեսություններ, որոնցում այդ դարաշրջանների սոցիոմշակութային և գիտափիլիսոփայական ձեռքբե- րումները թերագնահատվում կամ գերագնահատվում են, արժևորվում որպես հետադիմական կամ առաջադիմական, աշխարհիկ կամ կրոնական՝ կախված հետազոտող-մեկնաբանի՝ մշակույթի պատմաբանի, փիլիսոփայի, աստվա- ծաբանի, բնագետի և այլոց արժեքաաշխարհայացքային կողմնորոշումներից, մշակույթի ու քաղաքակրթության մասին տեսական պատկերացումներից և օգտագործվող մեթոդաբանական գործիքակազմից: Հետազոտողների մեծ մա- սի կարծիքով՝ սկզբունքային տարբերություններ կան Միջնադարի և Վե- րածննդի միջև: Վերածնունդը հակադրելով Միջնադարին՝ այդ հետազոտող- ները, հետևելով իրենց ժամանակաշրջանը «ոսկեդար» անվանած իտալական հումանիստներին և եվրոպական լուսավորիչներին, միայն գերադրական հատկություններով են բնորոշում Վերածննդի դարաշրջանը: Լուսավորիչնե- րի ջանքերով հյուսված Միջնադարի՝ իբրև մարդկության պատմության մութ, ամուլ ժամանակահատվածի մասին դիցույթը տարածված էր նաև խորհրդա- յին մարքսիստական միջնադարագիտության մեջ: Հետազոտողներից ոմանք էլ մերժում են Միջնադարի և Վերածննդի սկզբունքային հակադրության գա- ղափարը և Վերածնունդը դիտում են որպես Միջնադարի «մայրամուտ», կամ ինչպես Ի. Հեյզինգան է բնորոշում՝ «Միջնադարի աշուն»: Նրանց կարծիքով՝ Վերածնունդը Միջնադարի մշակույթի քայքայման արդյունք է և ընդամենը անցումային շրջան է Միջնադարի ու Նոր ժամանակի միջև: Ուստի չպետք է հակադրել Միջնադարի և Վերածննդի մշակույթները, որովհետև դրանց միջև կապը եղել է անընդհատ: Մասնագետների մի խումբ էլ, տարբերություն տես- նելով **մշակույթի** (տվյալ դեպքում մշակույթը դիտվում է որպես արժեքների,

իդեալների համակարգ) և **քաղաքակրթության** (որը դիտվում է որպես սոցիալական ինստիտուտների ու տարբեր մեխանիզմների միջոցով արտադրության, գիտելիքի, մշակութային արժեքների, մարդկանց վարքագծի և այլնի կազմակերպման ու կարգավորման եղանակների ամբողջություն), կարծում է, որ Վերածննդի մշակույթը տեղավորվում է Միջնադարի քաղաքակրթության մեջ, որը տևել է ընդհուպ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Բնականաբար, այսպիսի տարըմբռնումների պայմաններում ամեն մի հետազոտող կարող է բավարար հիմքեր գտնել (մանավանդ հետարդիական հասարակության մեջ, երբ շատերն առաջնորդվում են «**Ամեն ինչ թույլատրելի է**» անիշխանական մեթոդաբանությամբ) իր տեսության/պատումի հիմնավորման կամ այս կամ այն մտածողի հայացքները բնութագրելու համար:

Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից իրավիճակն ավելի է խճճվում, երբ արևմտաեվրոպական Վերածննդից զատ, ընդունվում է նաև արևելյան Վերածննդի, այդ թվում՝ նաև Հայկական Վերածնության գոյությունը: Գրիգոր Նարեկացուն, որպես քրիստոնեական հումանիզմի ներկայացուցչի անդրադառնալու առիթն այն է, որ հետխորհրդային տարիներին շարունակվում են հրատարակվել գրքեր, հոդվածներ, ակնարկներ (դրանց մի մասը տարածվում է նաև համացանցում) և այլն, որոնցում բացահայտ կամ լռելյայն ընդունվում է «Հայկական Վերածննդի» գոյությունը, որը իբր նախորդել է եվրոպական Վերածնունդը: Եվ միանշանակ արվում է այն պնդումը, թե Գրիգոր Նարեկացին «Հայ վերածնության փիլիսոփայական մտքի գագաթնակետն» է, «Հայկական Վերածննդի առաջին ներկայացուցիչը» կամ «նախակարապետը»[1]: Մեջբերեմ տարածված այդ մոտեցումը ներկայացնող մի տեսակետ. «**Վերածննդի դարաշրջանը Հայաստանում եվրոպական Ռենեսանսից շատ ավելի վաղ է սկսվել: Վերածննդին հատուկ մարդասիրական գաղափարները Հայաստանում նորովի չեն «բացահայտվել», ինչպես Եվրոպայում, այլ բյուրեղացվել են քրիստոնեական սկզբունքներին համահունչ: Հայկական իրականության մեջ**

[1] Այդպիսի բնորոշումները տարածված էին խորհրդահայ հայագիտության, ի մասնավորի՝ գրականագիտության մեջ: Առհասարակ, արևելյան Վերածննդի տեսությունը մշակել են խորհրդային մտածողները՝ գրականագետները, փիլիսոփաները, մշակութաբանները, նախ՝ «հակահարված տալու» արևմտակենտրոն բուրժուական գաղափարախոսներին, որոնք թերագնահատում էին Արևելքի ժողովուրդների մշակութային ձեռքբերումները, երկրորդ՝ հիմնավորելու մարքսիստական պատմափիլիսոփայության այն դրույթը, որ մարդկության պատմության մեջ գործում են ընդհանուր օրենքներ, ըստ որոնց՝ տարբեր երկրներ ու քաղաքակրթություններ, իրենց առանձնահատկություններով հանդերձ, պետք է անցնեն զարգացման միևնույն պատմափուլերը: Այսինքն՝ եթե եվրոպական քաղաքակրթությունը ունեցել է Վերածննդի դարաշրջան, ապա այդպիսի մշակութային դարաշրջան «երկաթե անհրաժեշտությամբ» պետք է ունենան նաև մյուս քաղաքակրթությունները կամ մշակույթները: Եթե խորհրդային շրջանում նման մեթոդաբանական պատումի (նարատիվի) շրջանառումը հասկանալի էր, ապա անհասկանալի է, թե ինչու են այսօր հետազոտողները պաշտպանում պատմամշակութային նյութի վերակազմության այդ խիստ գաղափարականացված և անարդյունավետ մեթոդաբանական հարացույցը:

**դա նախաքրիստոնեական գաղափարների սահուն շարունակությունն էր, որոնք, էվոլյուցիայի ենթարկվելով ըստ նոր ուսմունքի, սկիզբ են տալիս նոր արվեստին ու աշխարհընկալմանը»: ...** Հայկական Վերածննդի **«առաջին շրջանը սկսվում է Գրիգոր Նարեկացու պոեզիայից, որն իր ստեղծագործություններում «հանդգնում է» յուրօրինակ երկխոսության Աստծո հետ»**[2] (ընդգծ. իմն են՝ Ս. Զ.): Այս երկարաշունչ մեջբերման բոլոր դատողությունները ոչ թե վիճահարույց են, այլ պարզապես չհիմնավորված հայտարարություններ-պնդումներ, որոնք, ըստ իս, չունեն առհասարակ որևէ աղերս միջնադարյան հոգևոր իրականության և մասնավորապես Գրիգոր Նարեկացու աշխարհայացքի հետ: Ստորև չեմ անդրադառնա «Հայկական Վերածնության» հետ կապված տարատեսակ հարցերին[3], այլ Նարեկացու աշխարհայացքի գնահատման համատեքստում նախ թռուցիկ կանդրադառնամ Վերածնունդը բնորոշող անտիկ արժեքների վերակենդանացման, այնուհետև՝ «քրիստոնեական կամ աստվածակենտրոն հումանիզմ» և «Վերածննդի կամ մարդակենտրոն հումանիզմ» հասկացությունների փոխառնչակցության հարցերին:

«Հայկական Վերածնունդ» արտահայտությունը[4] մեզանում գործածվում է տարբեր իմաստներով և տարբեր երևույթների գնահատման ժամանակ, և դրանց հետ կապված չի ծագում որևէ խնդիր մինչև այն պահը, երբ այն նույնացվում է եվրոպական Վերածննդի հետ, այսինքն՝ երբ արվում է պնդում, որ մեզանում եղել է եվրոպական Վերածննդին հանգույն Վերածնունդ: Եվ այդ նմանությունը հիմնավորելու համար հետազոտողները X-XIV դդ. հայ իրականության և մշակույթի մեջ փնտրում են եվրոպական Վերածննդի առաջացմանը նպաստած պատմամշակութային համանման նախադրյալներ և դրսևորումներ (կապիտալիստական արտադրաեղանակի սաղմնավորում, անտիկ արժեքների վերականգնում, աշխարհականացում, հումանիզմ, ռեֆորմացիա և այլն): Փնտրում են և բնականաբար գտնում ինչ-որ բաներ, սակայն դրանց հիմնավորումները ընդհանուր առմամբ բռնազբոսիկ են, իսկ եզրահանգումները՝ անհամոզիչ: Օրինակ՝ Վերածննդի դարաշրջանի հիմնային բնութագրիչներից մեկը անտիկ արժեքները վերածնելն ու վերակենդանացնելն է: Եվրոպայում, հատկապես Իտալիայում հումանիստները վերածնում էին իրենց անտիկ շրջանի հունահռոմեական մշակութային արժեքները, հետևաբար դա կարելի է անվանել իրենց ազգային ժառանգության Վերածնունդ: Իսկ ի՞նչ էին վերածնում կամ ի՞նչ կարող էին վերածնել X-XIV դդ. «Հայկական Վերածննդի» ներկայացուցիչները, երբ նրանք ամենայն հավանականությամբ պատկերացում չունեին կամ չէին կարող ունենալ հայոց անտիկ շրջանի մասին մի պարզ

---

[2] «Հայկական Վերածնունդ», http://www.panarmenian.net/arm/details/222911/ (մուտք՝ 18.07.2023):

[3] Այդ մասին մանրամասն տե՛ս **Զաքարյան Ս. Ա.**, Հայկական Վերածննդի հարցը (մեթոդաբանական տեսանկյուն), Եր., 2006:

[4] «Հայկական վերածնություն» արտահայտության ծագման ու գործածության մասին մանրամասն տե՛ս **Գասպարյան Դ.**, Հայկական Վերածնունդ (ժամանակը և առանձնահատկությունները) http://shirak.asj-oa.am/598/1/41.pdf (մուտք՝ 18.07.2023):

պատճառով, որովհետև ըստ երևույթին չկային պահպանված գիտական, փիլիսոփայական ու գրական-գեղարվեստական հայկական կամ հայալեզու հուշարձաններ: Գուցե նրանք վերածնո՞ւմ էին հունահռոմեական դարաշրջանի մշակութային այն արժեքները, որոնք համընդհանուր էին հելլենիստական մշակութային դաշտում գտնվող ազգերի համար: Դա կլիներ բնական մշակութային երևույթ, որովհետև հայոց քաղաքակրթության ու մշակույթի ակունքներից մեկը եղել է հունահռոմեական, հատկապես հելլենիստական մշակութային ժառանգությունը: Սակայն չկան փաստեր, որ X-XIV դդ. «Հայկական Վերածննդի» ներկայացուցիչները օգտվել են այդ ժառանգությունից (տարբեր մտածողների կողմից մի քանի անուն թվարկելը կամ առանձին ասույթներ մեջբերելը դեռևս չի նշանակում անտիկ արժեքների յուրացում[5]): Նրանք չեն վերածնել հունահռոմեական անտիկ գրականության, փիլիսոփայության, կերպարվեստի արժեքները, հետևաբար, եթե անգամ ընդունենք, որ X-XIV դդ. հայ իրականության մեջ անցյալի վերաիմաստավորման մշակութային ինչ-որ շարժման գոյության փաստը, ապա այն ոչ մի հիմքով չենք կարող անվանել **անտիկության** Վերածնունդ: Իսկ անտիկ այն արժեքները, որոնք վերածնվել կամ վերարտադրվել/մեկնաբանվել են, եղել են գաղափարական առումով «չեզոք» (հիմնականում՝ տրամաբանական ու քերականական երկեր), որոնք անհրաժեշտ էին մեկնարվեստի և տիրապետող կրոնական գաղափարախո-

---

[5] «Արևելյան Վերածննդի» այն տեսաբանները, ովքեր անտիկ արժեքները վերածնելու, վերակենդանացնելու և վերականգնելու գործընթացը միանշանակորեն կապում են Վերածննդի դարաշրջանի հետ, պարզապես «մոռանում» են նշելու դրա գոյությունը հասուն Միջնադարում, ի մասնավորի՝ սքոլաստիկայի Ոսկեդարում (XIII դ.): Այսինքն՝ եթե «արևելյան Վերածնության» տեսության կողմնակից հետազոտողը տեսնում է, որ միջնադարյան որևէ մտածող մեկնաբանում է անտիկ որևէ փիլիսոփայի կամ գրողի աշխատություն, ապա ինքնաբերաբար այդ մտածողին համարում է Վերածննդի դարաշրջանի ներկայացուցիչ: Մինչդեռ անտիկ արժեքներն սկսել են վերականգնել դեռևս Միջնադարում: XI դարից սկսած՝ Եվրոպայում, հատկապես համալսարանների հիմնադրումներից հետո, մեծանում է հետաքրքրությունը մշակութային ու գիտափիլիսոփայական անտիկ ժառանգության նկատմամբ: Թարգմանվում են Պլատոնի և Արիստոտելի երկերը, և դրանց վերաբերյալ գրվում են բազմաթիվ մեկնություններ, համալսարանական գիտնականները բանավեճեր են ծավալում գիտական ու փիլիսոփայական տարբեր հարցերի շուրջ: XIII դարի կեսերից եվրոպական համալսարաններում թույլատրվում է դասավանդել արիստոտելյան կորպուսի մեջ մտնող գրեթե բոլոր աշխատությունները: Վերջապես իտալացի հումանիստները վերածնում էին ինչպես հունական, այնպես էլ իրենց անտիկ ազգային արժեքներն ու ավանդույթները, ընդ որում դա սկսել էին անել արդեն հասուն Միջնադարում կամ Դուչենտոյի շրջանում: Ազգայնականությունը (ազգային արժեքներին նախապատվություն տալը կամ գերադասելը, անցյալի ազգային, գործնական ուղղվածություն ունեցող հռոմեական փիլիսոփայական ժառանգության (որում փիլիսոփայությունն առավելապես դիտվում է որպես կենսակերպ, ապրելու և երջանկության հասնելու արվեստ) և մշակութային-գեղարվեստական արժեքների փառաբանումը և այլն) այնքան տարածված մտայնություն էր, որ անգամ պոետ ու փիլիսոփա Դանտե Ալիգիերին երազում էր վերականգնել Հռոմեական կայսրությունը՝ կարծելով, որ ինչպես հնում, այնպես էլ յուր ժամանակում իտալացիները պետք է գերիշխեն ամբողջ աշխարհում:

սության սկզբունքների հիմնավորման համար: Այսպիսով, «Հայկական Վերածնունդ» արտահայտությունը, որը ենթադրում է եվրոպականի նման Վերածնունդ, այս առումով զուրկ է տեսական, պատմական ու մեթոդաբանական որևէ բովանդակությունից: Դա ծայրահեղ նոմինալիստների բառերով ասած՝ սոսկ անուն է, ձայնի սոսափյուն (flatus vocus), որին իրականության մեջ ոչինչ չի համապատասխանում: X-XIV դդ. Հայաստանում եղել է ոչ թե Վերածնունդ եվրոպական Վերածննդին հանգույն, այլ **մշակույթի վերելք, ծաղկում**, **մտածելակերպի** որոշակի **ձևափոխություններ**, սակայն՝ միջնադարյան մշակույթի համածիրում: Ինչ վերաբերում է Գրիգոր Նարեկացուն, ապա պետք է ասել, որ նա որևէ ձևով չի վերածնել անտիկ հեթանոսական ժառանգության արժեքները, չի մեկնել անտիկ փիլիսոփաներից ու բանաստեղծներից որևէ մեկի ստեղծագործությունը, գրեթե կամ ակնհայտորեն չի պաշտպանել (կիրառել, զարգացրել, տարածել) անտիկ գեղագիտության ու պոետիկայի սկզբունքները: Նարեկացու ստեղծագործությունների ակունքը Սուրբ Գիրքն է, վաղ միջնադարյան կրոնաաստվածաբանական և փիլիսոփայական գրականությունը, և ըստ այդմ նրա մտածումների առանցքում քրիստոնեական կրոնին (մարդաբանությանը) աղերսվող հարցերն են, ի մասնավորի՝ մարդու փրկության խնդիրը և դրա իրագործման ճանապարհները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արևելյան երկրներից շատերը չեն ունեցել մշակութային անտիկ շրջան կամ դրանից գրեթե ոչինչ չի պահպանվել, արևելյան Վերածննդի և Հայկական Վերածննդի տեսաբանները Վերածննդի գլխավոր հատկանիշ համարում են ոչ թե անտիկ արժեքների վերակենդանացումը, այլ **հումանիզմը**: Բնականաբար, նման դեպքում խիստ լղոզված է ներկայացվում «հումանիզմ» հասկացությունը, ավելի ստույգ՝ միջնադարյան հումանիզմը անտեսվում կամ տարրալուծվում է Վերածննդի հումանիզմի մեջ: Թեև «հումանիզմ» եզրույթը բազմիմաստ է, այնուհանդերձ ավելի հաճախ գործածվում է երկու իմաստով՝ ա) լայն իմաստով «հումանիզմ» նշանակում է մարդասիրություն, աշխարհայացքային, փիլիսոփայական մարդակենտրոն մի դիրքորոշում, որի կենտրոնում մարդն է ու մարդկությունն ամբողջությամբ վերցրած, հարգանքը մարդու իրավունքների և արժանապատվության հանդեպ, մարդկային ազատության ու իրավունքների ջատագովությունը, հանդուրժողականությունը և այլն: Այսպիսի ըմբռնման դեպքում հումանիզմի դրսևորումներ կարելի է տեսնել տարբեր դարաշրջանների, այդ թվում միջնադարի կրոնական մշակույթում: Ի մասնավորի՝ քրիստոնեական կրոնը խարսխված է հումանիստական գաղափարների վրա: բ) Վերածննդի դարաշրջանում ձևավորված հումանիզմ, որը, եթե նկատի ունենանք դարաշրջանի մշակույթի և փիլիսոփայության բնույթը, «մարդակենտրոն հումանիզմ» էր: Դրան բնորոշ էին անցումը աստվածային գիտություններից (studia divinitatis) մարդկային գիտությանը (studia humanitatis), հակասքոլաստիկությունը, անհատապաշտությունը, աշխարհականացումը (ապասրբազնացումը, կյանքի

տարբեր ոլորտների ազատագրումը եկեղեցու խնամակալությունից), հակաճգնավորական բարոյականությունը, բնության ուսումնասիրության համար գիտական նոր մեթոդների մշակումը, լայն իմաստով բանասիրական քննությունը՝ գիտական, գրական ու փիլիսոփայական անտիկ տեքստերի թարգմանությունն ու նորովի մեկնաբանությունը և այլն: Չմերժելով քրիստոնեական ուսմունքի սկզբունքները՝ մարդակենտրոն հումանիզմը «մարդու տեղը աշխարհում դիտարկում է ոչ թե մեղսագործության և փրկության տեսանկյունից, այլ որպես մարդու արժանապատվության հիմնախնդիր»[6]: Այս իմաստով խոսուն են Վերածննդի դարաշրջանի մտածողների աշխատությունների վերնագրերը՝ «**Մարդու արժանապատվության և գերազանցության մասին**» (Ջանոցո Մանետի), «**Ճառ մարդկային արժանապատվության մասին**» (Ջովանի Պիկո դելա Միրանդոլա) և այլն:

Հարկ է նշել, որ կանխակալ մոտեցումների պատճառով չափից դուրս մեծարվել է վերածնական հումանիզմը և գրեթե անտեսվել միջնադարյան քրիստոնեական (այդ թվում նաև՝ սքոլաստիկական)[7] հումանիզմը, թեև առանց վերջինիս անհնար է պատկերացնել վերածնական հումանիզմի առաջացումը: Պատահական չէ, որ մասնագիտական, հատկապես արևելյան Վերածննդին նվիրված գրականության մեջ հաճախ իրարից չեն տարբերում միջնադարյան աստվածակենտրոն ու վերածնական մարդակենտրոն հումանիզմները: Ավելի հաճախ, տվյալ դեպքում Հայկական Վերածննդին նվիրված հետազոտություններում միջնադարյան հումանիզմը ներկայացվում է որպես վերածնական հումանիզմ, այսինքն՝ դրանց միջև առկա որոշակի, հիմնականում ընդհանրական/վերացական (այսինքն՝ համատեքստից կտրված) նմանությունները հետազոտողներին խանգարում են ամրագրել էական տարբերությունները: Մակերեսային ու շփոթ առաջացնող գնահատականներից խուսափելու համար **նախ**՝ առնվազն պետք է իրարից զանազանել քրիստոնեական հումանիզմը վերածնական հումանիզմից՝ մատնացույց անելով դրանց նմանությունները և գործառութային տարբերությունները, դրանց միջև գոյություն ունեցող ժառանգական կապերը: **Երկրորդ**՝ հարկավոր է հստակ պատկերացում ունենալ միջնադարում՝ ջատագովական ու հայրաբանական և սքոլաստիկական

---

[6] **Горфункель А. Х.** Философия эпохи Возрождения. Учебное пособие. М., 1980, с. 46.

[7] Միջնադարում սքոլաստիկայի ի հայտ գալը նշանակում էր աստվածաբանության և փիլիսոփայության, հավատի և բանականության փոխհարաբերության նոր մակարդակ, աստվածաբանության փիլիսոփայականացման խորացում և փիլիսոփայական գիտելիքի գործառութային նոր կարգավիճակ, հայտնութենական ճշմարտությունների հիմնավորման ու մեկնաբանության ռացիոնալ ձև, իմացության սուբյեկտի գիտակցության մեջ յուրահատուկ հեղաշրջման սկիզբ: Եթե բանականության միջոցով հնարավոր է հիմնավորել Հայտնության ճշմարտությունները, ստեղծել «բանականացված հավատք», ապա նշանակում է, որ բանականությունը արժեքավոր գործիք է աստվածիմացության գործում, նշանակում է՝ մարդն իր կարողություններով ի վիճակի է հասկանալու աստվածային ճշմարտությունները: Այլ խոսքով՝ **սքոլաստիկան, բարձրացնելով փիլիսոփայության հեղինակությունը, միաժամանակ բարձրացնում է մարդու հեղինակությունը**:

շրջաններում, ստեղծված մարդաբանական բնույթի գրականության (օրինակ՝ Գրիգոր Նյուսացու, Նեմեսիոս Եմեսացու, Օգոստինոս Երանելու, Մաքսիմ Խոստովանողի, Սիմեոն Աստվածաբանի, Ֆրանցիսկոս Ասիզացու, Թովմա Աքվինացու, Ուիլյամ Օկկամի, Մայստեր Էկհարթի և այլոց երկերի) և ժամանակի ընթացքում քրիստոնեական մարդաբանական մտքի կերպափոխությունների մասին: Հարկ է նշել, որ թե՛ Արևելյան և թե՛ Հայկական Վերածննդի տեսաբաններն առհասարակ անտեսում են կրոնական, տվյալ դեպքում քրիստոնեական հումանիզմի գոյությունը և փորձում են վերածնական հումանիզմի տեսանկյունից գնահատել փաստորեն միջնադարյան մշակույթին պատկանող մտածողներին:

Արդ, քրիստոնեական հումանիզմը կամ «աստվածակենտրոն հումանիզմը» հումանիզմի դրսևորման պատմական տարատեսակներից է, որը միջնադարում անցել է զարգացման որոշակի փուլեր՝ կախված սոցիոմշակութային կյանքում տեղի ունեցած տեղաշարժերից ու մարդու մասին պատկերացումների կերպափոխություններից, և նախորդել է Վերածննդի դարաշրջանի հումանիզմին: Աստվածակենտրոն կամ քրիստոնեական հումանիզմի հիմնարար սկզբունքներից էին՝ **մարդու աստվածանմանությունը**[8] (Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով ու նմանությամբ), **մարդու անկրկնելիությունը** (Աստված յուրաքանչյուր մարդու շնորհում է անհատական հոգի), **կամքի ազատությունը** (անձնիշխանությունը) կամ ընտրության հնարավորությունը, **մարդասիրական բնույթի պատվիրանները, սերը որպես մարդկային հարաբերությունների կարգավորման սկզբունք, յուրայինների և ուրիշների, անգամ թշնամու նկատմամբ հանդուրժողական ու ներողամտական վերաբերմունքը**, **կյանքում աստվածային և մարդկային** (ինչպես նաև քրիստոնեությանը բնորոշ

---

[8] «Միջնադարյան պայմաններում,- գրում է Գ. Խրլոպյանը,- հումանիզմի ամենաուժեղ արտահայտության ձևերից մեկը մարդու աստվածացումն էր: Այդպիսով մարդը բարձրացվում էր ժամանակաշրջանում ընդունված գերագույն արժեքին, կատարելության: Մարդու աստվածացումը իրականացվում էր մարդու և աստծու միջև անմիջական հաղորդակցման, ինքնամաքրման, ինքնակատարելագործման ճանապարհով մարդու սրբացման հնարավորության ընդունմամբ և մարդու ու աստծու փոխադարձ պայմանավորվածության գաղափարով» (**Խրլոպյան Գ. Տ.**, Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն: Հելլենիստական և վաղ ֆեոդալական շրջան, Եր., 1978, էջ 189): Մարդու աստվածացման գաղափարին կարող ենք հանդիպել թե՛ անտիկ, թե՛ Միջնադարի և թե՛ Վերածննդի մշակույթներում, սակայն դրանք տարբերվում են իրենց գործառութային բովանդակությամբ և շեշտադրումներով: Եթե այդ տարբերություններն անտեսենք, ապա գրականագետ Վ. Նալբանդյանի նման կարող ենք անել Նարեկացու աշխարհայացքը բնորոշող հետևյալ եզրակացությունը. «Տարակույսից վեր է, որ մարդու փառաբանության, նրա վեհացման, կարելի է համարձակ ասել՝ մարդու աստվածացման մտայնության մեջ միանգամայն որոշակի կերպով արտացոլվել է հանճարեղ մտածողի ու քերթողի վերածնական հումանիզմի աշխարհայեցողությունը, որով Նարեկացին շատ բանով վեր է բարձրացել իր դարից, առաջ է անցել իր ժամանակից՝ մի քանի դարով կանխելով եվրոպական Վերածնության նշանավոր մտածողներին ու արվեստի հռչակված վարպետներին» (**Նալբանդյան Վ. Ս**. Գրիգոր Նարեկացի, Եր., 1990, էջ 142-143):

խոնարհության, ողորմության, զթասրտության, կարեկցանքի, համեստության, չափավորության, հնազանդության և այլն) **առաքինություններով** առաջնորդվելը: Քրիստոնեական մարդակենտրոնության ելակետային գաղափարն այն է, որ աստվածային արարչագործության գլուխգործոցը և պսակը Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդն է, որի համար էլ հենց արարվել է ամբողջ տիեզերքը: Աստված մարդուն պարգևել է սքանչելի հատկություններ և հմտություններ. «**Բարեզարդեցիր խոսելու ձիրքով, // Շունչ ներարկելով՝ փայլ տվեցիր ինձ, // Մտքով ճոխացրիր, աճեցրիր խելքով և իմաստությամբ, // Հանճարով օժտած՝ զատորոշեցիր շնչավորներից, // Համադրեցիր բանական ոգով, // Պճնեցիր գոլով անձնիշխանական**»[9]: Քրիստոնեական հումանիզմում մարդը ոչ թե տարրալուծված է տիեզերքի մեջ, ոչ թե տիեզերական-բնական էակ է, այլ առավելապես աստվածային ծագում ունեցող անձնիշխան ու բանական էակ, որը արարված տիեզերքում ունի բացառիկ կարգավիճակ: Մարդը թագավոր է, իսկ մյուս գոյերը՝ սպասավորներ, որոնք կոչված են ծառայելու ու սպասարկելու մարդուն: Մարդու աստվածանմանությունը, համադրական բնությունը (մարդը շաղկապում է գոյի բոլոր շերտերը, հոգու երեք՝ բուսական, կենդանական, բանական տեսակները, և երեք զորությունները՝ ցանկական, ցասմնական և բանական), ուղղահայաց կազմվածքը, իմացական միջոցները (զգայարաններ, բանականություն, հիշողություն, լեզու, երևակայություն), տեսական ու ստեղծագործական կարողությունները, կամքն ու գործնական հմտությունները (արհեստ/արվեստ), բանականության սկզբունքներով և բարոյական կանոններով ու առաքինություններով առաջնորդվելը վկայում են նրա ընտրյալ կարգավիճակի մասին: Քրիստոնեության մեջ մարդու արարման մասին պատկերացումը իմաստավորվում է փրկության վարդապետության համածիրում. մարդը արարված է այնպիսի բնությամբ, օժտված է այնպիսի հատկություններով ու կարողություններով, որ Աստծո Որդին մարդկային կերպարանքով կարողանա իրականացնել իր առաքելությունը: Քրիստոսը սրբացրեց մարդկային մարմինը և վերափոխեց մարդկային բնությունը: Աստծո մարդեղացումը շրջադարձային կետ է մարդկության կյանքում և լավատեսական բնույթի նոր հեռանկար է բացում նրա համար. **Աստված մարդեղացավ, որպեսզի մարդն աստվածանա**:

«Հայկական Վերածնության» տեսության կողմնակիցները Գրիգոր Նարեկացուն համարում են «Հայկական Վերածնության» հիմնադիրը, «Հայկական Վերածննդի ամենաառաջադեմ մտածողն ու գործիչը» և անգամ «Ռեֆորմացիայի խոշորագույն ներկայացուցիչը» այն բանի համար, որ նրա մտածումների առանցքում մարդն է[10]: Իսկ քանի որ մարդակենտրոնությունը և մարդասիրությունը (հումանիզմը) Վերածննդի մշակույթին բնորոշ հատկություններ են,

---

[9] **Գրիգոր Նարեկացի**, Մատյան ողբերգության: Տաղեր / թարգմանությունը Վ. Գևորգյանի, Եր., 1979, ԲԱՆ Ե, Բ:

[10] Տե՛ս, օրինակ, **Պողոսյան Ս.**, Իմ Նարեկացին, Եր., 2007, էջ 2-4:

ապա **նման տեսակետ պաշտպանողները կարծում են, թե հումանիզմը կամ մարդակենտրոն մտածելակերպը միայն Վերածննդի դարաշրջանի մենաշնորհն է: Փաստորեն նրանք ոչ միայն անտեսում են քրիստոնեական հումանիզմի գոյությունը կամ այդ հումանիզմը ներկայացնում որպես վերածնական, այլև մշակութային դարաշրջանները պատկերում են ուղղահայաց գծով՝ կարծելով, որ ժամանակային առումով «վերևում» գտնվողն ավելի առաջադիմական է «ներքևում» գտնվողների նկատմամբ**: Նրանց համոզմամբ՝ Վերածննդի ներկայացուցիչ լինելն ավելի է պատշաճում Նարեկացու հանճարին[11], ուստի նրանք հայ մտածողին դուրս են բերում Միջնադարի շրջանակներից՝ դրանով իսկ լրիվ անհասկանալի դարձնելով քրիստոնեական աշխարհի մեծագույն մտածողի, իիրավի «**Տիեզերական եկեղեցու վարդապետի»**[12] սխրանքը և նրա աշխարհայացքի, մարդաբանական-փիլիսոփայական մտածումների բովանդակությունը: «Գրիգոր Նարեկացին,- գրում է Ս. Պողոսյանը,- բարձրացնում է մարդու կյանքի իմաստի, նրա գոյության նպատակի մեծ հարցը (այս հարցադրումն ինքնըստինքյան միջնադարում հաստատված կրոնա-եկեղեցական ավանդույթների, դոգմաների դեմ ըմբոստության նշան էր)»[13]: Ինչ-որ իմաստով զարմանալի են նման կարգի դատողությունները, որովհետև «մարդու կյանքի իմաստի, նրա գոյության նպատակի մեծ հարցը» եղել և մնում է ոչ միայն փիլիսոփայության, այլև ցանկացած կրոնի, առավել ևս քրիստոնեության գլխավոր հիմնահարցը: Եկեղեցու առաքելությունը մարդու կեցության գերագույն նպատակի՝ փրկության նպաստումն է, անկախ այն բանից, թե ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով է փորձում դա իրականացնել, ի՞նչն է կարևոր համարում քրիստոնյայի կյանքում և այլն: Իսկ ինչպես ցույց է տալիս միջնադարյան փորձը, այդ միջոցներն ու մեթոդները բազմազան էին, երբեմն նաև՝ իրար հակադիր, որոնք իրենց դրսևորումներ են ստացել ինչպես կրոնական շարժումների, այնպես էլ աստվածաբանական-իմաստասիրական հարցերի քննարկման ընթացքում ձևավորված ուղղություններում կամ առանձին մտածողների ուսմունքներում: Բնականաբար, այդ ուղղությունների ու ուսմունքների մի մասը մարդու փրկությանն առնչվող որոշ հարցերի մեկնաբանության մեջ տարբերվում կամ հակադրվում էր եկեղեցու պաշտոնական դիրքորոշմանը: Իսկ եկեղեցին, սրբացնելով ավանդույթը և իրեն հռչակելով ավանդույթի պահապան ու հայտնութենական ճշմարտությունների միակ մեկնաբան, հարձակողական

---

[11] Ի դեպ, նման վերաբերմունքի են արժանացել միջնադարյան շատ մտածողներ: Օրինակ՝ արաբալեզու նշանավոր փիլիսոփա Իբն Ռուշդի (1126-1198) մասին կարդում ենք հետևյալը. «**Իբն Ռուշդը Վերածննդի դարաշրջանի մարդ էր եվրոպական Վերածննդից 300 տարի առաջ**» (http://islamsng.com/sng/faces/15705):

[12] 2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պատարագի ընթացքում Հռոմի Ֆրանցիսկոս պապը Գրիգոր Նարեկացուն շնորհեց «**Տիեզերական եկեղեցու վարդապետ**» տիտղոսը: Գրիգոր Նարեկացին Տիեզերական եկեղեցու 36-րդ վարդապետն է, երկրորդը՝ Արևելքից:

[13] Նույն տեղում, էջ 47:

ու անհանդուրժողական էր ավանդույթի սրբագրված ըմբռնման շրջանակներից դուրս եկող պարականոն մեկնությունների նկատմամբ: Այս երևույթը տեղավորվում է ոչ միայն կրոնական մտքի, այլև մշակույթի (փիլիսոփայության) զարգացման տրամաբանության մեջ. առհասարակ ճշմարտություն համարվածը, իրականության մեկնաբանման միօրինակությունը, մտքի ձևապաշտությունն ու կաղապարվածությունը, ծիսակարգից ու արարողակարգից բխող պարտադիր գործողությունների ուղեցույցը ձանձրացնում են մարդկանց: Եվ նրանք ուզում են ազատվել այդ տաղտկալի պատկերացումներից ու կարծրացած դիրքորոշումներից և այլ չափումներով տեսնել ու գնահատել ներքին ու արտաքին աշխարհը, նորովի իմաստավորել կյանքին արժեք տվող երևույթները և մարդու կեցությանը վերաբերող իրողությունները: Այլ խոսքով՝ միջնադարում եկեղեցին նույնպես ուներ որոշակի վերաբերմունք ու պատկերացում և կանոնացված ծիսակարգ մարդու վարքի, կյանքի իմաստի ու նպատակի մասին, սակայն այն հաճախ չէր բավարարում և չէր կարող բավարարել ոչ միայն ստեղծագործող անհատներին, այդ թվում՝ հավատքի մաքրությամբ մտահոգ հոգևորականներին, այլև պաշտոնական եկեղեցական գաղափարախոսության կամ դերազանց հոգևորականության դեմ տարբեր պատճառներով ըմբոստացող եզրաբնակ (լուսանցքային, աղանդավոր) կրոնական հոսանքներին ու խմբերին: Սակայն ինչպես միջնադարում աղանդավորական ընդվզումները դեռևս Ռեֆորմացիա չէին, թեև ուղղված էին եկեղեցու և հոգևորականության դեմ, այնպես էլ մարդաբանական բնույթի գաղափարների արծարծումները, որոնք տարբերվում էին եկեղեցական ուղղափառ ըմբռնումներից, դեռևս վերածնական հումանիզմի արտահայտություն չէին: Միջնադարյան մտածողները, չնչին բացառություններով, հոգևորականներ էին, որոնք իրենց կրթությունն ստացել էին եկեղեցու հսկողության տակ գտնվող վանքերում, բարձրագույն վարդապետարաններում և համալսարաններում, ի պաշտոնե հանդես էին գալիս աղանդավորական շարժումների դեմ և հիմնականում հանդես գալիս կրոնաաստվածաբանական բնույթի աշխատություններով: Մինչդեռ Վերածննդի դարաշրջանի եվրոպական մտածողները, հատկապես իտալական հումանիզմի ներկայացուցիչները, որոնք հիմնականում կրթություն ստացել էին աշխարհիկ դպրոցներում, «գիտնականներ էին առանց գիտական աստիճանների ու գիտելիքների, հպարտ իրենց նոր կրթությամբ, քաղաքային կոմունաների գործիչներ, հրապարակախոսներ, պոետներ, բանաստեղծներ, հռետորներ, դիվանագետներ, մանկավարժներ, նոր միջավայրի մարդիկ, որոնք որոշում են նոր փիլիսոփայության բնույթը»[14]: Իտալացի հումանիստները, գրում է Կ. Բուրդախը, ոչ թե հակված էին հավաքելու Հին աշխարհի ավերակները, ոչ թե ձգտում էին շունչ տալ մեռյալ քաղաքակրթությանը, այլ

---

[14] **Горфункель А. Х.** նշվ. աշխ., с. 31.

նոր նախագծի համաձայն՝ սկսել նոր շինարարություն, ստեղծել նոր աշխարհ՝ նոր Հռոմ և նոր Իտալիա[15] :

Որոշ հետազոտողներ եվրոպական մտածողների նկատմամբ Նարեկացու առավելությունը համարում են այն, որ նա, օրինակ, Դանտեից առաջ, ով «արտաքին մարդու» կերպարի նկարագրողներից է, իր ուշադրության կենտրոնը դարձրեց «ներքին մարդուն». «Եթե Դանտեն Վերածնության նախակարապետ հորջորջվեց այն պատճառով, որ Եվրոպայում առաջինը ստեղծագործության առարկա դարձրեց մարդուն, հիմնականում պատկերելով նրա արտաքին, մարմնական տառապանքները, ապա Նարեկացին, նրանից մոտ երեք դար առաջ, նրանից ավելի հեռուն գնալով՝ իր հայացքը սևեռեց մարդու ներքնաշխարհը»[16]: Անշուշտ կարելի է համեմատել տարբեր մտածողների հայացքները, սակայն պետք է նշել, որ հենց քրիստոնեության մենաշնորհին էին «**ներքին մարդու**» և մարդու ներաշխարհի նրբին շերտերի բացահայտումը, ինքնավերլուծությունների ու ինքնախոստովանությունների խրախուսումը: Քրիստոնեության «հերոսներից» մեկը արտաքին աշխարհից խուսափող, արտաքին աշխարհին արհամարհող «ներքին մարդն» էր, որը, ըստ Պողոս առաքյալի, պետք է տարբերվեր «հին», **«խաբեպատիր ցանկութիւններով»** ապականված (Եփես. 4:22) «արտաքին» մարդուց: Պատահական չէ, որ արդեն հայրաբանության շրջանում (IV-V դդ.) կրոնափիլիսոփայական մտքում ձևավորվում է խոստովանական ժանրը, որի լավագույն նմուշը արևմտյան եկեղեցու հայր սուրբ Օգոստինոս Երանելու «Խոստովանություններ» կոթողային երկն էր: «Ներքին մարդու» փիլիսոփայությունն ընկած էր առհասարակ Նարեկյան դպրոցի մտածողների, ի մասնավորի՝ Գրիգոր Նարեկացու աշխարհայացքի հիմքում. «Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները՝ իբրև միստիկ աստվածաբաններ, արտաքին պաշտամունքից՝ եկեղեցական ծեսերից, արարողակարգից, պահքից, արտաքին կենցաղավարության համընդհանուր նորմերից բացի, մեծ ուշադրություն էին դարձնում մարդու հոգևոր մաքրագործությանը, ինքնակատարելագործման տևական ընթացքին, ուր կենտրոնանում էին հոգեմտավոր, զգացմունքային-բանական, ինչպես նաև ստեղծագործական ունակություններն ու կարողությունները: Մաքրագործության կարևորագույն օղակը միստիկ հայեցողի հոգևոր վերառաքման շղթայի մեջ ներքին աղոթքն է, բանաստեղծությունը, հոգևոր երգը: **Ներքին մարդու աստվածացման** հղացքը, որը նորպլատոնական բարոյագիտական ուսմունքներից ներմուծվել էր քրիստոնեական միստիկ աստվածաբանության մեջ, ընկած է դպրոցի բարոյագիտության հիմքում: Այն Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների հոգևոր իդեալն է»[17]: «Ներքին մարդու» ուսմունքում մարդը կապ է հաստատում ոչ այնքան բնության կամ սոցիալական աշխարհի, որքան անդրանցական Աստծո հետ, ինչի

---

[15] Տե՛ս **Бурдах К.** Реформация. Ренессанс. Гуманизм. М., 2004, էջ 87-88:

[16] **Գրիգոր Նարեկացի,** Մատյան ողբերգության: Տաղեր, էջ 599:

[17] **Թամրազյան Հ.,** Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, հ. Գ, Եր., 2017, էջ 131:

հետևանքով հնարավոր է դառնում անմիջական «երկխոսության» մեջ մտնել Նրա հետ: Այդ «երկխոսության» կամ աղոթքի ընթացքում («ի խորոց սրտի խոսք առ Աստված») բացվում են մարդու ներաշխարհի դռները, ուրվագծվում նրա ներքին մտածումները, տագնապներն ու սպասումները, ընդլայնվում է նրա ինքնաճանաչողության շրջանակը՝ ինքնախոստովանության ու ինքնադատման, մեղանչման ու ապաշխարության, ինքնամաքրման ու ինքնակատարելագործման միջոցներով: Այս առումով աղոթող, Ահեղ Դատաստանին սպասող («Ի՞նչ, ի՛նչ երեսով պիտի հանդգնեմ // Ներկայանալ քո մեծ դատաստանին»[18]) և իր փրկության մասին մտահոգ մարդը տարբերվում է գործունյա, որոշ իմաստով արկածախնդիր, սահմանախախտ, ինքնահաստատման մարմանջով բռնկված Վերածննդի դարաշրջանի մարդուց: Եթե քրիստոնեական հումանիզմում մարդը, Ահեղ Դատաստանն աչքի տակ ունենալով, իմաստավորում է իր անցյալն ու ներկան և մտածում է ապագայի մասին, ապա Վերածննդի մարդակենտրոն հումանիզմում մարդը կենտրոնանում է իր գործունեության վրա, նոր, առավելապես աշխարհիկ չափանիշներով է իմաստավորում իր կեցությունը, փնտրում է իր ազատ ու անկախ վարքագծին համապատասխան բարոյական կանոններ և փորձում է ա՛յս աշխարհում և ա՛յս պահին բավարարել իր թե՛ բնական-մարմնական և թե՛ հոգևոր պահանջմունքները: Նա իրեն համարում է արարիչ Արարչից հետո («մահկանացու աստված»), որի առաքելությունն է ստեղծագործել, գործի մեջ դրսևորել իր ներուժն ու կարողությունները, ինքնակատարելագործմամբ ուժեղացնել իր անհատականությունը՝ դրանով իսկ նպաստելով նաև հասարակական առաջընթացին: Չմերժելով քրիստոնեական ուսմունքը, ի մասնավորի մեղքերի և փրկության մասին վարդապետությունը՝ մարդակենտրոն հումանիզմը մարդուն առնչվող հարցերը դիտարկում է ոչ թե մեղսագործության և փրկության, այլ մարդու ինքնահաստատման և արժանապատվության տեսանկյունից:

Ինչպես միջնադարյան բազում մտածողների, այնպես էլ Գրիգոր Նարեկացու քրիստոնեական հումանիզմի հիմքում ընկած է «**մեղսագործություն-փրկություն**» հարացույցը, ըստ որի՝ պատվիրազանցությունից հետո էլ մեղքերի մեջ թաղված և թաղվող մարդու կեցության նպատակն է Աստծո օգնությամբ հասնել փրկության՝ միավորվելով Նրա հետ: Որքան էլ ողբերգական լինի մարդու վիճակը, որքան էլ նա թաղված լինի «մահացու» մեղքերի մեջ, Նարեկացին համոզված է, որ «**հավատքի նոր շենք**» կառուցելով, Քրիստոսին նմանվելով (բայց այս դեպքում միայն «**անարյուն զոհաբերությամբ**»), մեղքերի խոստովանությամբ, ինքնախարազանումներով, անկեղծ մեղանչումներով, ի խորոց սրտի առ Աստված ուղղված աղոթքներով, ապաշխարությամբ և Աստծո օգնությամբ մարդը կարող է փրկվել: Մեղավորը կարող է փրկվել, հավատում է Նարեկացին, բայց դրան կարող է հասնել միայն Աստծո շնորհով և Նրա օգնությամբ: Մեղավոր

---

[18] **Գրիգոր Նարեկացի**, Մատյան ողբերգության: Տաղեր, Բան Ե, Ա, էջ 31:

մարդը «**կարող է հուսալ՝ հասնելու նորեն // Նախապարզկյալ փառազարդության. // Քանզի հենց Աստծո կամքով է մեր մեջ // Արծարծվում նաև կայծն այն ներգործող, // Որով արարչի ամենահնար // Կարողությունն է բարեհռչակվում**»[19]: Նարեկացին մարդու փրկությունը դիտարկում է որպես Արարչի և մարդու համագործակցության արդյունք. մարդը չի կարող փրկվել ինչպես առանց Աստծո օգնության, այնպես էլ առանց իր ցանկության և ջանքերի: Այսպիսի մոտեցումը վկայում է առ այն, որ Գրիգոր Նարեկացին իր մտածելակերպով, աշխարհայացքային-փիլիսոփայական հարցերի քննարկման ու լուծման եղանակներով, մարդու փրկության իր տեսլականով ոչ թե Վերածննդի, այլ միջնադարյան մտածող է, քրիստոնեական հումանիզմի խոշորագույն ներկայացուցիչ:

**СЕЙРАН ЗАКАРЯН** – ***Христианский гуманизм Григора Нарекаци.*** – В статье рассматривается вопрос, связанный с оценкой мировоззренческих и философских взглядов Григора Нарекаци (951-1003), величайшего поэта и философа Средневековья, и для его уточнения анализируются понятия Средневековье, Возрождение, Армянское Возрождение, христианский богоцентрический гуманизм и ренессансный человекоцентрический гуманизм. Некоторые исследователи, ссылаясь на книгу Нарекаци «Книги скорбных песнопений», его новаторские мысли и подходы, учение о «внутреннем» человеке и спасении человека, считают его представителем и предшественником Армянского Возрождения, то есть не мыслитель средневековья, а эпохи Возрождения. Если в советский период, когда господствовала марксистская методология, распространение такой оценки было понятно (теория Восточного и Армянского Возрождения была призвана обосновать положение марксистской философии истории о том, что в истории действуют с железной необходимостью универсальные закономерности, например, все народы должны пройти одни и те же стадии развития), то непонятно, почему сегодня исследователи защищают этот идеологизированный и неэффективный методологический нарратив. По мнению автора, такая оценка обусловлена тем, что исследователи: а/ по существу игнорируют различия между средневековой и ренессансной культурами, в результате явления, характерные для средневековой культуры, представляются как ренессансные, б/ игнорируют особенности христианского богоцентрического гуманизма и ренессансного человекоцентрического гуманизма, с/ Считая Нарекаци представителем армянского Возрождения, ему якобы дают оценку, соответствующую его гениальности (в данном случае предполагается, что эпоха Возрождения прогрессивна по сравнению с Средневековья). Между тем, Нарекаци, величайший представитель христианского гуманизма, поистине Учитель Вселенской Церкви — средневековый мыслитель с его видением спасения человека, со своим образом мышления, способами обсуждения и решения мировоззренчески-философских вопросов.

**Ключевые слова** – *Григор Нарекаци, Средневековье, Возрождение, Армянское Возрождение, гуманизм, Христианский Богоцентрический гуманизм и Ренессансный человекоцентричный гуманизм*

**SEYRAN ZAKARYAN** – ***The Christian Humanism of Gregor Narekatsi***.– The article discusses an issue related to the evaluation of the worldview and philosophical views of Grigor Narekatsi (951-1003), the greatest poet and philosopher of the Middle Ages, and to clarify it, the concepts of the Middle Ages, Renaissance, Armenian Renaissance, Christian God-centered humanism and Renaissance human-centered humanism are analyzed. Some researchers, referring to Narekatsi's

[19] Նույն տեղում, Բան ԺԱ, Ա, էջ 64:

book “The Book of Tragedy”, his innovative thoughts and approaches, the doctrine of the "inner" man and the salvation of man, consider him a representative of the Armenian Renaissance, a forerunner, that is, not a thinker of the Middle Ages, but of the Renaissance era. If in the Soviet period, when the Marxist methodology was in control, the circulation of such narrative was understandable (the theory of the Oriental and Armenian Renaissance was meant to justify the proposition of the Marxist philosophy of history that universal patterns operate with iron necessity in history, for example, all peoples must go through the same stages of development), then it is unclear why researchers today defend this highly ideological and ineffective methodological narrative. According to the author, such narrative is due to the fact that these researchers: a/ essentially ignore the differences between Medieval and Renaissance cultures, as a result of which the phenomena characteristic of medieval culture are presented as renaissance, b/ ignore the peculiarities of Christian God-centered humanism and Renaissance human-centered humanism, c/ Considering Narekatsu as a representative of the Armenian Renaissance, they allegedly give him an assessment corresponding to his genius (in this case it is assumed that the Renaissance era is progressive compared to the Middle Ages). Meanwhile, Narekatsi- the greatest representative of Christian humanism, truly a "Archimandrite of the Universal Church" is a medieval thinker with his vision of human salvation, with his way of thinking, ways of discussing and solving worldview-philosophical issues.

**Key words** – *Grigor Narekatsi, Middle Ages, Renaissance, Armenian Renaissance, humanism, God-centered humanism and human-centered humanism*

**Գրականության ցանկ**

Գասպարյան Դ., Հայկական Վերածնունդ (ժամանակը և առանձնահատկությունները) http://shirak.asj-oa.am/598/1/41.pdf (մուտք՝ 18.07.2023): (Gasparyan D., Haykakan Veratsnund (zhamanaky yev arrandznahatkut’yunnery) http://shirak.asj-oa.am/598/1/41.pdf (mutk: 18.07.2023)).

Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության: Տաղեր / թարգմանությունը Վ. Գևորգյանի, Եր., 1979: (Grigor Narekats’i, Matyan voghbergut’yan. Tagher / targmautyuny V. Gevorgyani, Yer., 1979).

Զաքարյան Ս. Ա., Հայկական Վերածննդի հարցը (մեթոդաբանական տեսանկյուն), Եր., 2006: (Zak’aryan S. A., Haykakan Veratsnndi harts’y (met’vodabanakan tesankyun), Yer., 2006).

Թամրազյան Հ., Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, հ. Գ, Եր., 2017: (T’amrazyan H., Grigor Narekats’in yev Narekyan dprots’y, h. G, Yer., 2017).

Խրլոպյան Գ. Տ., Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն: Հելլենիստական և վաղ ֆեոդալական շրջան, Եր., 1978: (Khrlopyan G. T., Hay sots’ialakan imastasirut’yan patmut’yun. Hellenistakan yev vagh feodalakan shrjan, Yer., 1978).

«Հայկական Վերածնունդ», http://www.panarmenian.net/arm/details/222911/ (մուտք՝ 18.07.2023): («Haykakan Veratsnund», http://www.panarmenian.net/arm/details/222911/ (mutk: 18.07.2023).

Նալբանդյան Վ. Ս., Գրիգոր Նարեկացի, Եր., 1990: (Nalbandyan V. S. Grigor Narekats’i, Yer., 1990).

Պողոսյան Ս., Իմ Նարեկացին, Եր., 2007: (Poghosyan S., Im Narekats’in, Yer., 2007).

Бурдах К. Реформация. Ренессанс. Гуманизм. М., 2004. (Burdah K. Reformaciâ. Renessans. Gumanizm. M., 2004).

Горфункель А.Х. Философия эпохи Возрождения. Учебное пособие. М., 1980. (Gorfunkel′ A.H. Filosofiâ épohi Vozroždeniâ. Učebnoe posobie. M., 1980).

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 2(47), հունիս, 20-36
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.2.020

# ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԱՌԵՂԾՎԱԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

ՍԻԼՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Ինչպես հայտնի է, արդի գիտական վերակազմության հետևանքով կասկածի տակ է դրվել հայոց գրավոր ավանդույթը Դավիթ Անհաղթի մասին, և նրան հինգերորդ դարից տեղափոխել են վեցերորդ դարի երկրորդ կես: Հոդվածում քննվում է Դավիթ Անհաղթի ժամանակի վերակազմության հարցը, և միջնադարյան տեքստերում առկա հիշատակումների հիման վրա փորձ է արվում հիմնավորել Դավթի մասին հայոց միջնադարյան գրավոր ավանդույթի դեռևս հերքված չլինելը: Ցույց է տրվում, որ եթե Դավթին հինգերորդ դարում տեսնելու համար այսպես կոչված «ապացուցական» հիմքեր չկան, ապա դրանք չկան նաև Դավթին հինգերորդ դարից հեռացնող նոր վերակազմություններում: Մասնավորաբար, քննվում են Միսաք Խոստիկյանի «Դավիթ փիլիսոփան» երկում առաջադրված որոշ փաստարկներ, ու տրվում դրանց հերքումները, կամ նվազագույնը՝ ցույց տրվում դրանց բավարար հիմքեր չունենալը: Ուշ անտիկ կամ վաղ միջնադարի հոգեմտավոր մշակույթի ավելի հստակ ընկալման համար կիրառվում է համաբանության (անալոգիա) մեթոդը: Զուգահեռներ են տարվում ժամանակի այլ մտածողներ Պարույր Հայկազնի և Բոեցիուսի հետ՝ ցույց տալու համար վաղքրիստոնեական մշակույթի սերտ կապը անտիկ հունահռոմեական փիլիսոփայական ավանդույթի հետ: Դա հնարավորություն է տալիս հերքելու գիտապաշտական մոտեցում հանդես բերող հետազոտողների այն պնդումները, ըստ որոնց պետք է բացառել, որ Դավիթը կարող էր քրիստոնյա լինել, բայց և միաժամանակ փիլիսոփայական դպրոցի առաջին տարվա ուսանողներին հելլենիստական նյութ մատուցել:
Հոդվածում ենթադրություն է արվում, որ մեծ հավանականությամբ Եղիշեի հիշատակած Դավիթ երեցը կարող էր լինել նույն Դավիթ փիլիսոփան, որին որոշ ժամանակից ի վեր հայոց գրավոր ավանդության մեջ անվանել են «Անհաղթ»: Նաև ցույց է տրվում, որ հինգերորդ դարից մեզ հասած որոշ տեքստերում կան Դավիթ անունով անձանց հիշատակումներ, և չպետք է բացառել, որ դրանք կամ դրանց մի մասը կարող են վերաբերել հենց Դավիթ Անհաղթին:

* **Սիլվա Պետրոսյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ
**Silva Petrosyan** – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at YSU Chair of History and Theory of Philosophy and Logic
**Сильва Петросян** – кандидат философских наук, доцент кафедры истории и теории философии и логики ЕГУ
Էլ. փոստ՝ silva.petrosyan@ysu.am https://orcid.org/0000-0002-7567-6887

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.04.2025
Գրախոսվել է՝ 05.05.2025
Հաստատվել է՝ 24.06.2025
© The Author(s) 2025

***Բանալի բառեր*** - *ուսյալների ավանդույթ, Ստեփանոս Սյունեցի, Փոտ պատրիարք, Ղազար Փարպեցի, Միսաք Խոստիկյան, վերակազմություն, Սուրբ թարգմանիչներ*

Դավիթ Անհաղթին հայ գրավոր ավանդույթը համարել է հինգերորդ դարի գործիչ, սակայն տասնիններորդ դարավերջից և մանավանդ քսաներորդ դարասկզբին այդ փաստը կասկածի տակ է դրվել, ու ներկայումս Դավթին համարում են վեցերորդ դարի հեղինակ[1]: Գիտական այս նոր ավանդույթը ձևավորվել է հիմնականում տեքստաբանական հետազոտությունների հիման վրա, որոնցից մեկը Միսաք Խոստիկյանի՝ 1907 թ. լույս տեսած «Դավիթ փիլիսոփան» աշխատությունն է, որի թարգմանությունը հայերեն և հրատարակումը քննական ապարատով հետազոտական մեծածավալ աշխատանքի արդյունք են, և միանշանակորեն պետք է դրական գնահատել[2]: Իրոք, այն նախորդ դարասկզբին «ուրիշի» հետ հարաբերվող հայ հասարակագիտական մտքի արգասիքներից մեկի ներկայացումն է հայ ընթերցողին և ունի ճանաչողական ու աշխարհայացքային մեծ նշանակություն: Այդ աշխատանքի շնորհիվ հայախոս լսարանին հասանելի է դառնում Միսաք Խոստիկյանի՝ 1907 թ. մայիսի 17-ին գերմաներենով պաշտպանած ավարտաճառի բովանդակությունը: Ավարտաճառում երիտասարդ հետազոտողը հանգել է այն եզրակացությանը, որ նորպլատոնական փիլիսոփա Դավիթը և հայ նույնանուն իմաստասերը չեն կարող նույն մարդը լինել. «Մենք ապացուցեցինք հնուց եկած այն ենթադրության անհիմն լինելը, որ փիլիսոփա Դավիթը Սահակի և Մեսրոպի աշակերտն է, որ Կոստանդնուպոլսում աստվածաբանական բանավեճերի մեջ է մտել, և որ հայ գրականության մեջ թողել է աստվածաբանական գործեր (այս ամենի նպատակն էր բացառել բոլոր կասկածներն առ այն, որ Դավիթը քրիստոնեական կրոնի հետևորդ է), և ցույց տվինք, որ աստվածաբան Դավիթը փիլիսոփայի հետ ընդհանուր ոչինչ չունի»[3]: Արդիությանը բնորոշ գիտապաշտական լավատեսությամբ երիտասարդ հետազոտողը պնդում է, որ «ապացուցել է» վերոբերյալ դրույթները: Խոստիկյանը պնդում է. «Մենք պետք է մշտապես աչքի առաջ ունենանք, որ այս ավանդույթն [ուսյալների ավանդույթը-Ս.Պ.][4] առաջացել է միայն տասներորդ և հետագա դարերում: Հինգերորդ դարից, երբ ենթադրաբար ապրել է մեր փիլիսոփան, մինչև տասներորդ դար ավանդված չէ ոչ մի տեղեկություն, բացի Ստեփանոս Սյունեցու հիշատակումից»[5]: Նման ընդհան-

---

[1] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Պետրոսյան Ս. Ս.**, Դավիթ Անհաղթի հոգու խնամքի իմաստասիրությունը և արդիականությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2017, էջ 21-141:

[2] Տե՛ս **Խոստիկյան Մ.**, Դավիթ փիլիսոփան, Ներքին գրոց մատենաշար, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտ, Եր., 2020:

[3] Նույն տեղում, էջ 141:

[4] Խոստիկյանն այն անվանում է ուսյալների ավանդույթ, ըստ որի՝ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն ընտրել են աշակերտներ և ուղարկել ժամանակի գիտակրթական կենտրոններում ուսանելու, որոնց մեջ են եղել նաև Դավիթ Անհաղթն ու Մովսես Խորենացին:

[5] **Խոստիկյան Մ.**, Դավիթ փիլիսոփան, էջ 49:

բացնող պնդումներ անելու համար քննադատական մտածողության պարագայում լրիվ ինդուկցիայի օրենքներով պետք էր բոլոր տեքստերին ծանոթ լինել ու բացառել դրանցում ույալների մասին հիշատակումների առկայությունը: Հայտնի է, որ, բացի Ստեփանոս Սյունեցուց, որի հիշատակմանը քիչ անց հատուկ կանդրադառնանք, Դավթի մասին տեղեկույթ կա Գյուտ կաթողիկոսի հետ նամակագրության մասին գրույթում[6], Պատրիարք Փոտի՝ հայերին գրած նամակում[7], Եղիշեի պատմական գլխավոր երկի առաջաբանում[8], Հարցմունքում[9]: Քանի որ Դավթին առաջին հազարամյակի տեքստերում «Անհաղթ» պատվանունն ըստ երևույթին դեռ չէր տրվում, ընթերցողը կարող է անգամ չպատկերացնել, որ այս կամ այն աղբյուրում նշված Դավիթը կարող է լինել արդի գիտության մեջ ընդունված Դավիթ Անհաղթը[10]: Այժմ վերլուծենք Խոստիկյանի պնդումներն ույալների ավանդույթի մասին: Ներկայացնելով ձեռագրերում առկա տեղեկույթը Դավթի վերաբերյալ, մասնավորաբար՝ Ստեփանոս Ասողիկի բերած տվյալները՝ Խոստիկյանը գրում է. «Այդ հաղորդման արժանահավատությունը սաստիկ խախուտ է արդեն իսկ այն նկատառումով, որ Դավիթն այստեղ սերտ կապի մեջ է դրվում այնպիսի կասկածելի անձնավորության հետ, ինչպիսին Մովսես Խորենացին է»[11]: Այնուհետև նա պնդում է, որ հայ գրականության լավագույն գիտակները Մովսեսին դասել են ութերորդ

[6] Տե՛ս Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամին 1833, էջ 101-102:

[7] Տե՛ս **Ակինեան Հ. Ն.,** Թուղթ Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց Մեծաց // Հանդէս Ամսօրեայ, 1968, Ապրիլ-Հունիս, թիվ 4, էջ 139:

[8] Տե՛ս Եղիշէի Վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին եւ քննադատութիւնք Միքայել Փաշայի Փորթուգալ, Վենետիկ, ի տպ. Ս. Ղազարու, 1903:

[9] Տե՛ս Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն, Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԲ դար, Երևան, 2014, էջ 660-740:

[10] Հետաքրքրաշարժ օրինակ. «Մատենագիրք հայոց» շարքում վեցերորդ դարի աղբյուրներին նվիրված հատորում տեղ է գտել անանուն հեղինակի մի տեքստ, որում հիշատակվում է Դավիթ միայնակյացը, որին աշակերտել է ոմն Կիրակոս, որն իր տեսիլքում հայտնված «այր մի սքանչելի երեսաւք» նմանեցնում է «վարդապետին իմոյ Դաւթի» (տե՛ս Թաղէոսի առաքելոյ եւ Սամուելի եւ Իսրայելի եւ այլոց որ բազում ժամանակս կային ծածկեալ եւ էին ամբողջ. եւ հայտնեցան առ ուրումն ճգնաւորի եւ սքանչելատեսի որ ի մանկութեան վարժեալ էր արժանաւոր կարգաւք Կիւրակոս անուն, Մատենագիրք հայոց, Գ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 19): Ձեռագրի հետազոտողները կասկած են ունեցել, թե արդյոք հիշատակված Դավիթը նույն Անհաղթն է. «Կամ յառաջաբան պատմութեանս պակասէ, կամ երկայն պատմութենէ մասն հանեալ է: Ոչ է մեզ յայտ ո՞վ իցէ Կիրակոսդ եւ ո՞վ Դաւիթդ, Անյաղթն արդեօք թէ այլ ոք. եւ ոչ քաջ ստոյգ ժամանակ գիտի նշխարացս» (նույն տեղում, էջ 19, տողատակի ծանոթագրություն 6): Նաև դիտելի է, որ տեքստի վերջում նշվում է նշխարքների գյուտի ժամանակը՝ Հովհան Մանդակունու կաթողիկոսության և Վահան Մամիկոնյանի մարզպանության ու սպարապետության օրոք: Այսինքն՝ հինգերորդ դարի երկրորդ կեսին: Ինչ խոսք, հիշատակվողը կարող է լինել այլ Դավիթ, բայց աշակերտի հիացմունքն իր վարդապետի սքանչելի տեսքից հուշում է, որ Դավիթ միայնակյացը բացառիկ մեկն է եղել: Եվ շատ մեծ հավանականությամբ կարող էր լինել հենց Անհաղթը:

[11] **Խոստիկյան Մ.,** Դավիթ փիլիսոփան, էջ 51:

դարին, և որ «Պատմութիւն հայոց»-ը բոլոր դեպքերում ստեղծվել է 680 թվականից հետո: Այս ամենից հետո Խոստիկյանը հետաքրքիր, բայց անընդունելի պատմական վերակազմություն է անում՝ դիմելով հետագա դարերի հայ մատենագիրների հոգեբանությանը, իբր, նրանք վաղ դարերի բոլոր հայ մատենագիրներին դնում էին Մովսես Խորենացու հետ ֆիզիկական կամ հոգևոր որևէ կապի մեջ[12]: «Նշված պատմաերկի ազդեցությամբ է, որ այդ շրջանում (X-XII դարերում) ձևավորվեց ուսյալների ավանդությունը: Սահակը, Մեսրոպը և Մովսեսը կանգնած են այդ ավանդության կենտրոնում, և նրանց շուրջ են հավաքվում ոչ միայն հինգերորդ, այլև վեցերորդ դարի հայ մատենագիրները: … Յուրաքանչյուր լավորակ գրական նվաճում առանց այլևայլության պիտի ստեղծված լիներ Սահակի և Մեսրոպի դպրոցում, այսինքն՝ հինգերորդ դարում»[13],- եզրակացնում է Խոստիկյանն ու համարում, որ Դավթի մասին այն տեղեկույթը, որ նա եղել է Մովսեսի կա՛մ աշակերտը, կա՛մ ազգականը, «ուռճացված մի ստեղծաբանության» արդյունք է: «Հետաքրքիր է տեսնել թե ինչպես է այդ սաղմերից կազմավորվել մի ամբողջ դյուցազներգություն»,- հավելում է նա: Որպեսզի ցույց տանք, որ Խոստիկյանի ասած «ուսյալների ավանդույթը» տասներորդ դարից հետո չի առաջացել, դիմենք ութերորդ դարում ապրած հայ իմաստասեր և կաթողիկոս Հովհան Օձնեցու գրվածքներին: Երևութականների քննադատությանն ուղղված երկերից մեկում նա գրում է. «Եւ կամ զորս ի մէնջից աստի Հոգին Սուրբ զարթոյց՝ լինել զկնի առաջնոյն լուսաւորիչք. զերկուսին զնոսա ասեմ սուրբս՝ զՍահակ եւ զՄաշդոց, եւ զամենեսին զընտրեալսն զարբանեակս նոցուն եւ զործակիցս, զԵզնիկ եւ զայլսն, եւ կամ որ ըստ նոցանէ, եւ ոչ հեռի ի նոցանէ՝ զմեծն իմաստասիրաց եւ զհռչակեալն ընդ տիեզերս զՏէր Մովսէս. որք էին միանգամայն արուեստաւորք թարգմանիչք եւ ուղղափառք»[14]: Բերված հատվածից պարզ է, որ Օձնեցին, Մովսես Խորենացուն համարելով մեծագույն իմաստասեր, նրան համարում է նաև «**ոչ հեռի**» Սահակից և Մաշտոցից, այլ մեկը նրանցից, ինչը ցույց է տալիս, որ Մովսեսը ապրել է հինգերորդ դարում և եղել թարգմանչաց դպրոցի ներկայացուցիչ: Իսկ «**զհռչակեալն ընդ տիեզերս**» արտահայտությունն անուղղակիորեն ցույց է տալիս, որ Մովսեսը Հայաստանից դուրս՝ քրիստոնեության տիեզերական կենտրոններում, մասնակցել է դավանաբանական-իմաստասիրական բանավեճերի, այլապես ի՞նչ ձևով պետք է «ընդ տիեզերս» հռչակվեր: Օձնեցին այս ամենն ասում է հրնթացս՝ նպատակ չունենալով հատուկ փաստարկելու Մովսեսի ժամանակաշրջանի մասին: Բայց նրա տեքստում առկա այս դրույթը հնարավորություն է տալիս հերքելու Խոստիկյանի այն պնդումը, որ ուսյալների մասին ավանդույթը ստեղծվել է տասներորդ դարից հետո:

---

[12] Տե՛ս նույն տեղը:

[13] Նույն տեղում, էջ 53:

[14] **Յովհան Աւձնեցի**, Նորին ընդդէմ երեւութականաց, Մատենագիրք հայոց, Է. հատոր, Ը. դար, 2007, Անթիլիաս-Լիբանան, էջ 57:

Այդ պնդումը հերքող մյուս կռվանը պատրիարք Փոտի նամակագրությունն է հայերի հետ, որտեղ նա հիշատակում է հայոց Դավիթ փիլիսոփային[15]: Հայոց Զաքարիա կաթողիկոսին գրած իր նամակում, որն առայժմ հայտնի է միայն հայերեն տարբերակով, Բյուզանդիայի պատրիարքը, ձգտելով հիմնավորել Քրիստոսի երկու բնությունների մասին ուսմունքը, գրում է. «Դաւիթ Հայոց փիլիսոփայ ասէ, թէ «Զի՞նչ է բնութիւն: Անուն պարզացեալ եւ սփռեալ. այսպիսի ինչ. յորժամ ասես մարդ, իմացար զնա կենդանի, բանաւոր, մահկանացու. եւ յորժամ ասես «Բանաւոր, կենդանի, մահկանացու», իմացար զնա մարդ»»[16]: Ցավոք, նամակի հունարեն բնօրինակը չի պահպանվել[17]: Գուցե այն ոչնչացվել է հետագայում, երբ արդեն պարզ էր, որ Փոտի ջանքերը հաջողությամբ չեն պսակվել, կամ գուցե ի սկզբանե այն մտահղացվել էր հայերեն[18]: Բայց պատահական չպետք է համարել Փոտի կողմից Դավթին հիշատակելը հենց քրիստոսաբանական բանավեճերի համատեքստում: Փոտին, ըստ ամենայնի, հայտնի էր Դավթի մասնակցությունը նման քննարկումներին: Եվ եթե Փոտի նամակը կարող է պարունակել ժամանակագրական սխալներ, ապա գուցե ավելի մեղմ

---

[15] Հայտնում եմ երախտագիտությունս պրոֆեսոր Ս. Զաքարյանին, ով տարիներ առաջ իմ ուշադրությունն է հրավիրել այդ հիշատակմանը: Փոտը բյուզանդական եկեղեցու սուրբ հայրերից է, ապրել է իններորդ դարում, եղել Կոստանդնուպոլսի պատրիարքը 858-867 և 877-886 թվականներին: Նա փորձել է Հայոց եկեղեցին հաշտեցնել բյուզանդականի հետ, սակայն, հաջողության չի հասել: Տե՛ս **Greenwood T.,** Failure of a Mission? Photius and the Armenian Church. // Le Museon, 2006, 119, 1-2, էջ 123-168. doi:10.2143/MUS.119.1.2011771

[16] **Ակինեան Հ. Ն.,** նշվ. աշխ., էջ 139:

[17] Պահպանվել են հայոց հետ նամակագրության այլ օրինակներ, բայց հենց այս նամակը, որում հիշատակվում է Դավիթը, հունարենով չի պահպանվել: Հայաստանցիների հետ Փոտի նամակագրության մասին տե՛ս **Dorfman-Lazarev I.,** Armeniens et Byzantins A L'epochue De Photius: Deux Debates Theologiques Apres le Triomphe de L'Ortodoxie, Lovanii, in Aedibus Peeters, 2004:

[18] Չմոռանանք, որ Փոտի երակներում հոսում էր հայկական արյուն, և շատ հնարավոր էր, որ նա տիրապետեր նաև հայոց լեզվին կամ ունենար հայազգի օգնականներ: "Photius, who had Armenian blood in his veins, included Armenia in his plans for Byzantine expansion as can be judged from his embassies and letters"- գրում է Ֆրենսիս Դվորնիկը (տե՛ս **Dvornik F.,** Patriarch Photius, Scholar and Statesman // Dvornik F., Photian and Byzantine Ecclesiastical Studies, Variorum Reprints, London, 1974, VII, էջ 15): Մեկ այլ հոդվածում նա գրում է. «Փոտի ջանքերը՝ հայերին դեպի ուղղափառություն դարձի բերելուն ուղղված, ավելի հայտնի կդառնան, երբ հրատարակվեն նրա՝ հայերին ուղղված նամակները, որոնք վերջերս հայտնաբերվել են Ժ. Դարուզեսի կողմից Աթենքում» (նույն տեղում, VI, էջ 53): Սակայն կա ավելի կարևոր խնդիր. մի շարք ուսումնասիրողներ կասկածի տակ են դրել նամակի իսկությունը՝ ելնելով դրանում առկա ժամանակագրական սխալներից ու հայամետ որոշ ձևակերպումներից (տե՛ս **Greenwood T.,** նշվ. աշխ, էջ 127): Բայց ժամանակակից հետազոտող Գրինվուդին հաջողվել է գտնել համոզիչ կռվան այն հանգամանքի օգտին, որ նամակը կարող էր շարադրված լինել միայն Փոտի կողմից, քանի որ տեքստում օգտագործվել են Եփրայիմ Անտիոքացու և Եվլոգիոս Ալեքսանդրիացու այն տեքստերը, որոնք պահպանվել են Փոտի հանրահայտ գրադարանում, բայց կարող էին հասանելի չլինել այն ժամանակվա հայաստանցիներին: Գրինվուդը գրում է. «Իմ ներկայացրած փաստաթղթում այս բազմաթիվ հղումները ապացուցում են, որ նամակի հեղինակը մուտք է ունեցել Գրադարան, և ամենալավ հնարավորությունը ունեցող անձը նամակի ենթադրյալ հեղինակը ինքն է՝ Փոտը» (տե՛ս **Greenwood T.,** նշվ. աշխ., էջ 140):

նայենք այն տեքստին, որը նույնպես Դավթի մասին տվյալներ է պարունակում, սակայն մի կողմ է դրվել գիտնականների կողմից ժամանակագրական վրիպակների պատճառով: Խոսքը «Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն»[19] գրվածքի (այսուհետև՝ «Հարցմունք») մասին է, որի գրության ժամանակը դեռևս ստույգապես հայտնի չէ[20]: Գրվածքը Խոստիկյանը խստագույնս քննադատում ու առասպելապատում է համարում այնտեղ առկա որոշ անախրոնիզմների պատճառով: Խոստիկյանը և որոշ այլ հետազոտողներ հակվել են այն կարծիքին, որ դա առավելապես ավանդազրույց է, որում նկարագրված իրողությունները չեն ապացուցվում այլ աղբյուրների տվյալներով[21]: Խոստիկյանը չի զլանում տալ արժեքային գնահատականներ և քննարկվող հարցուպատասխանն անվանում է «բավական ձանձրալի բանավեճ»[22]: Բայց հենց այդ գնահատականն էլ կարող է ցուցանել, որ գործ ունենք ոչ թե գեղարվեստական երկի կամ փիլիսոփայական տրակտատի հետ, այլ պարզապես իրականում տեղի ունեցած բանավեճի արձանագրության: Եվ տեքստի՝ արձանագրություն լինելու հանգամանքը կարող է արդարացնել այնտեղ նույն կամ նմանատիպ հարցերի հաճախակի հանդիպող կրկնությունները: Եթե ենթադրենք, որ քննարկվող երկի ամենաhին շերտը բուն բանավեճի արձանագրությունն է, որը հունարենից թարգմանվել է բանավեճից նվազագույնը հարյուր տարի անց Հովհաննես Գաբեղենացի կաթողիկոսի հրահանգով, ապա հասկանալի կլինի, որ նրան նախորդող տեքստում, որը գրվել է թարգմանվելուց հետո, կարող էին տեղ գտնել ժամանակագրական անճշտություններ:

Ինչ վերաբերում է բանավեճին, պատմական սկզբնաղբյուրներից մեկում՝ Եվնապիոսի «Փիլիսոփաների և սոփեստների կենսագրությունները» երկում, նկարագրվում է բանավեճն արձանագրելու մի ուշագրավ պահ: Աթենքի փիլիսոփայական դպրոցի ղեկավար, չորրորդ դարի հայ իմաստասեր Պրոյերեսիոսի՝ Պարույր Հայկազնի մասին պատումում նրա աշակերտ Եվնապիոսը նկարագրում է մի իրադրություն, երբ իր թշնամիների բանսարկության հետևանքով Աթենքից աքսորվելուց հետո Պրոյերեսիոսը կարողանում է վերադառնալ և պրոկոնսուլի ներկայությամբ բանավեճ անցկացնել իր հակառակորդների հետ[23]: Առաջին բանը, որ Պրոյերեսիոսը խնդրում է պրոկոնսուլին, իրեն երկու այնպիսի սղագրող տրամադրելն է, որոնք ամեն օր սղագրում են Թեմիսի խոսքերը, իմա՝ արդարացիորեն և անաչառ են գրառում: Պրոկոնսուլը բավարա-

---

[19] Տե՛ս Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԲ դար, Երևան, 2014, էջ 660-740:

[20] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Մուրադեան Գ.**, Դաւիթ Անյաղթին վերագրուած եւ նրա անուանն առնչուող գրուածքներ, Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԲ դար, Յաւելուած, էջ 618:

[21] Ն. Ակինյանը, մասնավորաբար, կարծում է, որ «երեք հարիւր յիսուն եւ մէկ հարցմունք եւ պատասխանիք հեղինակի խելապատակի ծնունդներն են» (**Ակինեան Ն.,** Դաւիթ Հարքացի Անյաղթ Փիլիսոփայ: Կեանքն եւ գործերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1959, էջ 41):

[22] **Խոստիկյան Մ**., նշվ. աշխ., էջ 57:

[23] Տե՛ս **Eunapius**, Lives of the Philosophers and Sophists in Philostratus and Eunapius, The Lives of the Sophists with an English translation by W. C. Wright, Loeb Classical library, London, 1922.

րում է նրա խնդրանքը, և աղագրողները, ինչպես պատմում է Եվնապիոսը, արձանագրում են բանավեճը[24]։ Այս հիշատակումը մեզ հուշում է, որ եթե չորրորդ դարում ընդունված էր գրառել բանավեճերը, ապա հինգերորդ դարում ինչո՞ւ պիտի զլանային դա անել, այն էլ ոչ թե մասնավոր անձանց, այլ եկեղեցիների ու հետևաբար նաև՝ պետությունների հարաբերություններին վերաբերող դավանաբանական խնդիրների մասին բանավեճերը։ Տրամաբանական է մտածել, որ Դավթի, Մովսեսի ու քաղկեդոնականների բանավեճը գրառվել է, սակայն հետագայում որոշ գրառումներ վերացվել են՝ այլևս ոչ պիտանի համարվելով կամ նպատակադրված կերպով[25]։ Սակայն Խոստիկյանը «ոչ մի կերպ» չի կարողանում հասկանալ, թե հայ ուսյալներին ու հայ եկեղեցին ի հաշիվ հունականի փառաբանող այս երկն ինչպես կարող էր ստեղծվել հունական գրականության մեջ[26]։ Հարցը լուծվում է, երբ ընդունում ենք, որ շարադրանքը բազմաշերտ է։ Հնագույն շերտը երկխոսություն-բանավեճն է, որն էլ հենց, ըստ երևույթին, թարգմանվել է, իսկ մնացյալ պատումային հատվածները գրվել են թարգմանությունից հետո կամ դրան զուգահեռ՝ ելնելով Դավթի ու Մովսեսի մասին այդ ժամանակ շրջանառվող ավանդույթից[27]։ Խոստիկյանը պնդում է, որ երկում չկա թարգմանության ոչ մի հետք[28], անտեսելով, սակայն, որ այդ պնդումը վերաբերում է միայն հայ ուսյալներին ու եկեղեցին գովաբանող պատումին։ Այնինչ բուն բանավիճային հատվածը Ս. Արևշատյանը դիտարկում է որպես հունաբան թարգմանություն։ Նա, վերլուծելով տեքստում առկա հունաբանությունների ոճը, որոշում է անգամ դրա թարգմանության ժամանակը՝ պնդելով, որ թարգմանության բառապաշարն ու ոճը համապատասխանում են երրորդ շրջանի հունաբան լեզվին, հետևաբար այն կարող է վեցերորդ դարի վերջի թարգմանություն լինել[29]։ Սա ցույց է տալիս, որ Խոստիկյանի կասկածներն անհիմն են, և թարգմանության ժամանակի մասին հիշատակարանում գրված տեղեկությանը կարելի է վստահել։

Այժմ գանք անվավեր համարվող պատումին։ Իհարկե, այնտեղ կան անախրոնիզմներ. չորրորդ դարի գործիչներն ու դեպքերը ներկայացված են որպես

---

[24] Տե՛ս նույն տեղը, էջ 494-495։

[25] Հայտնի է, որ Բյուզանդիայի Կոնստանտինոս Դուկաս կայսրը XI դարում հրաման է արձակել բոլոր ոչ քաղկեդոնականներին վտարել Մելիտենեից (Մալաթիա) և այրել նրանց սրբազան գրքերը (տե՛ս **Hussey J., M., Louth A.,** The Orthodox Church in the Byzantine Empire, Oxford Univ. Press, 2010, էջ 137)։ Հասկանալի է, որ Դավթի՝ որպես ոչ քաղկեդոնականի անվան հետ կապված տեքստերը պետք է ոչնչացված լինեին։

[26] Տե՛ս նույն տեղը, էջ 63։

[27] 1861 թվականին Վարդան Արևելցու պատմությունը հրատարակող Մկրտիչ Էմինը բանավեճի տեքստի հնագույն շերտը համարում է հինգերորդ դարի գրվածք՝ խոստանալով դրա վերլուծությանը նվիրել հատուկ ուսումնասիրություն, որը, ցավոք, այդպես էլ լույս չի տեսել։ Տե՛ս Всеобщая история Вардана Великого, М., 1861. Примечания, էջ 89։

[28] Տե՛ս **Խոստիկյան Մ.,** նշվ. աշխ., էջ 63։

[29] Տե՛ս **Arevšatyan S. S.**, Le “Livre des Êtres” et la Question de l’Appartenance de Deux Lettres Dogmatiques Anciennes // “Revue des Etudes Armeniennes”, Paris, 1984, XVIII, էջ 23-32։

հինգերորդ դարի: Սակայն դա կարող է լինել կատարված դեպքերից նվազագույնը 100-150 տարի հետո դրանց մասին պատմելու հետևանք: Խոստիկյանը, վերապատմելով այն տեղեկույթը, որ Մովսեսը և Դավիթը հանդես են գալիս որպես Թեոդոսիոս կայսեր սաներ, զարմանում է. «Ասես հայ գյուղացիների այդ որդիները բյուզանդական կայսեր պալատականներ են»[30]: Դարձյալ դիմենք համաբանության՝ ցույց տալու, որ կայսրերի բարեհաճ վերաբերմունքը մեր մտածողների հանդեպ միանգամայն հնարավոր է. Պրոյերեսիոսի մասին Եվնապիոսը պատմում է, որ ուսանող տարիներին նա այնքան աղքատ էր, որ ինքն ու ընկերը մեկ վերարկու ունեին, ու մի օր ինքն էր գնում դասի այդ վերարկուով, մյուս օրը՝ ընկերը: Սակայն դա չի խանգարում, որ հետագայում Պրոյերեսիոսն անձամբ ծանոթ լինի Հռոմի՝ իրար հաջորդած մի քանի կայսրի հետ, որոնցից Կոնստանտոսը, ըստ Եվնապիոսի, նրան հրավիրում է Գալլիա՝ նստեցնելով իր սեղանի շուրջ այն մարդկանց հետ, որոնց ամենաշատն էր հարգում[31]: Եվ Պրոյերեսիոսի հետ երրորդ զուգահեռը. Պրոյերեսիոսը նվիրյալ քրիստոնյա էր, որը Հուլիանոս ուրացող կայսեր օրոք թողեց դասավանդումը, թեպետ կայսրն իր համար բացառություն էր արել[32]:

Պարույրը, որի քրիստոնյա լինելը փաստված է տարբեր աղբյուրներում, ոչինչ չի արել իր դասավանդած նյութի բովանդակության մեջ քրիստոնեական բաղադրիչ ներմուծելու համար, ընդհակառակը՝ մատուցել է ավանդական հելլենիստական նյութը[33]: Եթե Պրոյերեսիոսը զուտ հելլենիստական նյութ էր

---

[30] **Խոստիկյան Մ.,** նշվ. աշխ., էջ 57:

[31] Թեպետ տեղի բնակիչները ի մեծի մասի չէին հասկանում Պրոյերեսիոսի իմաստասիրական խոսույթը և չէին կարող հիանալ նրա հոգու խորհուրդներով, սակայն նրանք «իրենց հիացմունքն ու զարմանքը փոխանցում էին պարզապես իրենց աչքերի տեսածին. զմայլվում էին նրա մարմնական գեղեցկությամբ և վեհ կեցվածքով, ասես նրանց առջև լիներ կոլոսի արձան, այնքան բարձր էր նա ամենայն մարդկայինից բոլոր առումներով» (**Eunapius**, նշվ. աշխ., էջ 506-507): Կայսեր ջերմ վերաբերմունքը Պրոյերեսիոսի հանդեպ Վոթսը նկարագրում է այսպես. «Կոնստանտոսի կողմից Պրոհերեսիոսին շնորհված պատիվները նրան դարձնում էին իսկական մտավորական գերաստղ: Սովորաբար այս տեսակի կայսերական ճանաչում ձեռք էին բերում կայսերական ընտանիքի ուսուցիչները և Պղեմոյի, Լիբանիոսի և Թեմիստոսի նման բարձրակարգ մտավորականները» (**Watts E. J.,** City and School in Late Antique Athens and Alexandria, University of California Press, Berkeley, LA, London, 2006, p. 61):

[32] Տե՛ս **Եվնապիոս,** նշվ. աշխ., էջ 512-513:

[33] Արդի ուսումնասիրող Ուոթսը, այս փաստի շուրջ մտորելով, գրում է. «Չնայած այն հանգամանքին, որ հանրությունը Պրոյերեսիոսին ընկալում էր որպես հռետորության քրիստոնյա ուսուցիչ, վերջինս դույզն-ինչ ջանք չէր թափում քրիստոնեության տարրերը իր դպրոցի կյանք ներմուծելու համար: Այդ մասին կարող ենք դատել նրա աշակերտների՝ Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու գրույթներն ուսումնասիրելով: Գրիգորն ու Բարսեղը քրիստոնյա էին, սակայն դպրոցը գրավիչ էր նաև հեթանոսների համար: Ամենայն հավանականությամբ դպրոցի ուսանողների մեծամասնությունը հենց հեթանոսներն էին» (**Watts E. J.,** նշվ. աշխ., էջ 63-64): Ուոթսը հստակ գրում է. «Չնայած հրապարակավ քրիստոնեական հռչակված լինելուն՝ Պրոյերեսիոսի դպրոցում ճարտասանությունը դասավանդվում էր նույն ուսումնական ծրագրով, ինչ հեթանոս մրցակիցների դպրոցներում» (նույն տեղում):

դասավանդում, լինելով քրիստոնյա, ապա ինչո՞ւ չի կարելի մտածել, որ Դավիթն էլ, անկախ քրիստոնյա լինելու հանգամանքից, կարող էր համալսարանի առաջին տարվա ուսանողների համար կարդացված ներածական դասընթացում մատուցել միայն հելլենիստական նյութ, ինչպիսի բովանդակություն տեսնում ենք նրա դասախոսությունների գրառումներում[34]:

Այժմ զանք Ստեփանոս Սյունեցու տեքստերում Դավթի հիշատակման մասին վերը խոստացված քննարկմանը: Նախ՝ հետևենք Խոստիկյանի մտքի ընթացքին: Նա գրում է, որ Սյունեցին Դավթին հիշատակում է որպես աստվածաբան, «ընդ որում, մի առնչությամբ, որը մեզ ենթադրել է տալիս, թե Ստեփանոս Սյունեցին հարքացի աստվածաբան Դավթին տեղավորում է վեցերորդ դարում: Նա հիշատակում է եկեղեցու հույն և հայ հայրերին՝ ըստ ժամանակագրական հաջորդականության՝ ապացուցելու համար, որ միաբնակությունը միակ ճշմարիտ հավատքն է: Արդ, Դավիթն այստեղ հիշատակվում է 556 թվականին մահացած Սյունիքի եպիսկոպոսից հետո: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Դավիթն առնվազն եղել է այդ եպիսկոպոսի ժամանակակիցը և հետևաբար չի կարող համարվել Սահակի և Մեսրոպի աշակերտը»[35]: Եզրակացությունն իրոք տրամաբանված կթվար, եթե հաշվի չառնեինք, որ մեկ այլ երկում Սյունեցին հիշատակել է հենց «Սահմանք»-ի հեղինակ Դավթին: «Պիտանի լուծմունք սահմանացն եւ Պորփիւրին Տէր Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի» մեկնության մեջ հեղինակը պարբերություն առ պարբերություն մեկնում է «Սահմանքն» ու Պորփյուրի «Ներածությունը» և երկու անգամ հանվանե հիշատակում Դավթին[36]: Առաջին հիշատակումը. «Աշակերտ էր Պորփիւր Պղոտինի Լիկաւպոլսեցոյ: Եւ առաջ եկեալ. Զյառաջեկեալս Դաւիթ յաւել» (էջ 567, մեկնություն 291): Եվ երկրորդը. «Դաւթի սահմանս վասն տեսակի լաւ է, զի ասի առ սեռ, ասի եւ ի վերա անհատիցն» (էջ 568, մեկնություն 314): Իհարկե, այս հիշատակումները թռուցիկ են, սակայն դիտելի է, որ այն հատվածներում, որտեղ Ստեփանոսը Դավթի անունը չի տալիս, գրում է «մեկնիչն».

---

[34] Այնինչ Խոստիկյանը պնդում է, որ «փիլիսոփա Դավիթը (ոչ աստվածաբանը) դեռ պաշտպանում է հին հավատը և այդ պատճառով չի կարող համարվել այս աստվածաբանական երկերի հեղինակը» (**Խոստիկյան Մ.,** նշվ. աշխ., էջ 117): Խոստիկյանի եզրակացությունը չի համապատասխանում ուշ անտիկ շրջանի մտագործելակերպին, որում շատ հաջող կերպով կարող էին գոյակցել քրիստոնեականն ու հեթանոսականը, ինչի մեկ այլ վառ օրինակը տեսնում ենք Բոեցիուսի ստեղծագործություններում (այս մասին առավել մանրամասն տե՛ս **Պետրոսյան Ս. Ս.,** նշվ. աշխ., էջ 70): Հետազոտողները դարեր ի վեր տարակուսել են, թե ինչպես կարող էր քրիստոնյա լինել այդքան ոչ քրիստոնեական ներշնչանք պարունակող «Սփոփանք իմաստասիրությամբ» երկի հեղինակը: Սակայն Մարենբոնն իր հետազոտության մեջ փարատել է այդ տարակուսանքները (տե՛ս **Marenbon J.,** Boethius, Oxford Univ. Press, 2003, էջ 146-164): Ժամանակն է, որ մենք էլ մեր միտքն ազատենք վաղ միջնադարի ու ուշ անտիկ դարաշրջանի մասին մեր կանխակալ վերաբերմունքից:

[35] **Խոստիկյան Մ.,** նշվ. աշխ., էջ 49:

[36] **Ստեփանոս Սիւնեցի**, Պիտանի լուծմունք սահմանացն եւ Պորփիւրին Տէր Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի // Մատենագիրք հայոց, Զ հատոր, Անթիլիաս, 2007, էջ 561-570:

«Զմեկնիչն լաւ կարդալ, որ լաւ հասկանաս եւ ուղիղ՝ զստոյգն, ապա թէ ոչ կամ բնաւ չհասկանաս կամ ծուռ հասկանաս» (էջ 565, մեկնություն 189): «Սահմանքի» դրույթներից մեկն էլ բացատրելիս ասում է. «Այս կատարեալ իմաստասիրութիւն է, որ անկարաւտ է ապացուցի» (էջ 563, մեկնություն 112): Միանշանակորեն, այստեղ խոսքը Դավիթ Անհաղթի մասին է, ու եթե «Սահմանքի» հեղինակ Դավիթը և աստվածաբան հարքացի Դավիթը լինեին նույն մարդը, Սյունեցուն ոչինչ չէր խանգարի այստեղ ևս գրելու «Դաւիթ Հարքացի», այնինչ նա ուղղակի նշում է միայն անունը: Չբացառելով, որ Հարք գավառում կարող էին ծնվել և՛ հինգերորդ դարի թարգմանիչ-մեկնիչ Դավիթը, և՛ հաջորդ դարի միաբնակ աստվածաբան այլ Դավիթ, պարզապես փաստենք, որ եթե այդ երկուսը նույն մարդը լինեին, Սյունեցին կա՛մ այս երկում, կա՛մ մյուսում ինչ-որ կերպ նրանց կկապեր միմյանց հետ: Քանի որ չկա նման կապ, շատ ավելի տրամաբանական է ենթադրել, որ դրանք երկու տարբեր անձնավորություններ են: Եվ շատ զարմանալի է, որ Դավթի մասին թեզ գրող Խոստիկյանն անտեսել է Սյունեցու՝ հենց Սահմանաց գրքին վերաբերող մեկնության տեքստը:

Ավելին, Դավթին նույնացնելով հաջորդ դարի աստվածաբան հարքացի Դավթի հետ, Խոստիկյանը մեկ այլ մերժելի վերակազմություն է անում՝ գրելով. «Արդ, հիմնվելով այս հատվածների վրա, որոնց անպայմանորեն կարող ենք վստահել՝ կարծում ենք, որ բացահայտել ենք հայկական ավանդության պատմական միջուկը: Վեցերորդ դարում ապրել է հայ աստվածաբան ոմն Դավիթ՝ Հարք գավառից: [. . . ] Դավիթը չի սովորել ո՛չ Աթենքում, որտեղ փիլիսոփայական դպրոցը վերացել էր արդեն 528 թվականին, ո՛չ էլ Կոստանդնուպոլսում, որտեղ չէին հանդուրժում միաբնակներին: Նա ո՛չ Սահակի, ո՛չ Մաշտոցի աշակերտն է, ո՛չ էլ պատմագիր Մովսես Խորենացու, այլ ավելի շուտ՝ Հուլիանոս Հալիկառնասացու, և որպես այդպիսին՝ գուցե սովորել է միաբնակների ապաստանած վայրերում՝ Ասորիքում և Եգիպտոսում, օրինակ՝ Ալեքսանդրիայում»[37]: Դավիթ Հարքացու անունով պահպանված տեքստերից եզրակացնելով, որ Դավիթը ծայրահեղ միաբնակ է, Խոստիկյանը շարունակում է իր վերակազմությունը. «Հայ եկեղեցին 554 թվականի Դվինի ժողովում մերժելով քաղկեդոնականությունը, աստիճանաբար ավելի է հակվում այս հուլիանոսյան աստվածաբանության կողմը՝ ի վերջո այն ճանաչելով որպես միակ ճշմարիտը: Այս ուղղությունը տիրապետող էր Հայաստանում մինչև 776 թվականը, երբ Հովհաննես Օձնեցի Հայրապետի օրոք այն բանադրվեց: Եվ եթե հարց տանք, թե ինչու Դավթի աստվածաբանական երկը, որից փոխառված է վերոհիշյալ մեջբերումը, չի հասել մեզ, ապա պատասխանը կգտնենք այն փաստի մեջ, որ այդ աստվածաբանությունը բանադրելուց հետո երկը ջերմեռանդորեն վերացվել է աշխարհի երեսից: Դավթի երկը կիսել է այս ուղղության բազմաթիվ այլ երկերի ճակատագիրը»[38]:

---

[37] Տե՛ս **Խոստիկյան Մ.,** նշվ. աշխ., էջ 75:

[38] Նույն տեղում, էջ 71:

Փաստարկումների այս շարքն առաջին հայացքից հետևողական է թվում, սակայն դրանում տեղ է գտել փաստերի ու հանգամանքների կամայական մեկնաբանություն: Նախ, Դավիթ Հարքացի աստվածաբանը նույնացվել է Դավիթ Անհաղթի հետ, ու Հարքացու երկերի բովանդակությունից եզրակացություն արվել Անհաղթի ծայրահեղ միաբնակ լինելու և հետևաբար՝ Աթենքում ու Կոստանդնապոլսում եղած լինելու անհնարինության մասին: Սակայն շատ ավելի տրամաբանական է հակառակ ենթադրությունը. Դավիթը և Մովսեսը Քաղկեդոնի ժողովի որոշումների դեմ բանավիճելիս բնավ միաբնակության ջատագովություն չեն դրսևորում: Դեմ լինելով Քրիստոսի մեջ երկու բնության ընդունմանը՝ նրանք փաստարկում են, որ Քրիստոսի մեջ անճառելի կերպով միավորված են աստվածայինն ու մարդկայինը, որոնք միավորումից հետո այլևս մեկ միասնություն են, և երկու առանձին բնության մասին խոսք լինել չի կարող: Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը նույնպես դրա մասին էր խոսում իր դավանաբանական երկերում, և ավելի տրամաբանական է ենթադրել, որ նրա օրոք ոչ թե արգելվել են Դավթի երկերը, այլ հակառակը՝ նախկինում հալածված Դավթի ու Մովսեսի երկերն ու անունները վերադարձվել են մոռացությունից: Խոստիկյանի կողմից «ապալեգիտիմացված» հարցմունքում որևէ ծայրահեղ միաբնակության նշույլ չկա, անգամ միաբնակության հիմքեր չկան: Դավիթն ու Մովսեսը դեմ են Քաղկեդոնին, սակայն չեն պնդում, որ Քրիստոսն ունի միայն աստվածային բնույթ, նրանք պնդում են, որ Քրիստոսի մեջ աստվածայինն ու մարդկայինն անճառելի կերպով մեկ միասնություն են կազմում. «Դաւիթ ասէ. Բնութեամբ չարչարելի եւ մահկանացու, զի զայն զգեցաւ, եւ յայտ է, ի ճշմարիտ չարչարանացն եւ ի մահուանէն, իսկ ըստ միաւորութեանն Աստուածն Բանի՝ անչարչարելի եւ անմահ, վասն զի յորժամ կամեցաւ, չարչարեցաւ եւ մեռաւ»[39]: Իսկ Մովսեսը շարունակում է. «Ծնաւ արդարեւ զառաքեալն ի Հաւրէ՝ ոչ աստուած մերկ եւ ոչ մարդ սոսկ, այլ Աստուած մարդացեալ եւ մարմին աստուածացեալ, անսերմն ծննդեամբ ի կուսէն գոյացեալ և ի ծոցոյ Հաւր ոչ մեկնեալ եւ զգործս մարդեղութեամբ հաւասարապէս կատարեալ. Ծնաւղ է ստեղծչին գոյից, անհայր ըստ մարմնոյ եւ անմայր ըստ ինքնաբաւ գոյութեանն»[40]:

Այսպիսի վերակազմությունը նաև լույս է սփռում այն հանգամանքի վրա, թե ինչու, Հայաստան վերադառնալով, Մովսեսն ու Դավիթը լավ ընդունելության չարժանացան. հայաստանցիները մտածում էին, որ նրանք տուրք են տվել քաղկեդոնականությանը: Ահա թե ինչու ժամանակի երկերում չենք գտնում Դավթի մասին պատումներ: Խոստիկյանն այս փաստն օգտագործում է հետևյալ կերպ. «Մենք իզուր կփնտրենք որևէ հիշատակություն Դավթի մասին հինգերորդ դարի մատենագիրների մոտ: Հայտնի պատմագիր Ղազար Փարպեցին,

---

[39] Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն, Մատենագիրք հայոց, Ի հատոր, Եր., 2014, էջ 689:

[40] Նույն տեղում, էջ 693:

որին հայ խավարամիտ հոգևորականությունը հեռացրել է իր պաշտոնից, և ո-րը 501 թվականին պաշտպանական մի նամակ է հղել այն ժամանակվա հայոց մարզպան, իշխան Վահանին, որտեղ նկարագրել է հունական կրթություն ստացած բոլոր եկեղեցականներին ու փիլիսոփաներին հալածող այդ հոգևո-րականության խայտառակ արարքները, մի բառով անգամ չի հիշատակում մեր փիլիսոփային։ Մինչդեռ, ինչպես վերը տեսանք, Դավիթը՝ որպես հունա-կան կրթություն ստացած մարդ, ենթարկվել է հետապնդումների, հալածվել, հեռացել Վրաստան և մահացել այնտեղ։ Ինչպե՞ս կարող էր Ղազար Փարպե-ցին անտեղյակ լինել նրա ճակատագրից»[41]։

Խոստիկյանի շարադրանքն ու վերջին հռետորական հարցն ընթերցողի վրա համոզիչ տպավորություն են գործում։ Իրոք, եթե Ղազարը չի հիշատա-կում հալածված Դավթին հենց հալածանքների մասին խոսելիս, ուրեմն կարե-լի է եզրահանգել, որ Դավիթը չի ապրել հինգերորդ դարում։ Սակայն Միսաք Խոստիկյանն անտեսում է այն հանգամանքը, որ Փարպեցու երկից պոկված է եղել մեկ, իսկ գուցե երկու թերթ այն էլ հենց այն հատվածից, որտեղ Փարպեցին խոսում է Մովսես փիլիսոփայի հալածանքների մասին։ Խոստիկյանը մեջբե-րում է Փարպեցու նամակի 1904 թվականի հրատարակությունը, և զարմանալ միայն կարելի է, թե ինչպես է նրա աչքից վրիպել 202 էջի տողատակի ծանո-թագրությունը. «*տեղեկացեալք*"ից յետոյ բնագրում միևնույն գրչով մանր գրե-րով. «մի թուղթ յայս տեղացս է պակաս»։ Նոյնպէս ունի եւ Վ.։ Ատ. Ունի ծանօթ. Որպէս յօրինակսն մեր՝ նոյն և ի բուն գրչագիրն երկու թերթք պակասին աս-տէն։ ԲԳտ. Ունին ծանօթ. «Երկու թուղթ ի բնագրէն ի բաց անկեալ (կամ ընկե-ցեալ) նշանակէ (Ա) տպագիրն»[42]։ Իսկ մեկ և առավել ևս երկու թերթիկի վրա կարող էր լինել բավականին ծավալուն տեղեկույթ հալածված մտավորական-ների ու նրանց հալածանքների մասին։

Փորձենք հետևել Ղազար Փարպեցու շարադրանքին և ձգտել հասկանալ, թե ինչ տեղեկույթ է կորել ընկած կամ պատռված էջերի հետ։ Խոսելով իր հա-լածանքների մասին՝ Ղազարը հարց է տալիս, թե ինչու այլ առաքելանման մարդիկ ևս հալածվեցին ու «խստագոյն վշտիւ վախճանեցան»[43]։ Ապա խոսում է «Հարցմունքի» տեքստում Դավթի մշտական ուղեկից Մովսեսի մասին. «Երա-նելի փիլիսոփոսն Մովսէս, որ արդարև մինչդեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից. ո՞չ ապաքէն ի տեղուոջէ ի տեղի աբեղեանդ հայոց հալածական արարին»[44]։ Դառնացած Փարպեցին պատմում է, որ Մովսեսի լու-սավորող գրքերը տգիտաբար «փաթաղիկես» էին կոչում, և եպիսկոպությունը մահաբեր դեղի պես նրան տալով՝ «հեղձուցին» նրան։ «Որոյ ի ժամ վախճանին

---

[41] **Խոստիկյան Մ**., նշվ. աշխ., էջ 51։

[42] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1904, էջ 202, տող. ծան. 9։

[43] Նույն տեղում, էջ 201։

[44] Նույն տեղում, էջ 202։

զինչպիսի ահաւոր նզովս գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ասա-ցեալ է՝ ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք. . . . »[45]: Եվ հենց այստեղից առնվազն մեկ թերթ պակասում է: Իսկ երկու երեսի վրա կարող էր գրված լինել բավա-կանին երկար տեքստ, որը կարող էր վերաբերել թե՛ արդեն նշված Մովսեսին, թե՛ նրա հետ կամ նրան զուգահեռ հալածված այլ հունասերների: Ինչևէ...

Պահպանված հաջորդ էջում արդեն կարդում ենք, ցավոք, մի կիսատ նա-խադասության ավարտ, որում անուն չի տրվում, քանի որ, ըստ ամենայնի, ար-դեն նշվել էր. «. . . . զտեառնէ, զնա կացոյց ի վերայ անչափ անհանգիստ աշ-խատութեանց և վաստակոյն զցայգ և զցերեկ, ի լուսաւորութիւն աշխարհիս Հայոց: Զոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել: Զհրեշտա-կանման այրն զՏէր՝ նոյն անհանգիստ հալածանոք վախճանեցուցին»[46]: Ի՞նչ եզրակացություն կարող ենք անել: Խոսքն արդեն Մովսես փիլիսոփայի մասին չէ, քանի որ պարզ ասում է, որ նույն անհանգիստ հալածանքներով վախճանե-ցին: Նշանակում է՝ խոսքն արդեն այլ մարդու մասին է, որը «հրեշտականման այր» էր, ըստ Փարպեցու: Շատ հավանական է, որ հենց Դավթի մասին է խոսքը: Չի բացառվում նաև, որ Դավթի մասին արդեն հիշատակած լիներ նույնիսկ մինչև այդ նախադասությանը հասնելը:

«Հրեշտականման այրի» մասին խոսելուց հետո Փարպեցին հիշատակում է բոլորից հարգելի տեր Խոսրովիկին, որը, ցանկանալով վերադառնալ Հայաս-տան, լսում է, որ իրեն չեն ընդունելու, տրտմում է ու վախճանվում հայրենիքից հեռու, և «տենչալի նշխարացն այլք, և ոչ մեք, արժանի եղեն ընդունակու-թեան»[47],- ցավով եզրափակում է Ղազարը: Իսկ ի՞նչ էին ասում Խոսրովիկի թշնամիները: Փարպեցին բառացի մեջբերում է. «Ահա ո՞ւր զայ միւս ևս թարգ-մանն»[48]: Փոխակերպական տրամաբանությամբ հասկանալի է, որ ևս մեկ թարգմանչի ընդունել չուզողները մյուս թարգմանիչներին ևս չէին ընդունել: Իսկ «Հարցմունք»-ում հստակ նշված է, որ «Եւ յետ աւուրց բազմաց առաքեցին արս հինգ Սահակ եւ Մեսրոպ առ թագաւորն Թէոդոս, զի թարգմանեսցի զգրեանն: Դաւիթն անյաղթ կոչեցեալն փիլիսոփայ եւ Մովսէս քերթողահայրն, իմաստասէրն Մամբրէ, եւ հռետորն Աբրահամ, եւ սոցին նմանակիցն Պաւղոս առաքեցան ի կայսերական պալատն: Եւ թագաւորն Թէոդոս յոյժ ուրախ եղեւ, եւ փառաւորութեամբ ընկալաւ զնոսա եւ զԴաւիթ եւ զՄովսէս դատաւորս կա-ցոյց ի տանն հայրապետանոցին, եւ ի թարգմանութենէ ոչ դադարեհին»[49]: Հայոց եկեղեցին վերոնշյալ Դավթին ու Մովսեսին սրբացրել է ու հիշատակում է նրանց Սուրբ Թարգմանչաց տոնի ժամանակ՝ հոկտեմբերին: Ցավոք, սրբաց-ման գործընթացի ժամանակը և ընթացքը նկարագրող տեքստերը գուցե չեն պահպանվել կամ գուցե առայժմ մեզ հայտնի չեն, բայց հենց այն, որ Դավիթն

[45] Նույն տեղում:

[46] Նույն տեղում:

[47] Նույն տեղում:

[48] Նույն տեղում:

[49] Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն, էջ 662:

ու Մովսեսը սրբացվել են որպես թարգմանիչներ, ցույց է տալիս, որ քաղաքակրթական մեծագույն ծրագիր են կատարել մեր գործիչները՝ հայերեն հնչեցնել ժամանակի առաջադեմ կարևորագույն աստվածաբանական ու գիտական երկերը՝ դրանով իսկ ստեղծելով հայերեն գիտության լեզու:

Վերջում անդրադառնանք մի ուշագրավ հանգամանքի. Ն. Ակինյանը, Եղիշեին համարելով VII դարի գործիչ, գտնում է, որ նրան հայոց պատերազմի պատմությունը գրելու առաջարկն արած Դավիթ երեցը նույն Դավիթ փիլիսոփան է, ըստ Ակինյանի՝ Դավիթ Հարքացին[50]: «Եղիշէ իր Ընծայականին մէջ իր հայցողին, Դաւիթ երէցին կը բացագանչէ. «Այլ դու, ով մեծդ ի գիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ արդեօք հրամայեցեւ, քան եթէ հրամայիցիս լաւագունաց»» (էջ 5): Ակինյանի համարձակ ենթադրությունը մեզ հնարավորություն է տալիս առաջադրելու այլ վարկած. չէ՞ որ եթե Եղիշեն ապրել է V դարում, ինչը բավականին համոզիչ փաստարկել է Լ. Խաչիկյանը[51], և այս Ընծայականն իրոք ուղղված է Դավիթ փիլիսոփային, ուրեմն սա կարող է լինել մեկ այլ կռվան V դարում Անհաղթի ներկայությունը փաստելու համար[52]: Ավելացնենք, որ Փարպեցու Հայոց պատմության մեջ ևս հիշատակվում է Դավիթ անունը պատվական երեցների շարքում. «Այսորիկ ամենեքեան եպիսկոպոսքս. և ի պատուական երիցանց՝ սուրբն Ղևոնդ, և Խորէն ի Մրենայ, և Դաւիթ, և այլ պատուական, և աւագ վանականք բազումք...»[53]: Թեև առայժմ հնարավոր չէ ապացուցել, բայց չպետք է նաև բացառել, որ թե՛ Ղազարի, թե՛ Եղիշեի հիշատակած Դաւիթ երեցը կարող է լինել հենց Դավիթ փիլիսոփան, որ որոշ ժամանակից ի վեր մեր ավանդույթում Անհաղթ է կոչվում[54]:

Ամփոփելով նշենք, որ Խոստիկյանի պնդումն առ այն, որ Դավթի մասին հայոց ավանդույթը սին «դյուցազներգություն» է, ապացուցված համարել չի կարելի: Եվ առայժմ պետք է պարզապես ընդունել հինգերորդ դարում ապրած

---

[50] Տե՛ս **Ակինեան Ն.**, նշվ. աշխ., էջ 89-90: «Այս տեղիքս ճշդիւ կը համապատասխանէ Հարքացի փիլիսոփային: Եւ որովհետեւ Եղիշէի ժամանակը է. դարու երրորդ քառորդին, ուստի 650-675-ին կնշանակէի, կարող էր Եղիշէ 662-670 տարիներուն հանդիպում ունեցած ըլլալ Դաւիթ փիլիսոփային հետ», - ենթադրում է Ն. Ակինյանը:

[51] Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Եր., Զվարթնոց, 1992, էջ 152:

[52] Մ. Փորթուգալը «Դաւթի երիցու Մամիկոնի հայցեալ» արտահայտությունից ենթադրում է, որ Դաւիթը «Մամիկոնեան Տան մեծամեծներէն մէկն ըլլալու էր...» (էջ 173):

[53] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 92:

[54] Ընդ որում, Եղիշեն շնորհակալ է, որ Դավիթը, թեպետ ինքն էլ կարող էր գրել Ավարայրի պատմությունը, բայց իրեն է առաջարկել դա անել, քանի որ, երևի, թարգմանություններով ու մեկնություններով էր զբաղված, որոնք պակաս քաղաքակրթային նշանակություն չունեին պետականությունը կորցրած երկրում և գուցեև հենց այդ պատճառով գրավոր ավանդույթը ամբացնել ցանկացող մտավորականության համար: Եղիշեն, շարունակելով իր միտքը, ասում է. «Որպէս երևի ինձ և քեզ և այնոցիկ, որ դեգերեցին յիմաստութիւն՝ երկնաւոր սիրոյ է նշանակս այս, և ոչ երկրաւոր փառասիրութեան» (Եղիշէի Վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին եւ քննադատութիւնք Միքայել Փաշայի Փորթուգալ, Վենետիկ, ի տպ. Ս. Ղազարու, 1903):

հայ նորպլատոնական Դավիթ փիլիսոփայի մասին դիսկուրսի գոյության իրավունքը՝ առանց նսեմացնելու Դավթի անձն ու փիլիսոփայությանը և դավանաբանական վեճերին բերած նրա նպաստը՝ չբացառելով հետագա բացահայտումների ու ճշգրտումների հնարավորությունը:

**СИЛЬВА ПЕТРОСЯН – *Новый опыт разгадки тайны Давида Непобедимого.*** – Как известно, в результате современной научной реконструкции армянская письменная традиция о Давиде Непобедимом была подвергнута сомнению, и он был перенесен из V века во вторую половину VI века. В статье рассматривается вопрос о реконструкции времени Давида Непобедимого и на основе упоминаний в средневековых текстах делается попытка обосновать тот факт, что армянская средневековая письменная традиция о Давиде до сих пор не опровергнута. Показано, что если нет так называемых «доказательных» оснований видеть Давида в V веке, то они отсутствуют и в новых реконструкциях, отодвигающих Давида из V века. В частности, рассматриваются некоторые аргументы, выдвинутые в труде Мисака Хостикяна «Давид Философ», и приводятся их опровержения или, по крайней мере, показывается их недостаточная обоснованность. В статье высказывается предположение, что упомянутый Егише иерей Давид, скорее всего, может быть тем самым Давидом Философом, которого в армянской письменной традиции уже некоторое время называют «Непобедимым». Показано также, что в некоторых текстах, дошедших до нас с V века, встречаются упоминания о людях по имени Давид, и не следует исключать, что эти упоминания, или некоторые из них могут относиться к самому Давиду Непобедимому.
Метод аналогии используется для более ясного понимания духовной и интеллектуальной культуры поздней античности или раннего Средневековья. Проводятся параллели с другими мыслителями того времени — Проересием и Боэцием, чтобы продемонстрировать тесную связь ранней христианской культуры с древней греко-римской философской традицией. Это позволяет опровергнуть заключение исследователей, придерживающихся сциентистского подхода, согласно которому следует исключить возможность того, что Давид мог быть христианином, но при этом преподавать эллинистический материал студентам первого курса.

***Ключевые слова:*** традиция ученых мужей, Степанос Сюнеци, Патриарх Фотий, Лазар Парпеци, Мисак Хостикян, реконструкция, Святые переводчики

SILVA PETROSYAN – ***A New Attempt to Solve a Mystery of David the Invincible.*** – It is known, as a result of modern scientific reconstruction, that the Armenian written tradition about David the Invincible has been questioned, and he has been moved from the fifth century to the second half of the sixth century. The article examines the issue of reconstructing the time of David the Invincible and, based on references in medieval texts, attempts to substantiate the fact that the Armenian medieval written tradition about David has not yet been refuted. It is shown that if there are no so-called “evidentiary” grounds for seeing David in the fifth century, then they are also absent in the new reconstructions that remove David from the fifth century. In particular, some arguments put forward in Misak Khostikyan’s work “David the Philosopher” are examined and their refutations are given, or, at the very least, their lack of sufficient grounds is shown. The article suggests that the priest David mentioned by Yeghishe could very likely be the same David the philosopher, who has been called “Invincible” in Armenian written tradition for some time. It is also shown that in some texts that have come down to us from the fifth century, there are mentions of people named David, and it should not be excluded that they or some of them may refer to David the Invincible.

The method of analogy is used to gain a clearer understanding of the spiritual and intellectual culture of late antiquity or the early Middle Ages. Parallels are drawn with other thinkers of the time, Prohaeresius and Boethius, to illustrate the close connection between early Christian culture and the ancient Greco-Roman philosophical tradition. This makes it possible to refute the approach of researchers who think that David could not have been a Christian, and at the same time teach the Hellenistic material to first-year philosophy students.

**Key words:** *tradition of scholars, Stepanos Syunetsi, Patriarch Photius, Lazar Parpetsi, Misak Khostikian, reconstruction, Holy translators*

**Գրականության ցանկ**

Ակինեան Հ. Ն., Թուղթ Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց Մեծաց // Հանդէս Ամսօրեայ, 1968, Ապրիլ-Հունիս, թիվ 4, էջ 139: (Akinean H. N., T'ught' P'votay Patriark'i arr Zak'aria Kat'voghikos Hayots' Metsats' // Handes Amsoreay, 1968, April-Hunis, t'iv 4, ej 139).

Ակինեան Ն., Դաւիթ Հարքացի Անյաղթ Փիլիսոփայ: Կեանքն եւ գործերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1959: (Akinean N., Dawit' Hark'ats'i Anyaght' P'ilisop'ay. Keank'n yev gortsery, Viyenna, Mkhit'arean tparan, 1959).

Եղիշէի Վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին եւ քննադատութիւնք Միքայել Փաշայի Փորթուգալ, Վենետիկ, ի տպ. Ս. Ղազարու, 1903: (Yeghishei Vardapeti Vasn Vardanay yev Hayots' paterazmin yev k'nnadatut'iwnk' Mik'ayel P'ashayi P'vort'ugal, Venetik i tp. S. Ghazaru, 1903).

Մատենագիրք հայոց, Գ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2004: (Matenagirk' hayots', G hator, Ant'ilias-Libanan, 2004).

Կորիւն վարդապետի, Մամբրէի վերծանողի, եւ Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամին 1833: (Koriwn vardapeti, Mambrei vertsanoghi, yev Dawt'i Anyaght'i Matenagrut'iwnk', i Venetik, i tparani Srboyn Ghazaru, yamin 1833).

Խաչիկյան. Լ., Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Եր., Զվարթնոց, 1992: (Khach'ikyan. L., Yeghishev «Araratsots' meknut'yuny», Yer., Zvart'nots', 1992).

Խոստիկյան Մ., Դավիթ փիլիսոփան, Ներքին զրոց մատենաշար, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտ, Եր., 2020: (Khostikyan M., Davit' p'ilisop'an, Nerk'in grots' matenashar, Ashot Hovhannisyani anvan humanitar hetazotut'yunneri institut, Yer., 2020).

Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի, 1904: (Ghazaray P'arpets'woy Patmut'iwn Hayots' yev t'ught' arr Vahan Mamikonean, ashkhatut'eamb G. Ter-Mkrtch'ean yev St. Malkhasean, Tp'ghis, Aragatip Mnats'akan Martiroseants'i, 1904).

Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907 (Ghazaray P'arpets'woy Patmut'iwn Hayots' yev t'ught' arr Vahan Mamikonean, Tiflis, 1904).

Մուրադեան Գ., Դաւիթ Անյաղթին վերագրուած եւ նրա անուանն առնչուող գրուածքներ, Մատենագիրք հայոց, Ի հատոր: (Muradean G., Dawit' Anyaght'in veragruats yev nra anuann arrnch'uogh gruatsk'ner, Matenagirk' hayots', I hator).

Յովհան Աւձնեցի, Նորին ընդդէմ երեւութականաց, Մատենագիրք հայոց, Է. հատոր, Ը դար: (Yovhan Awdznets'i, Norin ynddem yerevut'akanats', Matenagirk' hayots', E. hator).

Պետրոսյան Ս. Ս., Դավիթ Անհաղթի հոգու խնամքի իմաստասիրությունը և արդիականությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2017: (Petrosyan S. S., Davit' Anhaght'i hogu khnamk'i imastasirut'yuny yev ardiakanut'yuny, Mayr At'vorr Surb Ejmiatsin, 2017).
Ստեփանոս Սիւնեցի, Պիտանի լուծմունք սահմանացն եւ Պորփիւրին Տէր Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի // Մատենագիրք հայոց, Զ հատոր, Անթիլիաս, 2007: (Step'anos Siwnets'i, Pitani lutsmunk' sahmanats'n yev Porp'iwrin Ter Step'anosi Siwneats' Yepiskoposi // Matenagirk' hayots', Z hator, Ant'ilias, 2007).
Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ընդ երկաբնակ չարափառսն, Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԲ դար, Երևան, 2014, էջ 660-740: (Srbots' vardapetats'n hayots' Movsesi yev Dawt'i harts'munk' ynd yerkabnak ch'arap'arrsn, Matenagirk' hayots', I hator, ZHB dar, Yerevan, 2014, ej 660-740).
Arevšatyan S. S., Le “Livre des Êtres” et la Question de l'Appartenance de Deux Lettres Dogmatiques Anciennes // “Revue des Etudes Armeniennes”, Paris, 1984, XVIII, էջ 23-32:
Bury J. B. History of the Later Roman Empire, Macmillan and Co., Ltd., 1923.
Dvornik F., Patriarch Photius, Scholar and Statesman // Dvornik F., Photian and Byzantine Ecclesiastical Studies, Variorum Reprints, London, 1974, VII.
Eunapius, Lives of the Philosophers and Sophists in Philostratus and Eunapius, The Lives of the Sophists with an English translation by W. C. Wright, Loeb Classical library, London, 1922.
Greenwood, T. Failure of a Mission? Photius and the Armenian Church. // Le Museon, 2006, 119, 1-2, pp. 123-168.
Hussey J. M., Louth A., The Orthodox Church in the Byzantine Empire, Oxford Univ. Press, 2010.
Marenbon J., Boethius, Oxford Univ. Press, 2003.
Photius, The Library of Photius, vol. I, trans. By J. H. Freeze, Macmillan, London, NY, 1920.
The Acts of Council of Chalcedon, translated with an introduction and notes by Richard Price and Michael Gaddis, Vol. 1, Liverpool Univ. Press, 2005.
Warren N.De, Staiti A. (Eds.), New Approaches to Neo-Kantianism, Cambridge Univ. Press, 2015.
Watts E. J., City and School in Late Antique Athens and Alexandria, University of California Press, Berkeley, LA, London, 2006.
Westerink L. G., Introduction // Pseudo-Elias (Pseudo-David), Lectures on Porphyry's Isagoge. Introduction, Text and Indices by L. G. Westerink, North-Holland Publishing Company, Amsterdam, 1967.
Адонцъ, Н., Арменія въ эпоху Юстиниана, СПб., 1908.
Всеобщая история Вардана Великого. М., 1861.

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 2(47), հունիս, 37-48
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.2.037

# ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆԵԼԼԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Արդի վիրտուալ ու թվայնացվող աշխարհում արհեստական ինտելեկտի զարգացման և մարդու էկզիստենցիալ գոյաբանության հարաբերակցման հարցերը տեսական ու գործնական նոր հնչեղություն են ձեռք բերել և փիլիսոփայական ու սոցիոմշակութային հատուկ անդրադարձի կարիք ունեն: Հաշվի առնելով այդ իրողությունը և անդրադառնալով ժամանակակից հասարակության առջև ծառացած մարտահրավերներին՝ հոդվածում հատուկ ուշադրության են արժանացել արհեստական ինտելեկտի էության, զարգացման ու գործառույթների, ինչպես նաև հարուցած խնդիրների ու հնարավոր վտանգների հիմնահարցերը: Քննարկվել են արհեստական ինտելեկտի հետ մարդու հնարավոր արդյունավետ փոխգործակցության հեռանկարները, ինչպես նաև ցույց է տրվել մարդ-մեքենա համակարգերի ներուժը հասարակության իրական խնդիրները լուծելու համար: Խնդիրն այն է, որ մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում արհեստական ինտելեկտի ներխուժումները, թվային տնտեսության, բիզնեսի ու կյանքի այլ բնագավառում նրա դերի մեծացումը, ինչպես նաև վիրտուալ իրականության ու հետմարդաբանական դարաշրջանի ձևավորումը պահանջում են նորովի մեկնաբանել նորագույն տեխնոլոգիաների տեղն ու դերը մարդկային կյանքում: Ի հավելումն ասվածի՝ արհեստական ինտելեկտի հանդեպ հետաքրքրության պատճառը ոչ միայն այն է, որ ժամանակակից մարդուն գրավում են տեխնոլոգիական նորարարությունների այն ձևերը, որոնք առնչվում են սոցիալ-տնտեսական կյանքի կատարելագործմանը, այլև՝ որ երևույթն ունի նաև խաղարկային դրսևորումներ և առնչվում է սպառողական հասարակության ազատ ժամանակի և ժամանցի կազմակերպման հիմնահարցերին:

**Բանալի բառեր –** *արհեստական ինտելեկտ, վիրտուալ իրականություն, տեխնածին հասարակություն, բանականություն, գիտակցություն, թվային տեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիական հեղափոխություն*

* **Նելլի Ալավերդյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ

**Нелли Алаверян** – кандидат философских наук, доцент кафедры истории и теории философии и логики  ЕГУ

**Nelli Alaverdyan** – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at YSU Chair of History, Theory of Philosophy and Logic

Էլ.փոստ՝ nalaverdyan@ysu.am   https://orcid.org/0009-0005-8313-5000

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 10.06.2025
Գրախոսվել է՝ 16.06.2025
Հաստատվել է՝ 24.06.2025
© The Author(s) 2025

Ժամանակակից տեխնածին հասարակություններում մարդն ասես գործում է բնական ու արհեստածին երկու իրարամերժ աշխարհներում. «Մի կողմից գոյություն ունի այն, ինչ կարող է ձևավորվել ու գոյություն ունենալ առանց մարդու, մյուս կողմից ստեղծվել ու ստեղծվում է ինքնաբավ ու սեփական օրինաչափություններով զարգացող արհեստական մի իրականություն, որտեղ մարդու գոյության հնարավորությունները գնալով սահմանափակվում են կամ կախված են մեքենաների որոշումից»[1]: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները ոչ միայն կտրուկ փոխել են մարդու անձնական վարքագիծն ու ապրելակերպը, այլև ազդել ու ազդում են ժամանակակից հասարակության առօրյա կյանքի տարբեր բնագավառների՝ հասարակական-քաղաքական գործունեության, վարչարարության ու կառավարման, ժողովրդավարության, էլեկտրոնային առևտրի, հեռավար կրթության ու աշխատանքի, հեռահաղորդակցման և այլնի վրա: Ավելին, այսօր արդեն կյանքի որոշ բնագավառներում արհեստական ինտելեկտը ոչ միայն կարող է մրցակցել մարդու հետ, այլև փոխարինել նրան՝ աշխատելով ավելի արդյունավետ ու համակարգված: Ժամանակակից նորագույն տեխնոլոգիաներն ու տեխնիկական նորակազմավորումները մարդուն դարձրել են վերամշակման ենթակա հումքի մի տեսակ, և աշխարհն ասես վերածվել է տեխնիկապես կառուցարկվող, միատարր, հաշվարկելի ու օգտակար համակարգի, ինչի արդյունքում մարդը դարձել է հզոր, բայց իմաստնությունից զուրկ տեխնիկական սուբյեկտ: Այս առումով, ինչպես նկատում է Հայդեգերը, պետք է անհանգստանալ ոչ թե այն պատճառով, որ մեքենաները մտածում են մարդկանց նման, այլ այն պատճառով, որ մարդն է սկսել մտածել մեքենայի նման: Եթե առաջին բաղադրիչը վերաբերում է տեխնիկայի գործնական օգտակարությանը, ապա երկրորդ դեպքում խոսքը այն ազդեցությունների մասին է, որոնք առավելապես առնչվում են մարդու էկզիստենցիալ գոյաբանությանն ու նրա առօրյա կյանքի կազմակերպման հիմնախնդիրներին: Բավական է նկատել, որ արհեստական ինտելեկտը ոչ միայն ուժեղացնում է մարդու մտավոր կարողությունները և ստեղծում ավելի արդյունավետ կառավարման մեխանիզմներ, այլև ոչ հեռու մի ապագայում կարող է մարդուն դուրս մղել գործունեության որոշ ոլորտներից և կամ ենթարկել իրեն, քանի որ նրա հնարավորությունները, ի տարբերություն մարդու, գրեթե անսահման են[2]: Բոլորովին էլ պատահական չէ, որ հետհումանիզմի ժամանակակից մեկնաբանություններում մարդու կենսասոցիալական կազմավորումը դիտարկվում է որպես անհետացող տեսակ, որին մարմնի և ուղեղի անվերջ էվոլյուցիայի, այլ կերպ ասած՝ մարդկային մարմնի ու գիտակցության մոդելավորման արդյունքում ինչ-որ ժամանակ անց կարող է փոխարինել գերմարդկային կարողություններով ու գերգիտակցությամբ օժտված «կատարյալ

---

[1] **Кутырёв В.А**. Естественное и искусственное: борьба миров. Директ-Медиа, М., 2014, с. 3.

[2] Տե՛ս **Энтин М.Л., Энтина Е.Г., Тнэлм Н.И.** В поисках партнерских отношений – XI. Россия и Европейский Союз в 2019-первой половине 2020 года. М., Зебра -Е, 2020, էջ 234:

մարդը»[3]: Գաղափարն այնքան էլ անհավանական չէ, եթե հաշվի առնենք, որ ժամանակակից արհեստական բանականությունն արդեն իսկ նվաճել է «մարդ-գործակալի» կամ գործունեության սուբյեկտի կարգավիճակ, և նրա առաջարկած առցանց թարգմանիչները, թվային օգնականները կամ խելացի տների համակարգերը կարող են դիտարկվել որպես գործունեության լիարժեք գործակալներ, որոնք ձևավորում են սեփական հաղորդակցական ցանցերը, ենթարկվում են որոշակի էվոլուցիոն փոփոխությունների, ակտիվորեն մասնակցում են մարդու կյանքի կազմակերպմանը և նաև կարող են ազդել նրա սովորույթների ձևավորման վրա: Արդյունքում, մարդու նմանությամբ արհեստական ինտելեկտի ստեղծման մասին երբեմնի երազանքները աստիճանաբար վերածվում են անհերքելի իրողության, և «արհեստականի» ու «բնականի» հարաբերության վերաբերյալ վերացական խնդիրները ձեռք են բերում միանգամայն շոշափելի իմաստ ու նշանակություն: «Տեղեկատվական տեխնոլոգիաների և կենսատեխնոլոգիաների միաձուլումը շուտով կարող է միլիարդավոր մարդկանց արտամղել աշխատանքի շուկայից՝ զրկելով նրանց ինչպես ազատությունից, այնպես էլ հավասարությունից: Մեծածավալ տվյալների շտեմարանին խարսխված ալգորիթմները կարող են ստեղծել թվային բռնապետություններ, որոնցում ամբողջ իշխանությունը կենտրոնացած է լինելու փոքրիկ վերնախավի ձեռքերում, մինչդեռ մարդկանց մեծամասնությունը տառապելու է ոչ թե շահագործումից, այլ վատթարագույն բանից՝ անպիտանությունից...»[4]: Մասնավորապես, եթե XX դարում կյանքի առաջատար ուժեր էին համարվում հիմնականում ստեղծագործ մտավորականության ներկայացուցիչները, ապա XXI դարում առաջատար ուժ է դառնում գիտական հետազոտություններ, արվեստ ու մշակույթ ստեղծող արհեստական ինտելեկտը, որն արդեն իսկ զգալի դեր է խաղում մարդու ինքնադրսևորման, առողջապահության, արտադրողականության բարձրացման և կյանքի առաջադրած այլևայլ բարդ խնդիրների լուծման ասպարեզում՝ աստիճանաբար ստեղծելով «հետմարդկային» մի հասարակություն, որտեղ մարդկանց կողքին ու նրանց հետ միասին գոյություն կունենան «թվային էակներ»[5]:

«Արհեստական ինտելեկտ» ասվածը նախևառաջ օգտագործվում է այն ծրագրային արտադրանքների և տեխնոլոգիաների ամբողջությունը նշանակելու համար, որոնք ունակ են մարդու գործունեության տարբեր ոլորտներում իրականացնելու բարդ ստեղծագործական գործառույթներ: Այս իմաստով արհեստական ինտելեկտը ոչ այլ ինչ է, քան աշխատանքային հերթական գործիք՝ կատարելագործված փայտե բրիչ, որի նշանակությունն այն է, որ ծառայի մար-

---

[3] Տե՛ս **Сергеев С. Ф**. Образование в техногенном мире: гуманизм и трансгуманизм. //Школьные технологии, № 1, 2018, էջ 25–26:

[4] **Միրզոյան Վ. Ա.** Հանրաբանական դիտարկումներ / Թարգմանությունների ժողովածու, Եր., Մեկնարկ, 2024, էջ 346:

[5] **Агамбен Дж.** Homo sacer. Суверенная власть и голая жизнь. М., «Европа», 2011, с. 231.

դուն, թեթևացնի նրա աշխատանքը՝ նպատակ ունենալով արդյունավետ օգտագործել ազատ ժամանակն ու ստեղծագործական էներգիան: Այլ կերպ ասած՝ արհեստական ինտելեկտը առաջացել է մարդկային մտքի պահանջներին ի պատասխան, և այդ բառակապակցության մեջ «արհեստական» բնութագրիչը ունի պայմանական բնույթ, քանի որ նույն կերպ արհեստական կարելի է համարել նաև յուրաքանչյուր մարդու բանականությունը, այն, ինչ ձևավորվում է դաստիարակության, կրթության և սոցիալական միջավայրի ազդեցության ներքո: Այլ կերպ ասած՝ մարդու բանականությունը ևս իր էությամբ մշակվող, հենց մարդու կողմից արհեստականորեն ստեղծված բանականություն է, քանի որ այն երբեք չի տրվում որպես պատրաստի ու միանվագ կառույց: Պարզապես մարդը իր զարգացման յուրաքանչյուր աստիճանը վերածում է սովորական, առօրյա, կրկնվող երևույթի, ինչի արդյունքում արհեստականը նրա համար դառնում է բնական: Արհեստական ինտելեկտի երևույթը պետք է դիտարկել որպես նյութի և էներգիայի էվոլյուցիայի հերթական վերընթաց փուլի սկիզբ, որի գագաթնակետը հենց բացառապես կենսաբանական տեսակի մեջ տեղակայված բանականության էվոլյուցիան է, որտեղ մարդը խաղում է միջանկյալ օղակի դեր: Ակնառու է, որ արհեստական ինտելեկտը արտաբնական կազմավորում է, և նրա արհեստականությունը միաժամանակ կանխորոշում է ինչպես նրա առավելությունները, այնպես էլ այն սահմանափակումները, որոնք թույլ չեն տալիս նրան դառնալ սուբյեկտ, անձ կամ անհատականություն: Առավել ևս, որ գոյություն ունի ևս մի պատրանք, այսպես կոչված «մտածողության առօրյա մի սովորույթ, ըստ որի մենք, որպես կանոն, գիտակցական ակտերը տեղավորում ենք մարդու սոցիալական ու կենսաբանական ուրվագծերի շրջանակներում: Մինչդեռ հնարավոր է, որ ինչ-որ առաջնային իմաստով գիտակցությունը էապես տեղակայված է անհատի սահմաններից դուրս և ներկայացնում է տարածական մի կազմություն»[6]: Մարդու՝ մարմինների և առարկաների միջոցով մտածելու սովորույթը խստորեն տարանջատում է օբյեկտիվը և սուբյեկտիվը և ձևավորում է մի պատկերացում, ըստ որի՝ գոյություն ունի ինչ-որ օբյեկտիվ ու ճշմարիտ գիտելիք, որը զերծ է մարդկային սուբյեկտիվությունից: Այս պայմաններում մարդը կարող է կորցնել ճանաչողական սեփական կարողությունների նկատմամբ հավատը և ապավինել արհեստական ինտելեկտին: Բայց այս դեպքում անհետանում է ճանաչող գործընթացի մետաֆիզիկան, այն, որ ճանաչող մարդը գիտակցում է իր չիմացությունը: Այս ««չիմացածի մասին իմացությունը» մարդու հատուկ ճանաչողական գործընթացի անհրաժեշտ բաղադրիչն է»[7]: Եթե արհեստական ինտելեկտի համար այսպիսի գիտելիքը ավելորդ և ոչ արդյունավետ է, ապա մարդու համար

---

[6] **Мамардашвили М. К.** Сознание – это парадоксальность, к которой невозможно привыкнуть: Как я понимаю философию. М., Прогресс, 1990, с. 73.

[7] **Терещенко Н.А**. Социальная философия после «смерти социального». Казань: Казан. ун-т., 2011, с. 315.

այն կենսական նշանակություն ունի, որովհետև հենց այդ չիմացածի մեջ է բացվում և՛ ճանաչման, և՛ ամբողջ կյանքի հեռանկարը: Իսկ դա նշանակում է, որ այսօր ոչ թե ապագա մեքենաների ապստամբության կամ արհեստական ինտելեկտի հնարավոր «հեղափոխության» կանխման կամ չեզոքացման խնդիրն է արդիական, որքան իր իսկ գիտակցության հետ մարդու երկխոսության և հաղորդակցման, աշխարհում մարդու ներկայության հորիզոնի ընդլայնման հարցը:

Այս առնչությամբ հարց է ծագում, թե այս նոր, այսպես կոչված, ««հետմարդկային» աշխարհում կենսաբանական ու սոցիալական էակ հանդիսացող մարդու էությունը արդյո՞ք կմնա նույնը, թե՞ այն կտեղափոխվի թվային տեխնոլոգիական սարքերի մեջ և այլևս չի պատկանի մարդուն, «արդյո՞ք «կենդանի մարմինը» կմնա որպես կենսակառույց, թե՞ կդառնա մնացորդն այն բանի, ինչը երբեմն անվանվում էր «մարդկային էակ»»[8]: Խնդիրն այն է, որ թվային տեխնոլոգիաների միջոցով ձևավորվող այս նոր աշխարհում ժամանակն ու տարածությունը ձուլվում են միևնույն «կետում» և ստեղծում են «վիրտուալ» մի իրականություն, որը գոյություն ունի թվային միջավայրում և թվերի միջոցով, և որի ներպարունակությունը կա միայն «այստեղ ու հիմա»[9]: Մի հասարակություն, որը միայն մտքի միջոցով կառուցված, նյութականացված կամ օբյեկտիվացված մարդկային կեցությունն է, որտեղ էլ հենց բնակվում է «հետմարդը»: Դիտարկված այդ նոր իրավիճակի առանձնահատկությունն այն է, որ մարդու կենսաբանական մարմնին փոխարինում է «մեքենաողնաշարավոր» կենսաոռբոտը, որի կենսագործունեության ոլորտը միայն արհեստական ինտելեկտին հասանելի թվային աշխարհն է: Պատկերավոր ասած՝ հետմարդկային կյանքը կարելի է դիտարկել որպես արտաքին ազդակներին չարձագանքող վիճակում «սահմանախախտ» մի գոյություն, երբ մարմինը շարունակում է գործել միայն այն պատճառով, որ նրա փոխարեն կենսագործառույթները իրականացնում են տեխնոլոգիաները՝ մարմինը վերածելով կենսաբանական կաղապարի: Տեխնոլոգիաները ընդլայնում են հետմարդկային մարմնի հնարավորությունները, և դրանց որակի բարելավումը շարունակական գործընթաց է: Եթե այդպես է, ապա հարց է առաջանում՝ հնարավո՞րէ արդյոք հասնել մեր հետմարդկային «Ես»-ին, եթե մարդկությունը մի կողմից մնում է մտավոր ինտուիտիվ սուբյեկտիվ երևակայության և մյուս կողմից՝ արտաքին օբյեկտիվացված թվային միջավայրի միջակայքում: Արդյո՞ք կենդանացած մարմնում պահպանվում է որևէ մնացորդ, որը հնարավորություն է տալիս էակին ինքն իրեն ճանաչելու, իրեն «ես» կոչելու և հաստատելու այդ «ես»-ի գոյությունը:

Այլ կերպ ասած՝ արդյո՞ք հետմարդու պարագայում շարունակում է արդիական մնալ անհատական և սոցիալական մակարդակներում դրսևորվող

---

[8] Տե՛ս **Ваттимо Дж.** Прозрачное общество. М., Логос, 2002, էջ 11:

[9] Տե՛ս **Брайдотти Р**. Постчеловек. М., Институт Гайдара, 2021, էջ 378:

մտածողության հարցը, եթե հաշվի առնենք նաև, որ բանականության էվոլյուցիոն զարգացումը չի կարող սահմանափակվել միայն մարդու կենսաբանական էվոլյուցիայով և կարող է շարունակություն ունենալ մի այլ ձևով և մի այլ կրողի վրա: Ամենահավանական սցենարի համաձայն՝ բանականության նոր կրողներ կարող են լինել համակարգչային-տեղեկատվական այն բարդ համակարգերը, որոնք կունենան ինքնուսուցման ունակություն: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ ներկայումս գործող այն ծրագրերն ու տեխնոլոգիաները, որոնք ընդհանրական անվանվում են «արհեստական ինտելեկտ», որպես կանոն, ինտեգրված չեն մեկ միասնական համակարգի մեջ և գործում են մեկուսացված՝ կատարելով սահմանափակ և մասնագիտացված գործառույթներ, ապա կարելի է ասել, որ նման կերպ գործառող արհեստական ինտելեկտը դեռևս բանականության լիարժեք կրող չէ, չունի ինքնագիտակցություն, սուբյեկտիվության զգացում կամ սեփական շահեր: «Սակայն լիովին հնարավոր է, որ տեխնոլոգիական կատարելության մի որոշակի կետում արհեստական ինտելեկտը կհասնի բարդության որակապես նոր մակարդակի և կվերածվի բանականության (կամ գերբանականության), որն իր ներուժով կգերազանցի մարդկության կոլեկտիվ բանականությանը»[10]: Այս համատեքստում լիովին օրինաչափ կարող է հնչել այն հարցը, թե ի՞նչ բնութագրերով օժտված կլինի արհեստական ինտելեկտը, երբ ձեռք բերի ինքնության, գիտակցության և գերունակության հատկանիշներ, և ի՞նչ ազդեցություն կունենա մարդկության ճակատագրի վրա: Իհարկե, արհեստական ինտելեկտի ձևավորման ակունքներում կանգնած է մարդը, ով իր ընկալումներով ծրագրավորված կձևավորի դրա ելակետային կոդերը՝ վարքային և գնահատողական ալգորիթմները, աշխարհայացքը, հույզերը, զգացմունքները, նպատակներն ու արժեքները, սահմանափակումները, անհատական հատկանիշները և այլն: Բայց այս դեպքում էլ հարց է առաջանում, թե ի՞նչ կոնկրետ ելակետային կոդեր են դրվելու արհեստական ինտելեկտի հիմքում, և ո՞վ է դրանք սահմանելու: Արդյո՞ք այդ նոր «անհատը» կլինի այնպիսին, ինչպիսին մենք կցանկանանք: Ի՞նչ ուղի կընտրի նա իր անհատական զարգացման ընթացքում, կցանկանա արդյո՞ք մնալ մարդկային կամքի և շահերի վերահսկողության ներքո:

Այս հարցադրումները ստիպում են կանխատեսել հնարավոր մի քանի ձևաչափեր այն փոխհարաբերությունների, որոնք կարող են ձևավորվել արհեստական ինտելեկտի և մարդու միջև: Մասնավորապես.

- արհեստական ինտելեկտը կարող է մարդու մեջ տեսնել վերացման արժանի թշնամու, մրցակցի կամ ավելորդ օղակի,
- արհեստական ինտելեկտը կարող է կորցնել հետաքրքրությունը մարդու նկատմամբ՝ դիտարկելով նրան որպես իր էվոլյուցիոն խնդիրները լուծած և այժմ անարդյունավետ կազմավորում: Այս պարագայում արհեստական և մարդկային

[10] **Eden A. H., Jams M. H.** Singularity Hypotheses: A Scientific and Philosophical Assessment, Springer Heidelberg New York Dordecht London, 2013, p. 1-2.

ինտելեկտների հետագա զարգացումները կընթանան զուգահեռ ուղեգծերով, ինչպես այսօր զուգահեռաբար զարգանում են մարդու և, ասենք, մրջյունի կենսաբանական էվոլյուցիաները՝ առանց փոխհատվող զարգացումների,

- զարգացման որոշակի փուլում մարդկային և արհեստական ինտելեկտների միջև կձևավորվի ինտելեկտուալ անդունդ, որը կանցնի առանցքային սահմանագիծը, և որից հետո արհեստական ինտելեկտի գոյաբանությունը կհաղթահարի մարդկային ընկալունակության սահմանները,

- մարդու և արհեստական ինտելեկտի հարաբերությունները կարող են ունենալ խաղաղ ու ներդաշնակ բնույթ, և արհեստական ինտելեկտը կարող է հոգալ մարդու մասին այնպես, ինչպես մարդն է հոգում մոլորակի և նրա բնակիչների մասին: Հնարավոր է նաև, որ մարդն ու արհեստական ինտելեկտը ձևավորեն միասնական մոլորակային ինտելեկտի բաղկացուցիչ մասեր. ինչպես այսօր արհեստական ինտելեկտը հանդես է գալիս որպես մարդու ինտելեկտի համալրում, և այդ համակարգում մարդը կարող է ստանձնել տեղեկատվական համակարգերի սպասարկման գործառույթ կամ այնպիսի հոգեկան ռեսուրսի մատակարար դառնալ (բնական զգացմունքներ, հույզեր, արժեքային դատողություններ, ստեղծագործելու ունակություններ և այլն), որոնք արհեստական ինտելեկտը ի վիճակի չէ արտադրել: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել այն հավանականությունը, որ մոլորակի վրա միաժամանակ կարող են առաջանալ արհեստական մի քանի անկախ ինտելեկտներ, որոնք կհիմնեն գիտատեխնիկական խոշոր կենտրոններ՝ դառնալով գիտական և տեխնոլոգիական առաջընթացի հիմնական շարժիչ ուժերը ողջ մոլորակի վրա:

Արհեստական, պատրանքային աշխարհը՝ լինի արվեստի թե կրոնի տեսքով, մշտապես ուղեկցել է մարդուն, ներդրվել է բնական իրերի կարգի մեջ, սակայն քաղաքակրթության զարգացման ընթացքում էականորեն վերափոխվել և հիմնականում զարգացել է գոյության նյութական խնդիրների լուծման ուղղությամբ: Բայց ահա նորագույն ու բարդ տեխնոլոգիաների հայտնագործումից ի վեր ստեղծվել և շարունակում են ստեղծվել «չծանրաբեռնված» գոյության նոր պայմաններ՝ նպաստելով արհեստական ու վիրտուալ ոլորտի ընդլայնմանը՝ անկախ դրա արտահայտման ձևերից: Այս առումով կարող ենք ասել, որ վիրտուալ իրականությունը, որի մասին հաճախ խոսվում է տարբեր համատեքստերում, մարդու արտացոլած նշանային իրականության մի բնութագիրն է և արտահայտում է մարդաբանական տեսակի՝ առընթեր աշխատանք կատարելու, հասարակության մեջ բնակվելու և այլ ունակությունները: Բայց եթե «նշանային տիեզերքը միշտ էլ հանդես է եկել որպես լեզվի, դիցաբանության, արվեստի տիեզերք»[11], ապա ժամանակակից դարաշրջանում նույն այդ պահանջները հանգեցնում են վիրտուալ ձևերի ստեղծմանը, ինչը ինքնին վկայում է մարդու՝ արհեստական աշխարհներ կառուցելու, դրանց մեջ մտնելու, դրանք բնական ընկալելու պահանջմունքի և դրանց ուղեկցող հավատքի,

[11] **Кассирер Э**. Избранное. Опыт о человеке. М., Гардарика, 1998, 471 с.

պատրանքների ու դիցաբանությունների բարդ խաղերի համատեքստի մասին: Հարկ է նկատել, որ վիրտուալ իրականության և «արհեստական բանականության» գոյությունը հնարավոր է դարձել ինչպես համակարգչային մոդելավորման տեխնոլոգիաների ծագման ու զարգացման, այնպես էլ մարդկային (հաճախ՝ ամբողջ մարդկության) հետաքրքրությունների ու պահանջմունքների արդյունքում: «Երբ մենք գիտակցում ենք կենսատեխնոլոգիայի, ռոբոտաշինության, կիբերտեխնոլոգիայի և արհեստական ինտելեկտի զորությունը, ավելին՝ դրանց ներուժը գալիք տասնամյակներում, մենք չենք կարող խուսափել այդ հզորության չարաշահման համար անհանգստությունից: Տարեգրության մեջ հիշատակվում են դեպքեր, երբ «քաղաքակրթությունները» փլուզվել են և նույնիսկ չքացել: Մեր աշխարհն այնքան փոխկապակցված է, որ քիչ է հավանական, թե մի որևէ տարածաշրջանին պատուհասած աղետի հետևանքները չտարածվեն ամբողջ աշխարհում»[12]:

Արդյո՞ք այս ամենը վտանգավոր է, և ի՞նչ չափով է «արհեստական ինտելեկտը» մնում զվարճանքի ոլորտում, իսկ ի՞նչ չափով է հավակնում դառնալ «բնականի» ներակատար, այսինքն՝ գիտակցության մեջ ի՞նչ ձևախեղումներ կարող են լինել, որոնք այս համատեքստում կարող են սպառնալ մարդու բնականոն գոյությանը: Այս հարցերի լուծման համընդհանուր ճանապարհը մարդկային գիտակցության մշտապես փոխազդող երկու սահմանների՝ «իմացության» և «չիմացության» հատման կետում է: Խնդիրն այն է, թե արդյո՞ք մարդը լրջորեն հավատում է, որ համակարգչային տեխնոլոգիաները ի զորու են ստեղծելու բանաստեղծություններ, հումոր, «կենդանացնել» կյանքից հեռացած գրողին կամ երգչին: «Բանականությունը» հնարավորություն է տալիս տարբերակելու իրական, կենդանի մարդուն սոցիալական ցանցում եղած նրա կերպարից, իրադարձությունները՝ լրատվական արտացոլումներից, բնական հույզերը՝ այսպես կոչված «ամերիկյան ժպիտից» և այլն: Այլ կերպ ասած՝ «արհեստական ինտելեկտի» աշխարհում մշակույթը ներկայացնողի ներկայության և մշակույթը ներկայացնողի բացակայության խնդիրը առանձնահատուկ կարևորություն է ստանում, քանի որ առաջինը, պատկերավոր ասած, մարմնի մշակույթ է, իսկ երկրորդը՝ գիտակցության: Առաջին դեպքում մարմինը ներառված է ֆիզիկական աշխարհում և ունի ներքին իմաստ, մինչդեռ երկրորդ դեպքում սուբյեկտը գտնվում է ֆիզիկական աշխարհից դուրս կամ առնվազն զատված է նրանից[13]: Մեկ այլ կարևոր հանգամանք ևս: Ի տարբերություն արհեստական ինտելեկտի՝ մարդու կողմից տարածության ու ժամանակի «ընտելացումը» կատարվում է պատկերային համակարգերի միջոցով[14], որոնք օժտված են ինքնուրույն ակտիվությամբ ու ինքնուրույն կյանքով, ներշնչող ու

---

[12] **Միրզոյան Վ. Ա.** նշվ. աշխ., էջ 390-391:

[13] Տե՛ս **Гумбрехт Х. У.** Производство присутствия: чего не может передать значение. М., Новое литературное обозрение, 2006, էջ 86-92:

[14] Տե՛ս **Leroi-Gourhan A.** Gesture and Speech. Cambridge, MA: October, 1993, 286 էջ:

պատժող ուժով, և մարդը մշտապես գտնվում է նրանց առեղծվածային ազդեցության ներքո: Պատկերի ստեղծումը ենթադրում է որևէ բան պատկերի նման տեսնելու կարողություն: Տեսնել որևէ բան որպես պատկեր, այլ ոչ թե պարզապես որպես առարկա, նշանակում է նաև կարողանալ այն ստեղծել: «Նկարիչը տեսնում է ավելի շատ, քան ոչ նկարիչը ոչ թե այն պատճառով, որ նա ունի ավելի լավ տեսողություն, այլ որովհետև նա կատարում է նկարչի աշխատանքը, այսինքն՝ վերափոխում է այն, ինչ տեսնում է, և այն, ինչ ստեղծում է, նաև ճանաչում է»[15]: Կարելի է արդյո՞ք ենթադրել, որ արհեստական ինտելեկտի նախագծի հաջող իրականացման դեպքում այն ևս կկարողանա ստեղծել կարգավորող սեփական համակարգ և այդ կերպ հաստատել իր սուբյեկտիվությունը: Խնդիրն այն է, որ գիտակցությունը՝ որպես կարգավորող գործոն, տարանջատում է արտաքին և ներքին աշխարհը. օրինակ՝ մեդիտացիայի կամ հիպնոսի ժամանակ գիտակցությունը չի զբաղվում տեղեկատվության մշակմամբ[16]: Այդ դեպքում, եթե արհեստական ինտելեկտը նույնպես ունակ է ինքնազննման, ապա ի՞նչ կերպ այն պետք է դրսևորվի: Եթե նրա ստեղծագործական ունակությունները հասել են էլեկտրոնային երաժշտություն ստեղծելու մակարդակի, ապա հնարավո՞ր է արդյոք էլեկտրոնային պոեզիա, կամ՝ անցնելով տեքստի և հիպերտեքստի խնդրին՝ էլեկտրոնային փիլիսոփայություն: Եթե արհեստական ինտելեկտը անկարող է ստեղծել ինքնագիտակցության ձևեր, ապա դրա հնարավորությունների սահմանը մնում է մշակույթի իմիտացիան, ինչը «հակադարձ արտացոլման մեջ հանգեցնում է գիտակցության մեմետիկ տարբերակի կամ մեմ-էֆեկտների՝ որպես մշակութային իմիտացիայի գենետիկորեն ժառանգվող մեխանիզմների ձևավորմանը»[17]:

Դրա հետ կապված՝ մեր առջև ծառանում է արհեստական ինտելեկտի՝ որպես արդյունաբերական մեքենայի մասի խնդիրը, ինչը ոչ թե գիտակցության, այլ որոնողական-տրամաբանական գործառույթների ձևավորման խնդիր է: «Մեզ հարկ է ունենալ ընդգրկուն, հիմնավոր և հեռահար մտածելակերպ՝ հենվելով քսանմեկերորդ դարի տեխնոլոգիաների վրա, բայց կողմնորոշվելով այն արժեքներով, որոնք գիտությունը միայնակ ապահովել չի կարող»[18]: Այն համակարգի ներսում գործող խնդիր է և ունակ է մարդուն շրջապատելու նրա հետաքրքրություններին համապատասխանող այնպիսի տեղեկատվական դաշտով, ինչի շնորհիվ մարդը դուրս է գալիս իրականությունից և ներառվում մոդելավորված պրոյեկցիայի մեջ: Հաշվի առնելով այս իրողությունը՝ Ժ. Դելյոզը նկատում է, որ ժամանակակից արդյունաբերական հասարակությունը

---

[15] **Jonas H.** Homo pictor and differentia of man. Social Research.Vol. 29., № 2 (S.1962), p. 201–220:

[16] Տե՛ս **Мигуренко Р. А.** Человеческие компетенции и искусственный интеллект, Изв. Томского политех. университета. Экономика: Философия, социология и культурология. 2010. Т. 317. № 6, էջ 87:

[17] **Мигуренко Р. А**. Постнеклассические стратегии решения проблемы сознания и здравый смысл. Томск. политех. унив. Эконом.,философия, социология и культурология., 2012. № 6, с. 161.

[18] **Միրզոյան Վ. Ա.** նշվ. աշխ, էջ 397:

«արտադրում» է նևրոտիկ անհատներ, քանի որ նրանց գիտակցությունը ենթարկվում է ապաանհատականացման[19]: Եթե իրական կյանքում մարդը հանդես է գալիս որպես սուբյեկտ, որի պահանջմունքները նախորդում են ցանկությանը, ապա վիրտուալ կյանքում մարդու ցանկությունները ոչ թե բխում են պահանջմունքից, այլ այն բանից, ինչը մասնագետներն անվանում են օրգաններ չունեցող մարմնի «ցանկությունների մեքենա»[20]:

Այսպիսով, այսօր արդեն կարելի է ասել, որ արհեստական ինտելեկտը դեռևս որոշակի տեսակի խնդիրների լուծման համար ստեղծված ծրագրային համակարգ է՝ օժտված ինքնաուսուցվող ալգորիթմով, որը կարող է ստեղծել նոր ալգորիթմներ կամ փոփոխել ինքն իրեն: Մարդկային բանականությանը համարժեք բանականության ստեղծումը մասնագետների մեծ մասը դեռևս համարում է անհնարին, քանի որ եղած տեխնիկական միջոցներով հնարավոր չէ վերարտադրել մտածողության և ճանաչողության ամբողջ գործընթացը իր ամբողջականության մեջ՝ ներառյալ զգայական, կամային և ինտուիտիվ բաղադրիչները, ինչպես նաև նպատակադրման կամքով պայմանավորված գործընթացները:

Հաջորդ հակափաստարկը վերաբերում է այն հանգամանքին, որ ուղեղը՝ որպես հոգեկան պրոցեսների ենթաշերտ, մարդու մարմնի մաս է: Այս «մարմնավորումը» ուղեղի՝ ոչ միայն ֆիզիոլոգիական, այլև շրջապատող աշխարհի հետ նրա օրգանական փոխհարաբերության ձևն է: Ուստի մարդուն համարժեք արհեստական ինտելեկտ ստեղծելու համար անհրաժեշտ է ոչ միայն մարդու մարմնի նմանակություն, այլև աշխարհի պատկերի վերարտադրում: Եվ որովհետև գիտակցության ծագումն ու զարգացումը անքակտելիորեն կապված են սոցիալականության ձևավորման ու զարգացման հետ, ապա կարելի է ենթադրել, որ մարդկային բանականությանը համարժեք արհեստական ինտելեկտի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ լիովին կձևավորվի ոչ մարդկային սոցիալական միջավայր և մարդկանցից սկզբունքորեն տարբերվող սոցիալական նոր սուբյեկտ:

Այս համատեքստում պրոֆ. Վ. Միրզոյանը նշում է. «Կենսատեխնոլոգիական և տեղեկատվական հեղափոխությունները մեզ հնարավորություն են ընձեռելու վերահսկել մեր ներաշխարհը, մեզ ընդունակ են դարձնելու նախագծել և ուղղորդել մեր իսկ կյանքը: Մենք կսովորենք ծրագրավորել մեր ուղեղի աշխատանքը, երկարաձգել կյանքը և սպանել մտքերը սեփական հայեցողությամբ: Ոչ ոք չգիտի, թե դա ինչ հետևանքների է հանգեցնելու: Մարդիկ միշտ ավելի լավ կարողացել են գործիքներ հորինել, քան դրանք խելամիտ կերպով գործադրել»[21]:

---

[19] Տե՛ս **Делѐз, Ж.** Капитализм и шизофрения. Екатеринбург, Рипол классик, т.1, 2025, էջ 3:

[20] Տե՛ս **Стоян, А. А.** Роль "машин желания" в обществе массового человека. Вестник ЛГУ, № 1, 2018, էջ 64:

[21] **Միրզոյան Վ. Ա.**, նշվ. աշխ., էջ 354:

**НЕЛЛИ АЛАВЕРЯН** – ***Проблема искусственного интеллекта в экзистенциальной онтологии.*** – В современном виртуальном и цифровизирующемся мире вопросы соотнесения развития искусственного интеллекта и экзистенциальной онтологии человека приобрели как теоретическое, так и практическое новое звучание, требуя особого философского и социокультурного осмысления. Учитывая эту реальность и обращаясь к вызовам, стоящим перед современным обществом, в статье особое внимание уделяется вопросам сущности, развития и функций искусственного интеллекта, а также вызванным им проблемам и потенциальным угрозам.
Рассматриваются перспективы возможного эффективного взаимодействия человека с искусственным интеллектом, а также раскрывается потенциал человеко-машинных систем в решении реальных задач общества. Проблема заключается в том, что проникновение искусственного интеллекта почти во все сферы нашей жизни, усиление его роли в цифровой экономике, бизнесе и других областях, а также формирование виртуальной реальности и постчеловеческой эпохи требуют нового осмысления места и роли новейших технологий в человеческом существовании.
Кроме того, интерес к искусственному интеллекту объясняется не только тем, что современного человека привлекают формы технологических инноваций, связанные с усовершенствованием социально-экономической жизни, но и тем, что данный феномен имеет игровые проявления и затрагивает вопросы организации досуга и свободного времени в потребительском обществе.

**Ключевые слова:** *искусственный интеллект, виртуальная реальность, техногенное общество, разум, сознание, цифровые технологии, биотехнологическая революция*

**NELLI ALAVERDYAN** – ***The Problem of Artificial Intelligence in the Context of Existential Ontology.*** – In today’s virtual and increasingly digitalized world, the questions surrounding the relationship between the development of artificial intelligence and the existential ontology of the human being have acquired new theoretical and practical significance. These issues require focused philosophical and socio-cultural reflection.Taking this reality into account and addressing the challenges facing contemporary society, the article places special emphasis on the fundamental questions concerning the nature, development, and functions of artificial intelligence, as well as the problems and potential risks it poses. Attention is also given to the prospects for effective human–AI interaction and the potential of human–machine systems to contribute to solving real societal issues.The core issue lies in the fact that the increasing penetration of artificial intelligence into nearly all spheres of life—its growing role in the digital economy, business, and other domains—as well as the emergence of virtual reality and the post-human era, demand a rethinking of the place and role of cutting-edge technologies in human life.Furthermore, the interest in artificial intelligence is driven not only by the modern human’s attraction to technological innovations that aim to improve socio-economic life, but also by the fact that AI exhibits playful dimensions and is tied to questions concerning the organization of leisure and entertainment in consumer society.

**Key words:** *artificial intelligence, virtual reality, technogenic society, reason, consciousness, digital technologies, biotechnological revolution*

## Գրականության ցանկ

Միրզոյան Վ. Ա. Հանրաբանական դիտարկումներ / Թարգմանությունների ժողովածու, Եր., Մեկնարկ, 2024 , 400 էջ: (Mirzoyan V. A., Hanrabanakan ditarkumner/ targmanutyunneri zhoxovatsu, Yer., Meknark, 2024, 400p.):

Агамбен Дж. Homo sacer. Суверенная власть и голая жизнь. М., «Европа», 2011, 256 с. (Agamben Dzh. Homo sacer. Suverennaya vlast' i golaya zhizn'. M., «Yevropa», 2011, 256 s.).

Брайдотти Р. Постчеловек. М., Института Гайдара, 2021. 408 с. (Braydotti R. Postchelovek. M., Instituta Gaydara, 2021. 408 s.).

Ваттимо Дж. Прозрачное общество. М., Логос, 2002, 128 с. (Vattimo Dzh. Prozrachnoye obshestvo. M., Logos, 2002, 128 s.).

Гумбрехт Х. У. Производство присутствия: чего не может передать значение.М., Новое литературное обозрение, 2006, 184 с. (Gumbrekht KH. U. Proizvodstvo prisutstviya: chego ne mozhet peredat' znacheniye. M., Novoye literaturnoye obozreniye, 2006, 184 s.).
Делѐз Ж. Капитализм и шизофрения. Екатеринбург, Рипол классик, т.1, 2025, 512 с. (Delèz ZH. Kapitalizm i shizofreniya. Yekaterinburg, Ripol klassik, t.1, 2025, 512 s.) .
Кассирер Э. Избранное. Опыт о человеке. М., Гардарика, 1998, 794 с. (Kassirer E. Izbrannoye. Opyt o cheloveke. M., Gardarika, 1998, 794 s.).
Кутырёв В. А. Естественное и искусственное: борьба миров. Директ-Медиа, М., 2014, 270 с. (Kutyrov V. A. Yestestvennoye i iskusstvennoye: bor'ba mirov. Direkt-Media, M., 2014, 270 s.)
Мамардашвили М. К. Сознание – это парадоксальность, к которой невозможно привыкнуть: Как я понимаю философию: Москва: Прогресс, 1990. 199 с. (Mamardashvili M. K. Soznaniye – eto paradoksal'nost', k kotoroy nevozmozhno privyknut': Kak ya ponimayu filosofiyu: Moskva: Progress, 1990. 199 s.).
Мигуренко Р. А. Человеческие компетенции и искусственный интеллект, Изв.Томского политех. университета. Экономика: Философия, социология и культурология. 2010. Т. 317. № 6, 85-89 с. (Migurenko R. A. Chelovecheskiye kompetentsii i iskusstvennyy intellekt, Izv.Tomskogo politekh. universiteta. Ekonomika: filosofiya, sotsiologiya i kul'turologiya. 2010. T. 317. № 6, 85-89 s.).
Мигуренко Р. А. Постнеклассические стратегии решения проблемы сознания и здравый смысл. Томск.политех. унив. Эконом., Философия, социология и культурология., 2012. № 6, 157-161 с. (Migurenko R. A. Postneklassicheskiye strategii resheniya problemy soznaniya i zdravyy smysl. Tomsk.politekh. univ. Ekonom., filosofiya, sotsiologiya i kul'turologiya., 2012. № 6, 157-161 s.).
Сергеев С. Ф. Образование в техногенном мире: гуманизм и трансгуманизм. Школьные технологии. , № 1, 2018. 22-28 с. (Sergeyev S. F. Obrazovaniye v tekhnogennom mire: gumanizm i transgumanizm. Shkol'nyye tekhnologii. , № 1, 2018. 22-28 s.).
Стоян А. А. Роль "машин желания" в обществе массового человека. Вестник ЛГУ, № 1, 2018, 56-68 с. (Stoyan A. A. Rol' "mashin zhelaniya" v obshchestve massovogo cheloveka. Vestnik LGU, № 1, 2018, 56-68 s.).
Терещенко Н.А. Социальная философия после «смерти социального»: Казань: Казан. ун-т., 2011, 368 с. (Tereshchenko N.A. Sotsial'naya filosofiya posle «smerti sotsial'nogo»: Kazan': Kazan. un-t., 2011, 368 s.).
Энтин М. Л., Энтина Е. Г., Тнэлм Н. И.. В поисках партнерских отношений – XI.Росия и Европейский Союз в 2019-первой половине 2020 года. М., Зебра -Е, 2020, 592 с. (Entin M. L., Entina Ye. G., Tnelm N. I.. V poiskakh partnerskikh otnosheniĭ – XI.Rosiya i Yevropeyskiy Soyuz v 2019-pervoy polovine 2020 goda. M., Zebra -Ye, 2020, 592 s.).
Eden A. H., Jams M. H. Singularity Hypotheses: A Scientific and Philosophical Assessment, Springer Heidelberg New York Dordecht London, 2013.1-12.
Jonas H. Homo pictor and differentia of man. Social Research.Vol. 29., № 2 (S.1962), 201–220p.
Leroi-Gourhan, A. Gesture and Speech. Cambridge, MA: October, 1993, 451 p.

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 2(47), հունիս, 49-63
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.2.049

# ИССЛЕДОВАНИЕ ДИНАМИКИ АДАПТИВНЫХ МЕХАНИЗМОВ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ДЛИТЕЛЬНОГО ВООРУЖЕННОГО КОНФЛИКТА

**ГРАНТ АВАНЕСЯН, АНАСТАСИЯ ШУМАРОВА***
***Ереванский государственный университет***

В представленной работе рассматриваются теоретико-методологические основания изучения динамики адаптивных механизмов личности в условиях длительного вооружённого конфликта. Актуальность темы обусловлена необходимостью осмысления механизмов психологической адаптации при продолжительном воздействии экстремальных факторов, выходящих за рамки классического понимания травматической ситуации. Исследование опирается на системный и субъектно-деятельностный подходы, а также на современные концепции, расширяющие понимание адаптации, включая теории жизнестойкости, непрерывного травматического стресса (CTS) и базисных убеждений. В данной работе адаптивные механизмы личности рассматриваются во взаимосвязи с внутренними (психическое состояние, базисные убеждения) и внешними (характеристики стрессового воздействия, социальная поддержка, контекст) факторами.
Дикая Л.Г. Адаптация: методологические основания и основные направления исследований / Л.Г. Дикая // Психология адаптации и социальная среда: современные подходы, проблемы, перспективы. – 2007. – С. 17–42. (Dikaya L.G. Adaptatsiya: metodologicheskiye osnovaniya i osnovnyye napravleniya issledovaniy / L.G. Dikaya // Psikhologiya adaptatsii i sotsial'naya sreda: sovremennyye podkhody, problemy, perspektivy. – 2007. – S. 17–42).

Кашенкова М.М. Копинг-поведение и защитные механизмы в системе адаптации личности / Сборник трудов филиала РГСУ в г. Обнинске. – Вып. 2. – Обнинск, 2007. – С. 62–64. (Kashenkova M.M. Koping-povedeniye i zashchitnyye mekhanizmy v sisteme adaptatsii lichnosti / Sbornik trudov filiala RGSU v g. Obninske. – Vyp. 2. – Obninsk, 2007. – S. 62–64).

Куликов Л.В. Проблема описания психических состояний // Психические состояния / Сост. и общ. ред. Л.В. Куликова. – СПб., 2001. – С. 11–42. (Kulikov L.V. Problema opisaniya psikhicheskikh sostoyaniy // Psikhicheskiye sostoyaniya / Sost. i obshch. red. L.V. Kulikova. – SPb., 2001. – S. 11–42).

Куфтяк Е.В. Психологическое здоровье и защитные механизмы (психологические защиты и совладание) в детском возрасте // Психологические исследования. 2016. Т. 9, № 49. С. 4. (Kuftyak Ye.V. Psikhologicheskoye zdorov'ye i zashchitnyye mekhanizmy (psikhologicheskiye zashchity i sovladaniye) v detskom vozraste // Psikhologicheskiye issledovaniya. 2016. T. 9, № 49. S. 4).

Левитов Н.Д. О психических состояниях человека / Н.Д. Левитов. – Москва: Просвещение, 1964. – 344 с. (Levitov N.D. O psikhicheskikh sostoyaniyakh cheloveka / N.D. Levitov. – Moskva: Prosveshcheniye, 1964. – 344 s.).

Ломов Б.Ф. Методологические и теоретические проблемы психологии. – М.: Наука, 1984. – 444 с. (Lomov B.F. Metodologicheskiye i teoreticheskiye problemy psikhologii. – M.: Nauka, 1984. – 444 s.

Мясищев В.Н. Личность и неврозы. – Л., 1960. (Myasishchev V.N. Lichnost' i nevrozy. – L., 1960).

Пилюгина Е.Р., Сулейманов Р.Ф. Методика измерения психологической защиты // Экспериментальная психология. 2020. Том 13. № 2. С. 194–209. DOI: https://doi.org/10.17759/exppsy.2020130213 (Pilyugina Ye.R., Suleymanov R.F. Metodika izmereniya psikhologicheskoy zashchity // Eksperimental'naya psikhologiya. 2020. Tom 13. № 2. S. 194–209. DOI: https://doi.org/10.17759/exppsy.2020130213).

Распопин Е.В. Методы изучения и оценки психических состояний // Известия Уральского федерального университета. Серия 1: Проблемы образования, науки и культуры. – 2016. – Т. 22, № 4(154). – С. 129–137. (Raspopin Ye.V. Metody izucheniya i otsenki psikhicheskikh sostoyaniy // Izvestiya Ural'skogo federal'nogo universiteta. Seriya 1: Problemy obrazovaniya, nauki i kul'tury. – 2016. – T. 22, № 4(154). – S. 129–137).

Яницкий М.С., Портнова А.Г., Богомолов А.М. Психологическая адаптация: функциональные, структурные и динамические аспекты // Психология адаптации и социальная среда: современные подходы, проблемы, перспективы: коллективная монография. – М.: Институт психологии РАН, 2007. – С. 96–108. (Yanitskiy M.S., Portnova A.G., Bogomolov A.M. Psikhologicheskaya adaptatsiya: funktsional'nyye, strukturnyye i dinamicheskiye aspekty // Psikhologiya adaptatsii i sotsial'naya sreda: sovremennyye podkhody, problemy, perspektivy: kollektivnaya monografiya. – M.: Institut psikhologii RAN, 2007. – S. 96–108).

Bonanno G.A., Romero S.A., Klein S.I. (2015). The Temporal Elements of Psychological Resilience: An Integrative Framework for the Study of Individuals, Families, and Communities. Psychological Inquiry, 26(2), 139–169. http://dx.doi.org/10.1080/1047840X.2015.992677

Goral A., Feder-Bubis P., Lahad M., Galea S., O’Rourke N., Aharonson-Daniel L. (2021). Development and validation of the Continuous Traumatic Stress Response scale (CTSR) among adults exposed to ongoing security threats. PLoS ONE, 16(5): e0251724. https://doi.org/10.1371/journal.pone.0251724

Janoff-Bulman R. (1992). Shattered assumptions: Towards a new psychology of trauma. New York: Oxford University Press.

Kimhi S., Eshel Y., Bonanno G.A. (2020). Resilience protective and risk factors as prospective predictors of depression and anxiety symptoms following intensive terror attacks in Israel. Personality and Individual Differences, 159, 109864. https://doi.org/10.1016/j.paid.2020.109864

Masten A.S. (2007). Resilience in developing systems: Progress and promise as the fourth wave rises. Development and Psychopathology, 19(3), 921–930. doi:10.1017/S0954579407000442

Pavlova I., Krauss S., McGrath B., Cehajic-Clancy S., Bodnar I., Petrytsa P., Synytsya T., Zhara H. (2024). Individual and contextual predictors of young Ukrainian adults' subjective well-being during the Russian–Ukrainian war. Applied Psychology: Health and Well-Being, 16(3), 886–905. https://doi.org/10.1111/aphw.12484

Schwarzer R. (2024). Stress, resilience, and coping resources in the context of war, terror, and migration. Current Opinion in Behavioral Sciences, 57, 101393. https://doi.org/10.1016/j.cobeha.2024.101393

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 2(47), հունիս, 64-77
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.2.064

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԵՐԵՐԻ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՊԱՊՈՅԱՆ, ԱԼԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ,
ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Սույն ուսումնասիրությունը նվիրված է ընտանեկան հարաբերությունների, ավանդական և էգալիտար (հավասարազոր իրավունքներ ունեցող) ընտանիքներում արժեքների բացահայտմանը: Վերլուծվում են քաղաքաբնակ և գյուղաբնակ ընտանիքների միջև եղած տարբերությունները՝ ներառյալ դերերի բաշխման, երեխաների դաստիարակության և ներընտանեկան հարաբերությունների պահպանման տեսանկյունները: Հատկապես ուշադրության են արժանանում տերմինալային և գործիքային արժեքները, ներդաշնակության պահպանումն ու երեխաների դաստիարակությունը: Էմպիրիկ ուսումնասիրությունները բացահայտում են ավանդական և ժամանակակից ընտանիքների արժեքային կողմնորոշումների հիմնական տարբերությունները՝ կապված փոփոխվող սոցիալական պայմաններում նրանց հարմարվելու հետ: Արդյունքները ցույց են տալիս, որ ավանդական ընտանիքներում շեշտը

* **Վարդուհի Պապոյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող
**Вардуи Папоян** – кандидат психологических наук, профессор кафедры общей психологии ЕГУ, научный сотрудник научно-исследовательского центра психологии ЕГУ
**Varduhi Papoyan** – Candidate of Psychological Sciences, Professor at YSU Chair of General Psychology, Researcher at YSU Psychology Research Center
Էլ. փոստ՝ vpapoyan@ysu.am https://orcid.org/0000-0001-7534-6872
**Ալինա Գալստյան** – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դասախոս, ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող
**Алина Галстян** – преподаватель кафедры общей психологии ЕГУ, научный сотрудник научно-исследовательского центра психологии ЕГУ
**Alina Galstyan** – Lecturer at YSU Chair of General Psychology, Researcher of YSU Psychology Research Center
Էլ. փոստ՝ alina.galstyan@ysu.am https://orcid.org/0000-0002-3219-4052
**Նարինե Հարությունյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ
**Нарине Арутюнян** – кандидат психологических наук, доцент кафедры общей психологии ЕГУ
**Narine Harutyunyan** – Candidate of Psychological Sciences, Associate Professor at YSU Chair of General Psychology
Էլ. փոստ՝ narine.harutyunyan@ysu.am https://orcid.org/0000-0001-7264-2705

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.04.2025
Գրախոսվել է՝ 26.05.2025
Հաստատվել է՝ 24.06.2025
© The Author(s) 2025

դրվում է գաղտնիության պահպանման, ընտանեկան բարեկեցության և սերունդների միջև հուզական կապերի ամրապնդման վրա: Միևնույն ժամանակ, էգալիտար ընտանիքները կենտրոնացած են պարտականությունների հավասար բաշխման, մասնագիտական ինքնաիրացման և սոցիալական գործունեության վրա: Գյուղաբնակ ընտանիքներում առավել կարևոր են ավանդույթները, ընտանեկան ջերմությունը և արժեքները, որոնք միտված են ընտանիքի կայունությանը և սերունդների միջև կապերի ամրապնդմանը: Ընտանիքը մնում է սոցիալական կառուցվածքի կարևոր տարր՝ ազդելով անհատականության ձևավորման, մշակութային ժառանգության պահպանման և հասարակության կայունության ապահովման վրա: Աշխատանքում կարևորվում է ժամանակակից համաշխարհայնացման գործընթացների և հասարակական վերափոխումների համատեքստում ընտանեկան արժեքների և դերերի ուսումնասիրությունը:

**Բանալի բառեր** – *ընտանեկան դերեր, էգալիտար ընտանիքներ, ավանդույթներ, հարմարվողական և այլասիրական արժեքներ*

Ժամանակակից հասարակությունում տեղի ունեցող արմատական փոխակերպումներին զուգահեռ՝ փոփոխության են ենթարկվում նաև ընտանիքի սոցիալական ինստիտուտը և այնտեղ գործառող ավանդույթներն ու սովորույթները, որոնք, ինչպես հայտնի է, ընտանիքի կայունության հիմքն են: Ավանդույթներն ու սովորույթները յուրաքանչյուր էթնոսի կյանքի անբաժանելի մասն են, և դրանցում ընտանիքի ձևավորման ու կայացման, դերի ու նշանակության մասին ամբարված արժեքներն ու պատկերացումները կարող են պահպանվել այնքան ժամանակ, քանի դեռ պաշտպանված են հասարական կարծիքի ուժով՝ լինելով անձի արժեհամակարգի ու ինքնության բաղկացուցիչ մաս: Այս առումով շարունակաբար պատերազմական իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետությունը կանգնած է ազգային ինքնության, ինչպես նաև սերնդեսերունդ վերարտադրվող համակեցության կազմակերպման ավանդական մշակույթի պահպանման ու փոխանցման խնդրի առջև, առավել ևս, որ փոխակերպվող արդի հայ հասարակությունում, մասնավորապես քաղաքաբնակ ընտանիքներում, աստիճանաբար մոռացվում են ժամանակի փորձությունը բռնած ավանդույթներն ու սովորույթները, որոնք օրգանապես կապված են մարդու կենսագործունեության բոլոր ոլորտների հետ՝ որպես սերնդեսերունդ փոխանցվող հոգևոր-բարոյական արժեքների խիստ կարևոր տարր[1]:

Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ունի իրավունքների և պարտականությունների որոշակի շրջանակ, ենթարկվում է որոշակի նորմերի ու վարքի կանոնների, որոնք կարգավորում են ամուսինների, ծնողների, զավակների և այլ ազգականների միջև ձևավորված փոխհարաբերությունները: Այն ոչ

---

[1] Տե՛ս **Հովակիմյան Գ. Պ.** Սովորույթների և ավանդույթների տարբերության և ընդհանրության մասին, https://arar.sci.am/Content/38427/file_0.pdf

միայն սոցիալ-տնտեսական, այլև արժեքաբանական համակարգ է, որի վրա տարբեր ժամանակաշրջանների փոփոխություններն անմիջական ազդեցություն են թողնում՝ փոխելով նրա սոցիոմշակութային բնույթն ու բովանդակությունը[2]:

«Ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունների միջև թեև սերտ փոխկապվածություն կա, բայցևայնպես կան նաև մի շարք էական, հատուկ և կոնկրետ տարբերություններ: Մասնավորապես, ամուսնությունը տղամարդու և կնոջ միություն է, ինչի շնորհիվ ընտանիք է ստեղծվում և իրականացվում է վերարտադրողական գործառույթ[3]: Որոշ հեղինակներ ամուսնությունը սահմանում են որպես կնոջ և տղամարդու միջև փոխհարաբերությունների պատմականորեն փոփոխվող սոցիալական ձև, որն էլ, որպես հասարակության ինստիտուցիոնալ միավոր, զարգանում է ծնողների իրավունքների և պարտականությունների համատեքստում: Ընտանիքը ձևավորվում է ամուսնական զույգի իրավական և բարոյական պատասխանատվության հիման վրա՝ պահպանելով երեխաների առողջությունը, զարգացումն ու դաստիարակությունը[4]:

Պետք է նկատել, սակայն, որ յուրաքանչյուր պատմական դարաշրջան ունի իրեն բնորոշ բարքեր, վարքերի կարծրատիպեր ու դիրքորոշումներ, որոնք իրենց կնիքն են դնում տվյալ ժամանակաշրջանում ապրող ընտանիքի անդամների փոխհարաբերությունների վրա: Ինչպես ցույց են տալիս տարբեր ժամանակաշրջաններում անցկացված հետազոտությունների արդյունքները, ընտանիքի ու ամուսնության ինստիտուտները, հասարակության զարգացմանը զուգահեռ, ենթարկվում են փոփոխությունների, փոփոխվում են ընտանեկան հարաբերությունները, ընտանիքի և ամուսնության մասին պատկերացումները և այլն: Եթե նախկինում ամուսնությունը հիմնված էր պետական շահի վրա և համարվում էր շահավետ գործարք, ապա ժամանակակից ընտանիքներում ավելի ու ավելի է մեծանում ազատամիտ մարդկանց թիվը[5], որոնց ամուսնության հիմքում գլխավորապես սերն է ու փոխադարձ համաձայնությունը[6]: Այս առումով հատկանշական է, որ արդիականության ու հետարդիականության

---

[2] Տե՛ս **Գալստյան, Մ. Վ., Օհանջանյան, Ռ. Ս., Զաքարյան, Թ. Զ., Հակոբյան, Գ. Լ.** (2017): Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում/ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Եր., «Գիտություն» հրատ., էջ 10:

[3] Տե՛ս **Шнейдер, Л. Б.** (2008): Семейная психология. Учебное пособие для вузов. - 4-е. М.: Академический Проект. Трикста, էջ 124-125:

[4] Տե՛ս **Кабакова, М. П.** (2014): Психология семьи и брака. Учебное пособие, Алматы, «Қазақ университеті», էջ 9-10:

[5] Տե՛ս **Маркосян М.** Отношение молодых студентов к браку и его трудностям в годы обучения, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2024_6_151_156.pdf

[6] Տե՛ս **Сомкин А. А., Данилова О. А.** Трансформация понятий «семья» и «брак» в современном российском обществе, https://cyberleninka.ru/article/n/transformatsiya-ponyatiy-semya-i-brak-v-sovremennom-rossiyskom-obschestve/viewer

մեր աշխարհում եթե ավանդական ընտանիքի մոդելը հիմնականում պահպանվում է գյուղական համայնքներում, ապա ժամանակակից ընտանիքի մոդելը բնորոշ է քաղաքին: Եթե նախկինում ամուսնությունը կայանում էր գործարքի տեսքով, ապա այժմ ամուսնական միությունը հիմնված է սիրո, սոցիալական, հուզական կապերի և մտերմության վրա: Գյուղական համայնքների ընտանիքներում գերակշռում է եռասերունդ ընտանեկան համակարգը (գերդաստան ընտանիք), մինչդեռ ժամանակակից էգալիտար ընտանիքը պատկանում է միջուկային ընտանիքի տեսակին (ծնողներ և երեխաներ):

Ընտանեկան արժեքների, դերերի բաշխվածության համապատասխանությունը կարգավորում է ներընտանեկան փոխհարաբերությունները, նպաստում հոգեկան առողջության պահպանմանը և անձի ինքնակայունացմանն ու ինքնահաստատմանը: Անձի ընտանեկան արժեքների ձևավորումը անհատական է՝ պայմանավորված սոցիալականացման գործընթացով: Իսկ ընտանեկան արժեքների համապատասխանությունը և համատեղելիությունը ամուսինների փոխգործության արդյունք են[7]:

Հոդվածում նպատակ է դրվել ներկայացնել ավանդական և էգալիտար ընտանիքներում ընտանեկան դերերի բաշխվածությունը՝ պայմանավորված անձի արժեքային համակարգով և ընտանեկան ավանդույթներով (քաղաքաբնակ և գյուղաբնակ ընտանիքների օրինակով): Որպես հետազոտության գործիքակազմ օգտագործել ենք՝ «Դերերի բաշխումը ընտանիքում» հարցարանը[8], «Արժեքների կողմնորոշման մեթոդիկան»[9] և «Ավանդական և էգալիտար ընտանիքներ»[10] թեստը:

Հետազոտական ընտրանքը կազմել են 8-20 տարի համատեղ կյանքով ապրող ամուսնական զույգեր, որոնցից 30-ը՝ քաղաքաբնակ, 30-ը՝ գյուղաբնակ: «Դերերի բաշխումը ընտանիքում» հարցարանի օգնությամբ փորձել ենք պարզել քաղաքաբնակ և գյուղաբնակ ընտանիքներում ընտանեկան դերերի բաշխվածությունը (նկարներ 1 և 2):

---

[7] Տե՛ս **Հարությունյան, Ն. Ա.** (2018): Ընտանիքի կայունության հոգեբանական հիմքերը: Մենագրություն / Ն. Ա. Հարությունյան, Եր. , Հեղ. հրատ., էջ 135-140:

[8] Տե՛ս **Հարությունյան, Ն.** (2021): Ընտանիքի կիրառական հոգեբանություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմող՝ Ն. Ա. Հարությունյան: Եր. , Հեղինակային հրատ., էջ 30-38:

[9] Տե՛ս Практическая психодиагностика. Методики и тесты. Учебное пособие. Редактор-составитель: Рейгодский, Д. Я. (2001), Самара: Издательский Дом «БАХРАХ-М», 637-641с.

[10] Տե՛ս **Հարությունյան, Ն. Ա.** (2018), էջ 52-54:




***Նկար 1.*** Ընտանեկան դերերի բաշխվածությունը (քաղաքաբնակ ընտանիքներ)




***Նկար 2.*** Ընտանեկան դերերի բաշխվածությունը (գյուղաբնակ ընտանիքներ)

Քաղաքաբնակ և գյուղաբնակ ընտանիքներում ընտանեկան դերերի բաշխվածության հետազոտական արդյունքների համեմատական վերլուծությունը բացահայտում է, որ գյուղական միջավայրում երեխաների դաստիարակությամբ զբաղվում են առավելապես կանայք: Գյուղական համայնքներում տղամարդիկ ավելի քիչ ժամանակ են անցկացնում ընտանիքում, քանի որ մեկնում են արտագնա աշխատանքի կամ աշխատանքային ժամերը բաշխված են անհավասարաչափ: Սա հանգեցնում է այն բանին, որ ընտանեկան կենցաղը և երեխաների խնամքը մեծամասամբ կատարում է կինը:

Քաղաքաբնակ ընտանիքներում հավասարապես է բաշխված երեխաներին ուղղված ցանկացած գործունեության պատասխանատվություն, որոշ դեպքերում գերակշռում է տղամարդու ակտիվությունը: Հարկ է ավելացնել, որ գյուղաբնակ ընտանիքներում մայրերի դաստիարակչական գործառույթը ավելի բարձր է, քան քաղաքաբնակներինը, ինչը կարող է մեկնաբանվել որպես քաղաքային միջավայրում դայակների ինստիտուտի, հասարակական մյուս օղակների, խնամքի կենտրոնների ներգրավվածությամբ:

Ընտանեկան հարաբերությունների հուզականության, վստահության, հարգանքի ստեղծման ու պահպանման հուզական ֆոնը գյուղաբնակ ընտանիքներում մեծապես կախված է կնոջից, իսկ քաղաքաբնակ ընտանիքներում այն իրագործվում է ամուսինների կողմից երկուստեք: Այս դերի հիմնական գաղափարը զուգընկերոջը հասկանալը, լսելը, ընդունելն է, ինչպես նաև նրան օգնելը և հուզական աջակցություն ցուցաբերելը:

Գյուղաբնակ ընտանիքներում նյութական ապահովությունը իրականացվում է տղամարդու կողմից: Քաղաքաբնակ ընտանիքներում ֆինանսական կայունությունը ապահովվում է և՛ կնոջ, և՛ տղամարդու կողմից գրեթե հավասարաչափ, քանի որ այստեղ բնորոշ է ամուսինների սոցիալական ակտիվությունը՝ անկախ ֆինանսական դժվարություններից:

Ընտանիքում միջոցառումների կազմակերպումը թե՛ գյուղում և թե՛ քաղաքում իրականացվում է կնոջ և ամուսնու կողմից գրեթե հավասարաչափ: Սակայն առկա է որոշ տարբերություն. հյուրընկալությունների, հյուրասիրությունների և հրավերքների կազմակերպման ընթացքում գյուղաբնակ ընտանիքներում առավելապես ներգրաված է տղամարդը, իսկ քաղաքաբնակում՝ կինը:

Ընտանիքներում կենցաղի կազմակերպման, առօրյա գործերի իրականացման հարցում քաղաքաբնակներին բնորոշ է տղամարդու և կնոջ գրեթե հավասար ակտիվությունը, իսկ գյուղաբնակների համար հիմնական գործառույթը պատկանում է կնոջը:

Ընտանիքի ենթամշակույթի կազմակերպումը ներառում է գործունեության այն ոլորտները, որոնք ուղղված են ընտանիքի անդամների շրջանում մշակութային որոշակի արժեքների ձևավորմանը, հետաքրքրություններին և հոբբիներին, ինչն ամուսիններն իրականացնում են հավասարաչափ:

Մեր կողմից անդրադարձ է կատարվել նաև ամուսինների արժեքային կողմնորոշմանը և ուսումնասիրվել է նրանց տերմինալ և գործիքային արժեքների կապը ընտանեկան դերային համակարգի դրսևորումների հետ: Ներկայացված տերմինալ արժեքներից կարևորել ենք արտահայտված վեցը (նկարներ 3 և 4):




***Նկար 3.*** Տերմինալ արժեքները գյուղաբնակ և քաղաքաբնակ ընտանիքներում

Համեմատելով գյուղաբնակ և քաղաքաբնակ ընտանիքների արժեքային կողմնորոշումները տերմինալության տեսանկյունից՝ ակնհայտ է դառնում, որ գյուղաբնակ ամուսինները կարևորում են անձնական կյանքը, ընտանիքում ջերմ մթնոլորտը՝ բարձր գնահատելով սերը, առողջությունը, ընտանեկան երջանկությունը և նյութական ապահովվածությունը:

Քաղաքաբնակ ընտանիքներում կարևորվում են ակտիվ կյանքը, առողջությունը և հետաքրքիր աշխատանքը: Դրանք այն արժեքներն են, որոնք նշանակալի են մասնագիտական կայացման, զարգացման և սոցիալական միջավայրում հասուն հարաբերությունների ձևավորման համար: Նշենք, որ սերը և երջանկությունը, որպես կարևորագույն արժեքներ, քաղաքաբնակ ընտանիքներում ևս գնահատվում են, սակայն ոչ այնքան, որքան գյուղաբնակներում:




***Նկար 4.*** Գործիքային արժեքները գյուղաբնակ և քաղաքաբնակ ընտանիքներում

Դիտարկելով գործիքային արժեքների բաշխվածությունը՝ կարելի է եզրակացնել, որ գյուղաբնակ ընտանիքներում կարևորվում են այնպիսի արժեքներ, որոնք ապահովում են էթնիկ նույնականացումը և մարդկանց հանդեպ դրական վերաբերմունքը: Այդ արժեքներն են՝ հոգատարությունը, մաքրասիրությունը, պահանջկոտությունը և ինքնուրույնությունը: Քաղաքաբնակ ընտանիքներին առավել բնորոշ են հումորի զգացումը, կրթվածությունը, լայնախոհությունը և պահանջկոտությունը: Իսկ, օրինակ, դաստիարակությունը և պատասխանատվությունը կարևոր են թե՛ քաղաքաբնակների և թե՛ գյուղաբնակների համար:

Այսպիսով, քաղաքաբնակ և գյուղաբնակ ընտանիքներում արժեքային կողմնորոշման մեջ կան էական տարբերություններ, որոնք կարող են պայմանավորված լինել ոչ միայն բնակավայրով, այլև ընտանիքի տեսակով:

Ստորև ներկայացնենք «Ավանդական և էգալիտար ընտանիքների» հարցարանի միջոցով դուրս բերված տոկոսային բաշխվածությունները քաղաքաբնակ և գյուղաբնակ ընտանիքների համար:

Գյուղաբնակ ընտանիքների մեծ մասը՝ 74%-ը, ավանդական է. այստեղ պահպանված են ավանդույթները: Ըստ էության, այս ընտանիքները պահպանողական են, բազմասերունդ, դերային առումով՝ հստակ բաշխվածությամբ, և բազմազավակ են (նկար 5):




***Նկար 5.*** Ընտանիքի տեսակը գյուղում

Ինչ վերաբերում է քաղաքաբնակ ընտանիքներին, վերլուծությունից պարզ է դառնում, որ մեր կողմից ուսումնասիրված քաղաքաբնակ ընտանիքների մեծ մասը էգալիտար է (69%): Այսպիսի ընտանիքներին բնորոշ է ընտանեկան դերերի հավասարաչափ բաշխվածությունը: Այստեղ հայկական ավանդույթների պահպանումը այնքան էլ արդիական չէ (նկար 6):




***Նկար 6.*** Ընտանիքի տեսակը քաղաքում

Վերլուծելով արժեքների հիերարխիան՝ փորձել ենք դուս բերել այն սուբյեկտիվ խմբավորումները, որոնք ձևավորվել են հետազոտական արդյունքներից: Տերմինալ և գործիքային արժեքները իրենց հերթին բաժանվում են մի քանի խմբի, որոնց ուսումնասիրությունից պարզ է դառնում ավանդական և էգալիտար ընտանիքներին բնորոշ արժեքային համակարգերը:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ավանդական ընտանիքներին հավասարապես բնորոշ են առավել հստակեցված (առողջություն, նյութական ապահովություն, հավատարիմ ընկերական շրջապատ, երջանիկ ընտանեկան կյանք) և վերացական (սեր, կրթություն, զարգացում, ուրիշների երջանկություն) արժեքները: Էգալիտար ընտանիքներում գերակշռում է արժեքների հիերարխիան՝ հստակեցվածներից՝ ակտիվ կյանք, առողջություն, հետաքրքիր աշխատանք, նյութական ապահովություն, երջանիկ ընտանեկան կյանք, իսկ վերացական արժեքներից՝ զարգացումը: Ավանդական ընտանիքներում ուշադրություն է դարձվում անձնական կյանքին, այլ ոչ թե մասնագիտական ինքնաիրացմանը, իսկ էգալիտար ընտանիքներում պատկերը հակառակն է: Քաղաքաբնակները նախքան ընտանիք կազմելը ձգտում են կրթվել, զարգանալ, կայանալ մասնագիտական ոլորտում, ապա կազմել ընտանիք, իսկ գյուղաբնակների համար այս ամենը ավելի կարևոր չէ, քան երջանիկ ընտանիք կազմելը և այն պահպանելը: Թե՛ ավանդական և թե՛ էգալիտար ընտանիքներին բնորոշ են էթնիկ, հաղորդակցման և աշխատանքային արժեքները: Տարբերությունը միայն արժեքների տեսակներն են: Եթե գյուղաբնակների համար էթնիկ արժեքներ են պատասխանատվությունը, պահանջկոտությունն ու ինքնուրույնությունը, ապա քաղաքաբնակները ինքնուրույնության փոխարեն առաջնահերթությունը տալիս են լայն հայացքներին, մտահորիզոնին, որը հիմնականում պայմանավորված է տարածքային առանձնահատկություններով և տարածաշրջանին բնորոշ ավանդույթներով:

Ավանդական ընտանիքներում անհատական, կոմֆորմիստական և ալտրուիստական արժեքները բաշխված են հավասարաչափ, իսկ արդեն քաղաքաբնակների շրջանում գերակշռում են անհատական և կոմֆորմիստական արժեքները, բացակայում են ալտրուիստականները (աղյուսակ 1):

***Աղյուսակ 1***

**Անհատական և կոմֆորմիստական արժեքների բաշխվածության աղյուսակ**

| Ընտանիք / արժեքներ | **Անհատական** | **Կոմֆորմիստական** | **Ալտրուիստական** |
|---|---|---|---|
| **Ավանդական** | Ինքնուրույնություն | Դաստիարակություն | Հոգատարություն |
| **Էգալիտար** | Ռացիոնալիզմ, ուժեղ կամք | Դաստիարակություն, լայնախոհություն | |

Ինքնահաստատման արժեքները թե՛ ավանդական և թե՛ էգալիտար ընտանիքներում հավասարաչափ գերակշռող են, սակայն էգալիտար ընտանիքներում ինքնահաստատումը ոչ միայն ընտանիքում է տեղի ունենում (ի տարբերություն ավանդական ընտանիքի), այլ նաև աշխատանքային միջավայրում: Ուրիշներին ընդունելու շրջանակներում գյուղաբնակների պատրաստակամությունն ավելի մեծ է, քան քաղաքաբնակներինը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ գյուղաբնակ ընտանիքներում շփումները ավելի շատ են:

Հետազոտական տվյալների հավաստման նպատակով ավանդական և էգալիտար ընտանիքներում անցկացվել է հարցում, որից դուրս բերված ռանգավորված արժևորումները փոխկապակցվել են արժեհամակարգի թեստային արդյունքների հետ: Ստացված ելքային գործակիցները նույնպես հիմնավորում են էգալիտար և ավանդական ընտանիքներին բնորոշ տարբերությունները:

Ստորև ներկայացվում են կոռելյացիոն վերլուծության արդյունքները:

*Աղյուսակ 2*

**Հարցման արդյունքների և տերմինալ արժեքների կոռելյացիոն վերլուծություն**

| Ընտանիքի տեսակը | Սեր | Երջանիկ ընտանեկան կյանք | Առողջություն | Ուրիշների երջանկություն | Ակտիվ կյանք | Կրթություն | Հետաքրքիր աշխատանք |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ավանդականի արժեքներ | 0,49** | 0,34* | 0,35* | 0,32* | 0,21 | -0,18 | 0,13 |
| Էգալիտարի արժեքներ | 0,22 | -0,13 | 0,37* | -0,06 | 0,46** | 0,34* | 0,35* |

*p<0.01, **p<0.001

Ըստ աղյուսակ 2-ի՝ ավանդական ընտանիքներին բնորոշ են աբստրակտ և անձնական կյանքն ապահովող արժեքները, որոնք են՝ սերը, երջանիկ ընտանեկան կյանքը և ուրիշների երջանկությունը, ինչպես նաև առողջությունը:

Էգալիտար ընտանիքներին բնորոշ են հետևյալ արժեքները՝ ակտիվ կյանքը և հետաքրքիր աշխատանքը, առողջությունը և կրթությունը:

*Աղյուսակ 3*

**Հարցման արդյունքների և գործիքային արժեքների կոռելյացիոն վերլուծություն**

| Ընտանիքի տեսակը | Մաքրասիրություն | Դաստիարակություն | Պատասխանատվություն | Լայն հայացքներ | Հումորի զգացում | Հոգատարություն |
|---|---|---|---|---|---|---|
| Ավանդականի արժեքներ | 0,38* | 0,40** | 0,37* | 0,21 | 0,14 | 0,41** |
| Էգալիտարի արժեքներ | -0,23 | 0,34* | -0,31* | 0,39* | 0,40** | 0,21 |

*p<0.01, **p<0.001

Գործիքային արժեքներից ավանդական ընտանիքներին բնորոշ են մաքրասիրությունն ու հոգատարությունը, կոմֆորմիստական արժեքներից՝ դաստիարակությունը և պատասխանատվությունը:

Էգալիտար ընտանիքներին բնորոշ արժեքներից են համարվում լայն հայացքները, հումորի զգացումը, դաստիարակությունը, իսկ «պատասխանատվություն» սանդղակի միջև առկա է հակադարձ կոռելյացիոն կապ:

Այսպիսով, կարելի է ասել, որ գյուղաբնակ ընտանիքները՝ որպես ավանդական արժեքների կրողներ, կարևորում են անձնական կյանքը, ուրիշներին ընդունելը, իսկ քաղաքաբնակ ընտանիքների համար առաջնային է համարվում մասնագիտական ինքնաիրացումը: Ավանդական ընտանիքները կարևորում են անձնական կյանքը, ուրիշներին ընդունելը: Այս ընտանիքներում ձևավորվում են այնպիսի արժեքներ, որոնք ապահովում են ընտանեկան կյանքի ներդաշնակությունը, ջերմությունն ու հոգատարությունը:

Ընտանիքում տարբեր են նաև արժեքային պատկերացումները և կողմնորոշումները: Քաղաքաբնակ ընտանիքների շրջանում առաջնային են համարվում անձի ինքնահաստատումը և կայունությունը սոցիալական միջավայրում, կրթվածության մակարդակը և զարգացածությունը, իսկ գյուղաբնակների համար առաջնային արժեքներ են ընտանեկան սերը և ջերմությունը, հարազատների և մտերիմների երջանկությունն ու ուրախությունը: Որոշ ընտանիքներում պահպանվում են ավանդույթները, սովորույթները և ծիսակատարությունները, ինչը պայմանավորված է համայնքային սովորույթներով:

Ավանդույթների պահպանումը ազդում է ընտանիքներում դերերի բաշխվածության և անձնային արժեքների ձևավորման վրա: Յուրաքանչյուր ընտա-

նիք, անկախ ընտանիքի մոդելից, ունի որոշակի ավանդույթներ և սովորույթներ, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ՝ դառնալով ընտանիքի ձևավորման հիմք:

**ВАРДУИ ПАПОЯН, АЛИНА ГАЛСТЯН, НАРИНЕ АРУТЮНЯН – *Сравнительный анализ семейных ролей и ценностей.*** – Данное исследование направлено на выявление ценностей в семейных отношениях в контексте традиционных и эгалитарных семейных структур. В работе анализируются различия между городскими и сельскими семьями, включая аспекты распределения ролей, воспитания детей и поддержания внутрисемейных отношений. Особое внимание уделяется терминальным и инструментальным ценностям, определяющим характер семейных взаимодействий, уровень гармонии и особенности воспитательных стратегий. Эмпирические исследования выявляют ключевые различия в ценностных ориентациях традиционных и современных семей, что обусловлено их адаптацией к изменяющимся социальным условиям. Результаты показывают, что в традиционных семьях акцент делается на сохранение личной жизни, семейного благополучия и укрепление эмоциональной связи между поколениями. В то же время эгалитарные семьи ориентированы на равноправное распределение обязанностей, профессиональную самореализацию и социальную активность. В сельских семьях ключевую роль играют традиции, семейное тепло и ценности, которые способствуют укреплению устойчивости семьи и поддержанию прочных связей между поколениями. Семья остаётся важным элементом социальной структуры, влияющая на формирование личности, сохранение культурного наследия и обеспечения устойчивости общества. Статья акцентирует внимание на значимости изучения семейных ценностей и ролей в контексте современной глобализации и трансформации общества.

**Ключевые слова:** *семейные роли, эгалитарные семьи, традиции, конформистские и альтруистические ценности*

**VARDUHI PAPOYAN, ALINA GALSTYAN, NARINE HARUTYUNYAN – *A Comparative Analysis of Family Roles and Values.*** – This study aims to identify the values in family relationships within the context of traditional and egalitarian family structures. It examines the differences between urban and rural families, focusing on role distribution, child-rearing practices, and the maintenance of family relationships. Special attention is given to terminal and instrumental values, which shape family interactions, contribute to harmony, and influence parenting strategies. Empirical research highlights key differences in the value orientations of traditional and modern families, reflecting their adaptation to the changing social conditions. The findings reveal that traditional families emphasize preserving personal life, ensuring family well-being, and strengthening emotional bonds across generations. At the same time, egalitarian families focus on the equal distribution of responsibilities, professional self-realization, and social engagement. In contrast, rural families place greater importance on traditions, familial warmth, and values that promote family stability and strengthen intergenerational bonds. The family remains a fundamental element of the social structure, shaping individual identity, preserving cultural heritage, and contributing to societal stability. The article underscores the importance of studying family values and roles in the context of modern globalization and social transformation.

**Key words:** *family roles, egalitarian families, traditions, conformist and altruistic values*

### Գրականության ցանկ

Գալստյան, Մ. Վ., Օհանջանյան, Ռ. Ս., Զաքարյան, Թ. Զ., Հակոբյան, Գ. Լ. (2017): Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում / ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության

ինստիտուտ, Եր., «Գիտություն» հրատ., - 328 էջ [Galstyan, M. V. Ohanjanyan, R. S., Zak'aryan, T'. Z., Hakobyan, G. L. (2017). Ardi hay yntanik'y p'vokhakerpvogh hasarakut'yunum/ HH GAA hnagitut'yan yev azgagrut'yan institut,- Yer.. «Gitut'yun» hrat., - 328 ej].

Հարությունյան, Ն. (2021)։ Ընտանիքի կիրառական հոգեբանություն։ Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմող՝ Ն. Ա. Հարությունյան։ Երևան։ Հեղինակային հրատ., - 244 էջ (Harut'yunyan, N. (2021). Yntanik'i kirarrakan hogebanut'yun. Usumnamet'vodakan dzerrnark/ Kazmogh, N. A. Harut'yunyan; Yerevan,. Heghinakayin hrat., - 244 ej)

Հարությունյան Ն. Ա. (2018)։ Ընտանիքի կայունության հոգեբանական հիմքերը։ Մենագրություն / Ն. Ա. Հարությունյան։ Երևան։ Հեղ. հրատ., - 280 էջ [Harut'yunyan, N. A. (2018). Yntanik'i kayunut'yan hogebanakan himk'ery. Menagrut'yun/ N. A. Harut'yunyan. Yerevan. Hegh. hrat., - 280 ej].

Հովակիմյան, Գ. Պ. (2005)։ Ազգային ավանույթների և սովորույթների հոգեբանություն (ուսումնական ձեռնարկ). Երևան։ «Քայլ Պրես», -220 էջ [Hovakimyan, G. P. (2005). Azgayin avanuyt'neri yev sovoruyt'neri hogebanut'yun (usumnakan dzerrnark). Yerevan. «K'ayl Pres», 220 ej].

Практическая психодиагностика. Методики и тесты. Учебное пособие / Рейгодский Д.Я. (редактор-составитель) (2001). Самара: Издательский Дом «БАХРАХ-М», с. 637-641 [Praktičeskaâ psihodiagnostika. Metodiki i testy. Učebnoe posobie. / Rejgodskij D.Â. (redaktor-sostavitel′) (2001). Samara. Izdatel′skij Dom «BAHRAH-M», s. 637-641]

Сомкин, А. А., Данилова, О. А. Трансформация понятий «семья» и «брак» в современном российском обществе (https://cyberleninka.ru/article/n/transformatsiya-ponyatiy-semya-i-brak-v-sovremennom-rossiyskom-obschestve/viewer) (Somkin, A. A., Danilova, O. A. Transformaciâ ponâtij «sem′â» i «brak» v sovremennom rossijskom obŝestve. https://cyberleninka.ru/article/n/transformatsiya-ponyatiy-semya-i-brak-v-sovremennom-rossiyskom-obschestve/viewer)

Кабакова, М. П. (2014). Психология семьи и брака. Учебное пособие. Алматы, «Қазақ университеті» 9-10 с. [Kabakova M. P. [2014]. Psihologiâ sem′i i braka Učebnoe posobie, Almaty «K̦azak̦ universitetí» 9-10 s.].

Шнейдер, Л.Б. (2008). Семейная психология. Учебное пособие для вузов. - 4-е. М.: Академический Проект; Трикста, - 768 с. [Šnejder, L.B. (2008). Semejnaâ psihologiâ: Učebnoe posobie dlâ vuzov. - 4-e - M.: Akademičeskij Proekt; Triksta, - 768 s].

Маркосян, М. Отношение молодых студентов к браку и его трудностям в годы обучения. https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2024_6_151_156.pdf [Markosân M. Otnošenie O molodyh studentov k braku i ego trudnostâm v gody obučeniâ. https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2024_6_151_156.pdf].

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 2(47), հունիս, 78-90
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.2.078

# ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ՀՈՒԶԱԿԱՆ ՄԵՆԱՀԱՏՈՒԿ ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԱՆԿԱՆ ՔՆԻ ԸՆԹԱՑՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

ԷՄՄԱ ԱՐԶԻԵՎԱ*
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում անդրադարձ է արվում հետծննդաբերական շրջանում մոր և մանկան հուզական կապվածության հիմնական դրսևորումներին, որոնք հարաբերակցվում են մանկան քնի ընթացքի յուրահատկությունների հետ: Դիտարկվում են հուզական կապվածության տեսակները նկարագրող մի շարք տեսություններ, որտեղ ընդգծվում են մոր և մանկան միջև գոյություն ունեցող կապի տեսակները, որակն ու խորությունը, որոնք փոխադարձաբար անդրադառնում են երեխայի քնի կարգավորման փորձագիտական մեթոդի ներքնայնացման վրա:
Հոդվածում առաջարկված տեսակետի համաձայն՝ քնի վարքային խանգարումները կախված չեն երեխայի տարիքից, սեռից, ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, քանզի դրանք հատուկ են երեխայի բնականոն զարգացման ընթացքին, որը ներառում է քնի հետընթացն ու ճգնաժամային դրսևորումները: Հեղինակը կարևորում է այն հանգամանքը, որ քնի վարքային խանգարումների հիմքերը միայն ֆիզիոլոգիական բնույթի չեն, այլ արտահայտում են երեխայի հոգեհուզական, հոգեբանական բարենպաստությունը:
Հոդվածում խոսվում է այն մասին, որ քունը կենսական բնազդի անփոխարինելի բաղադրիչ է և պաշտպանում է նորածնին արտաքին աշխարհի այն ճնշող գրգիռներից, որոնք կարող են ծանրաբեռնել դեռևս չձևավորված ու չհասունացած հոգեկան համակարգը: Լիարժեք ու որակյալ քուն կարող է լինել միայն այն դեպքում, երբ ներդաշնակվում են քնի հոգեբանական, ֆիզիոլոգիական, ֆունկցիոնալ օղակները, իսկ երեխայի հանդեպ մոր հուզականությունն այս շարքում առանցքային դեր ունի:
Այս հանգամանքով պայմանավորված՝ հոդվածում ներկայացված պիլոտային հետազոտության հիմքը մոր և երեխայի միջև հուզական կապվածության տեսակի հարաբերակցությունն է քնի կարգավորման փորձագիտական մեթոդի գործարկման հիման վրա:

* **Էմմա Արզիևա** – ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ, դասախոս
**Эмма Арзиева** – аспирант кафедры социальной и клинической психологии ЕГУ, преподаватель
**Emma Arzieva** – PhD Student at YSU Chair of Social and Clinical Psychology, Lecturer
emma.arzieva@ysu.am https://orcid.org/0009-0000-0011-7901

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.04.2025
Գրախոսվել է՝ 05.05.2025
Հաստատվել է՝ 24.06.2025
© The Author(s) 2025

**Բանալի բառեր** - *քնի վարքային խանգարում, քնի հետընթաց, հուզական կապվածություն, քնի ու արթմնության ռիթմ, քնի ռեժիմ, առաջնային կլանվածություն, խուսափողական կապվածություն, տագնապային կապվածություն, հուսալի կապվածություն, քնի բնազդ*

## Ներածություն

Քնի խանգարումները երեխայի օրակարգի անբաժան մասն են կազմում՝ հետապնդելով նրանց անգամ մինչև դեռահասության և չափահասության տարիք: Քնի խանգարումների ուսումնասիրությամբ զբաղվող միջազգային հեղինակավոր կառույցների իրականացրած հետազոտությունները վկայում են, որ 0-3 տարեկան երեխաների 20-40 տոկոսն ունի քնի վարքային խանգարումներ[1]: Այս խանգարումներն ընտանիքի համար լուրջ մարտահրավեր են, քանի որ երեխայի քնի վատ որակն ուղիղ համեմատական է ողջ ընտանիքի, հատկապես մոր քնի և առհասարակ կյանքի որակի հետ, քանի որ վատ քնի հետևանքով կուտակված գերհոգնածությունն ու գերզգայունությունն ուղղակիորեն անդրադառնում են երեխայի ախորժակի, տրամադրության, ինչպես նաև իմացության վրա:

## Հետազոտական մաս

Հայաստանում երեխաների քնի վարքային խանգարումների վերաբերյալ հետազոտությունները խիստ նվազ են, և սույն հոդվածի առանցքային նպատակն է անդրադառնալ այդ խնդրին՝ ընդգծելով մոր և մանկան հուզական կապվածության ազդեցությունը քնի կարգավորման սահուն կամ անհարթ ընթացքի վրա:

Եթե երեխան ֆիզիոլոգիապես առողջ է, ապա չի կարող չքնող կամ վատ քնող լինել, պարզապես կան անբարենպաստ պայմաններ, որոնք անհնար են դարձնում քնի բնազդի լիարժեք դրսևորումը: Որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ ամեն բնազդ ունի նաև իր դրսևորման ձևը: Օրինակ՝ բնազդը նկարագրելով արքետիպերի ու մղումների համատեքստում՝ Կառլ Յունգը նշում է, որ ամորֆ բնազդներ փաստացի գոյություն չունեն, այսինքն՝ յուրաքանչյուր բնազդ կրում է այն վարքային ձևանմուշը, որը համապատասխանում է տվյալ իրավիճակին[2]: Այն միշտ ենթադրում է որոշակի պատկեր, որին բնորոշ են անփոփոխ բնութագրիչներ: Այս երևույթը պատկերավոր ներկայացնելու համար Յունգը բերում է մրջյուն-տերևահատի բնազդի օրինակը. բնազդի դրսևորումները ներառում են ձևանմուշային պատկերի բոլոր օրինակները՝ մրջյուն, ծառ, տերևներ, տերևի հատման գործընթաց և նույնիսկ փոքրիկ մրջնանոց, որը հատված զանգվածի վերջնական նպատակակետն է:

---

[1] Տե՛ս **Mindell J.A., Meltzer L. J.** Behavioral Sleep Disorders in Children and Adolescents, Annals of the Academy of Sciences, Singapore, 2008, vol. 37, no. 8, էջ 722-728:

[2] Տե՛ս **Юнг К.** О природе психе, М., 2002, էջ 15:

Այն դեպքում, երբ այս օղակներից որևէ մեկը բացակայում է, բնազդը չի դրսևորվում, քանի որ այն անհնարին է ընդհանուր պատկերից դուրս: Օրինակ, եթե նույն մրջյունին դնենք արկղի մեջ, որտեղ չկան վերոնշյալ օղակները, մրջյունն ինչ-որ իմաստով կդառնա «անգործուն», քանի որ չի կարող հետևել սկզբնապատկերին: Երբեմն նախապատկերի բացակայության պայմաններում բնազդը կարող է դրսևորվել մասնակիորեն ու ոչ նպատակային:

Բնազդի դրսևորումը պահանջում է ապրիորի նախապատկեր, որը նախորդում է մրջյունի ցանկացած ակտիվությանն այնպես, կարծես մրջյունը ստեղծվել է միայն այդ բնազդը իրականացնելու համար, քանի որ ամեն ակտիվություն ընդհանրապես անիմաստ է, եթե առաջ չի մղում և չի դարձնում հնարավոր այն բնազդը, որը հիմնված է համապատասխան վարքային ձևանմուշի վրա:

Կարելի է ենթադրել, որ այս սխեման ճիշտ է բոլոր բնազդների համար և ճիշտ նույնությամբ դրսևորվում է տարբեր տեսակների մոտ: Բացառություն չէ նաև մարդը, որին հատուկ են բնազդի ապրիորի նախատիպեր: Դրանք այնքանով են ծրագրավորում նրա վարքի հիմքերն ու ակտիվության նմուշները, որքանով որ մարդը գործում է բնազդաբար, քանի որ որպես կենսաբանական էակ չունի ընտրության հնարավորություն և ստիպված է գործել մարդկային նախատիպերին համապատասխան՝ հետևելով իր տեսակին հատուկ վարքային ձևանմուշներին:

Իր տեսակետը հիմնավորելու նպատակով Յունգը վկայակոչում է ավստրիացի բուսաբան Անտոն Յոզեֆ Կերներ ֆոն Մերիլաունին, ով բնազդի դրսևորման առանձնահատկությունները նկարագրելու համար բերում է Pronuba yuccasella թիթեռնիկի օրինակը: «Բույսերի կյանքը» աշխատության մեջ նա նկարագրում է այդ թիթեռնիկի ձվադրման բարդ գործողությունը, որի ընթացքում փոքրիկ միջատը փոշոտում է միայն մի գիշեր բացվող զանգուլակի տեսք ունեցող ծաղկաբույսը[3]: Հենց այդ գիշեր Pronuba yucasella թիթեռնիկը ծաղկից վերցնում է նրա ծաղկափոշին, սրանից գնդիկ է պատրաստում ու դրանով բեռնված թռչում մեկ այլ ծաղկի մոտ: Այս երկրորդ ծաղկի վարսանդում նա ձվադրում է և մուտքը փակում ծաղկափոշու գնդիկով: Այսպիսով թիթեռնիկն ապահովում է իր սերնդի անվտանգությունն ու սնունդը՝ միևնույն ժամանակ փոշոտելով ծաղիկը: Ֆոն Մարիլաունը նշում է, որ չի կարելի թիթեռնիկի՝ ծաղիկը փոշոտելու գործողությունների մեջ տեսնել որոշակի մտադրություն, բայց նաև պետք է ընդունել, որ այդ գործողություններն իրենց մեջ վարքային հստակ նմուշ են պարունակում և չեն բխում թիթեռնիկի կենսափորձից, այլ նախորդում են դրան: Այս օրինակը ցույց է տալիս, որ բնազդային դրսևորումներում սովորելու տարրը ընդհանրապես բացակայում է, քանի որ այդ բարդ գործողությունը թիթեռնիկը կատարում է կյանքում ընդամենը մեկ անգամ:

---

[3] Տե՛ս **Марилауни К.** Жизнь растений 1-й том, СПб., 1903, էջ 514-515:

Գրեթե նույն պատկերն է դիտվում մանկան քնի պարագայում, եթե բացակայում են քնի բնազդի դրսևորման ձևանմուշային պայմանները, քնի բնազդը դրսևորվում է մասնակիորեն՝ առաջացնելով քնի ամենատարբեր խանգարումներ:

Ծնողավարման բազմաշերտ համակարգում քնի կարգավորումն առանձնակի կարևոր դեր ունի, քանի որ նորածնի քնի ու արթմնության որակով ու ռիթմով են պայմանավորված ողջ ընտանիքի կյանքի որակն ու հատկապես մոր քնի ռեժիմը: Քնի պահանջմունքը համարժեք է սնվելու պահանջմունքին, և ինչպես որ կարևորում ենք երեխայի կերակրվելու պահանջմունքը և շտապում կերակրել նրան, նույն կերպ պետք է կարևորենք քնի պահանջմունքը, քանի որ դրանք երկուսն էլ հիմնարար պահանջմունքներ են[4]: Պատահական չէ, որ Ջոն Դևիսը, խոսելով նորածինների մասին, նշում է, որ նրանց հոգեբանությունն ու ֆիզիոլոգիան մեկ ամբողջություն են[5]:

Արթուն ժամանակ մանկիկը գրեթե չի հանգստանում, քանի որ անընդհատ շարժման կամ, պատկերավոր ասած, աշխարհաճանաչման բարդ փուլում է: Երեխան կարողանում է լիարժեք հանգստանալ միայն քնի մեջ, որի ընթացքում նրա ուղեղը վերականգնում է անկենսունակ բջիջները, ինքնամաքրվում ու վերազինվում է նորացված նյարդաբջիջներով[6]: Կարելի է նկատել, որ, բացի ֆիզիոլոգիական բաղադրիչներից, քունն ունի հոգեբանական կողմ. երեխան, լույս աշխարհ գալով, հայտնվում է մարմնական, լսողական, տեսողական ազդակների կիզակետում, և քուն մտնելը յուրահատուկ կերպով պաշտպանում է փոքրիկին ազդակների գերծանրաբեռնվածությունից: Ջոն Բոուլբին վերոնշյալն անվանել է ապրելու բնազդային մեխանիզմ, որի շնորհիվ մոր հետ հուսալի կապվածության միջոցով երեխան զերծ է մնում արտաքին վտանգներից, ինչն օրհասական անհրաժեշտություն ունի գոյատևելու և զարգանալու համար[7]:

Ի դեպ, հեղինակն անդրադառնում է նաև կապվածության հիմնական տեսակներին՝ առանձնացնելով հուսալի, խուսափողական, ամբիվալենտ, ապակառուցողական կապվածություններ:

Կապվածության յուրահատուկ դասակարգում է տալիս Զիգմունդ Ֆրոյդը՝ առանձնացնելով մոր և մանկան միջև առկա հնարավոր կապվածության երկու տիպ, որոնցից մեկը կարելի է դիտարկել որպես առաջնային նարցիսականության դրսևորում, որի դեպքում նորածինը կենտրոնացած է միայն իր պահանջմունքների և կարիքների բավարարման վրա և չի տարբերակում, թե որտեղ է ավարտվում ինքը, և որտեղ է սկսվում արտաքին աշխարհը: Նրա պահանջմունքները կապված են միայն իր «մարմնի»-ի հետ, իսկ մայրը կամ նրան

---

[4] Տե՛ս **Weissbluth M.** Healthy sleep habits, happy child, USA, 1996, էջ 188:

[5] Տե՛ս **Винникот Д.** Маленькие дети и их матери, М., 2013, էջ 29:

[6] Տե՛ս **Фюнгерова М.** Наш ребенок, Прага, 1958, էջ 361:

[7] Տե՛ս **Bowlby J.** Attachment and Loss, 1971, England, vol. 1, էջ 61-66:

փոխարինողը դիտարկվում է որպես իր մի մասը: Այս շրջանում լիբիդոյի էներգիան ուղղված է Ես-ին, և նորածինը սիրում է այն, ինչն իր մասն է[8]: Սա կարելի է անվանել ինքնահավան (նարցիսական) կապվածության փուլ, որի ժամանակ, եթե երեխայի նկատմամբ մայրը դրսևորում է օտարված վերաբերմունք կամ գերխնամք, ապա, ինչպես Ֆրոյդն է նկատում, հետագայում կարող են առաջանալ ինքնահավան բնավորության շեշտադրումներ: Եթե առաջնային նարցիսականության փուլը հաջողությամբ է ավարտվում, ապա երեխան աստիճանաբար դուրս է գալիս մոր հետ ունեցած սիմբիոտիկ հարաբերություններից և սկսում հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ՝ որպես առանձին անհատ:

Կապվածության երկրորդ տիպը վրա է հասնում ավելի ուշ և կոչվում է հենքի տիպով կապվածություն[9]: Այս դեպքում էներգիայի վեկտորը տեղափոխվում է շրջապատող աշխարհի այն օբյեկտների վրա, որոնք ուղղակիորեն կապված են հիմնարար պահանջմունքների հետ, առաջին հերթին՝ մոր, մոր կրծքի, որից էլ բավարարվածություն և օրալ հաճույք է ստանում: Հեղինակը նշում է պահանջմունքի կորստի կամ չափից շատ բավարարման մասին, որոնք կարող են հանգեցնել օրալ կախյալությունների, ինչպիսիք են շատակերությունը, ծխելը և այլն:

Կապվածության այս տեսակներն առավել տեսանելի ու պատկերավոր դրսևորում են ստանում հոգեվերլուծաբան Մերի Էյնսվորտի «Տարօրինակ իրավիճակ» հետազոտությունում: Այն բաղկացած է 8 փուլից, որոնց նպատակն է ցույց տալ, թե ինչպես է երեխան արձագանքում մոր բացակայությանը[10]: Այս փորձը նկարագրում է մոր և մանկիկի միջև կապվածության հիմնական տեսակները՝ հիմնվելով երեխայի վարքային առանձնահատկությունների վրա, որոնք նա դրսևորում է մոր ներկայության, բացակայության կամ վերադարձի ժամանակ: Օրինակ՝ հուսալի կապվածության դեպքում երեխան թեև լաց է լինում մոր հետնից, բայց արագ հանգստանում է, երբ մայրը վերադառնում է, տագնապային կամ ամբիվալենտ կապվածության դեպքում երեխան չի հանգստանում նույնիսկ այն ժամանակ, երբ մայրը հետ է գալիս, մինչդեռ խուսափողական կապվածության դեպքում երեխան չի արձագանքում մոր՝ սենյակից դուրս գալուն:

Կարելի է ենթադրել, որ համանման իրավիճակ ստեղծվում է նաև քնի կարգավորման գործընթացում, երբ մայրը փոքրիկին պառկեցնում է քնելու: Այս դեպքում որոշիչ է դառնում կապվածության տեսակը, թե ինչպիսի վարք կցուցաբերի մանկիկը մոր այդ վարքի նկատմամբ, ու ինչպես դա կանդրադառնա քնի բնազդի դրսևորման վրա:

---

[8] Տե՛ս **Freud S.** Zur Einführung des Narzißmus, Wien, 1924, էջ 12:

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 13-15:

[10] Տե՛ս **Ainsworth M.** Patterns of Attachment, New Jersey, 1978, էջ 19-23:

Նորածինն արդեն իսկ օժտված է քնելու բնածին ընդունակությամբ, որն իր առաջնային, ինքնավար մարմնական ես-ի մի հատկանիշն է: Այս կապակցությամբ Հայնց Հարթմանը նկատում է, որ երեխան լույս աշխարհ է գալիս արդեն իսկ որոշակի ինքնավարությամբ, ունի բնածին ընդունակություններ, որոնցից են ծծելու, բռնելու, շնչելու, նյութափոխանակություն կատարելու, քնելու ռեֆլեքսները[11]: Թեև հեղինակը չի անդրադարձել այդ ընդունակությունների զարգացման ընթացքին, բայց կարող ենք ենթադրել, որ եթե դրանք սահմանափակվում, ճնշվում են ծնողների կողմից, երեխան կորցնում է իր ինքնավարությունն ու դառնում կախյալ շրջապատի փոփոխվող պայմաններից, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել բաժանման տագնապի առաջացմանը:

Ծնողավարման հիմնական նպատակը, սակայն, հարաբերականորեն անկախ և ինքնավար անհատ մեծացնելն է, քանի որ ծնողն ամեն պահի չի կարող լինել իր երեխայի կողքին: Միևնույն ժամանակ, կա բնածին ինքնավարություն, որով օժտված է մանկիկը լույս աշխարհ գալուն պես, իսկ մայրն ունի նշանակալի ու գերակա դեր ուղղորդման գործընթացում: Բանն այն է, որ նորածինն ինքն իր մասին հոգ տանել չի կարող և մոր խնամքի տակ է: Նորածնի և մոր միջև ձևավորվում է յուրահատուկ սիմբիոտիկ կապ, որը Դոնալդ Ուինիկոտն անվանեց *առաջնային կլանվածության փուլ*, ինչը պայմանականորեն կարելի է անվանել հղիության չորրորդ եռամսյակ, երբ երեխան բացարձակ կախյալության մեջ է մոր կրծքից ու գրկից և «ուտում է» մորը կրծքի կաթի միջոցով, ինչն էլ կենարար է ու ապրեցնող[12]: Ըստ մասնագետների՝ հենց այս շրջանում խթանվում է կաթնարտադրությունը, քանի որ ըստ պահանջի կերակրվող երեխան մոր օրգանիզմից այնքան կաթ է «պատվիրում», որքան իրեն անհրաժեշտ է և «փոխում» է կաթի որակն իր օրգանիզմին համապատասխան[13]: Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր մայր գործնականում կարող է և ունակ է կերակրելու իր նորածնին բացառապես կրծքով, եթե չկան ուղեկցող խնդիրներ: Այս կապակցությամբ Մելանի Քլայնը նշում է, որ երեխան սկզբում հուզական կապվածության մեջ է մտնում ոչ թե հենց մոր, այլ մոր կրծքի հետ՝ նրան տալով որոշակի պիտակ՝ սնող, ապրեցնող, հագեցնող «լավ կուրծք» և «վատ կուրծք», որից երեխան կարող է հրաժարվել[14]: Հրաժարման դրվագներ նկատելի են մինչև 6 ամսական փոքրիկների շրջանում՝ քնի հետընթացին զուգահեռ[15]: Հարկ է նշել նաև, որ կուրծքը ոչ միայն սննդառության, այլև հանգստի, ջերմության, քնի աղբյուր է, և եթե սննդառության և քնի գործողությունները համատեղվեն, ապա քունը կարող է զուգորդվել միայն կրծքով կերակրվելու

---

[11] Տե՛ս **Hartmann H**. Ego psychology and the problem of adaptation, New York, 1958, էջ 23-50:

[12] Տե՛ս **Винникот Д**. От педиатрии к психоанализу, М., 2019, էջ 484:

[13] Տե՛ս **Feldman-Winter L., Meek Younger J.** Evidence-Based Updates on the First Week of Exclusive Breastfeeding Among Infants up to 35 Weeks. Journal Pediatrics, vol. 145, no. 4, 2020:

[14] Տե՛ս **Клайн М.** Зависть и благодарность, М. , 2001, էջ 43-48:

[15] Տե՛ս **Bunik M**. Nursing strike of Refusal Breastfeeding Telephone Triage and Advice. 1st ed., American Academy of Pediatrics, 2012, էջ 112:

հետ, ինչը հետագայում կարող է դառնալ ընդհատվող ու մակերեսային քնի պատճառ:

Հաստատված է, որ 2-5 ամսականում փոխվում են երեխաների քնի կառուցվածքն ու տևողությունը, այն է՝ ցերեկային կարճ քուն, գիշերային հաճախակի արթնացումներ[16]: Կարելի է ենթադրել, որ սա ունի պաշտպանական նշանակություն, յուրատիպ ատավիզմ է, քանի որ մեր նախնիներն ապրել են վտանգներով լի, կյանքի համար ոչ բարենպաստ պայմաններում, ինչը նրանց ստիպել է պարբերաբար արթնանալ՝ ստուգելու՝ արդյոք ամեն ինչ անվտանգ է քունը շարունակելու համար: Քնի այս պարբերական բնույթը կարող ենք դիտարկել որպես էվոլյուցիայի ընթացքում ձևավորված, գոյատևումն ապահովող համակարգ:

Որպեսզի երեխայի քունը չորակազրկվի և չբաժանվի դրվագների, անհրաժեշտ է ապահովել միանվագ ու խորքային քուն, ինչի համար էլ քնաբաններն առաջարկում են քնի կարգավորման գործիքներ: Այս առիթով կարելի է ասել, որ քնի կարգավորման մեթոդների գաղափարախոսություն սավածը ենթադրում է առողջ ու որակյալ քնի բարենպաստ պայմանների՝ հարթ և չոր մակերևույթի, պատշաճ մթության, քնի ցանկալի ռիթմի, հոգեհուզական հուսալի կապվածության ստեղծում:

Նմանատիպ մեթոդներից մեկը ֆեյդինգն է, որի էությունն է աստիճանաբար, առանց կտրուկ քայլերի պակասեցնել քնի ընթացքին ծնողների ներգրավվածությունը և քնի մուտքն ազատել լրացուցիչ ծանրաբեռնվածությունից, ինչի արդյունքում երեխան աստիճանաբար ձեռք է բերում առանց որևէ օգնության քուն մտնելու կարողունակություն[17]:

Մոր և մանկան հուզական կապվածության ու ֆեյդինգ մեթոդի ներդրման արդյունավետության միջև կապը պարզելու նպատակով իրականացվել է պիլոտային հետազոտություն 430 ընտանիքների շրջանում, որոնք դիմել են մասնագետի այդ խնդրի առնչությամբ: Մասնակիցներին նախապես տրվել է հետազոտության վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն: Բոլոր ընտանիքներն ունեին մինչև 3 տարեկան երեխա՝ քնի տարբեր վարքային խանգարումներով, այն է՝ գիշերային հաճախակի արթնացումներ, ցերեկային անորակ քուն, առույգ արթնացումներ գիշերվա ընթացքում, քնի դժվար մուտք, մակերեսային և ընդհատվող հատվածներ:

Հետազոտվողներին առաջադրվել է թղթի վրա երկրաչափական պատկերների տեսքով պատկերել երեխայի հետ իրենց կապվածութունը:

Հետազոտության առանցքային նպատակն է վեր հանել մոր/հոր և երեխայի հուզական կապվածության առանձնահատկությունները նախքան քնի կար-

---

[16] Տե՛ս **Mindell J.A., Leichman E. S.** Development of infant and toddler sleep patterns, Journal of Sleep Research, no. 25, էջ 508-516:

[17] Տե՛ս **Пентли Э**. Как уложить ребенка спать без слез, Минск, 2014, էջ 33-40:

գավորման մասնագիտական գործընթացը սկսելը և պարզել, թե արդյոք կապվածության տեսակը հարաբերակցվում է քնի կարգավորման հարթ կամ խոչընդոտներով ընթացքի հետ: Հետազոտության տրամաբանությունը թելադրվում է քնի կարգավորման ողջ ընթացքի վրա մանկան և ծնողի հուզական կապվածության այս կամ այն յուրահատկության ներազդումը գնահատելու անհրաժեշտությամբ:

Կիրառված թեստը պրոյեկտիվ է, որի հիմքը պիկտոգրամման է[18]: Ընտրվել է հենց պրոյեկտիվ մեթոդը, քանի որ այս տեսակը հնարավորություն է տալիս դուրս բերելու գիտակցության շրջանակներից անդին ընկած տեղեկատվություն, ինչպես օրինակ՝ ներքին կոնֆլիկտներ, արտամղված և ճնշված հույզեր ու մտքեր:

Դրա հետ մեկտեղ՝ պրոյեկտիվ մեթոդիկաներն ավելի ճկուն ու հարմար են մտավոր զարգացման տարբեր մակարդակներ ունեցող մարդկանց շրջանում կիրառելու համար:

Նկարներն ընդհանուր առմամբ ունեն հետևյալ տեսքը (տե՛ս նկ. 1):



**Նկար 1**

[18] Տե՛ս **Бехтерев В.** «Пиктограмма» как метод изучения личности в норме и при некоторых нервно-психических заболеваниях, Ленинград, 1984, էջ 14:

Ստացված պատկերները բաժանվել են 3 խմբի՝ ըստ Ջոն Բոուլբիի առանձնացրած կապվածության 3 տեսակի[19]:

Առաջին խմբին դասվել են այն նկարները, որտեղ մայրն ու երեխան պատկերված են երկրաչափական առանձին պատկերների տեսքով, և երեխային խորհրդանշող պատկերը մասնակիորեն ներառված է ծնողին խորհրդանշող պատկերում, ինչն, ըստ Բոուլբիի, կարելի է որակել որպես հուսալի կապվածություն (տե՛ս նկ. 2):



**Նկար 2**

Մասնագիտական միջամտության ընթացքում պարզվեց, որ այս խմբի մայրիկների հետ աշխատանքն ամենահեշտն է, ընթանում է ներդաշնակ, առանց ընդհատումների, մասնագետի և մոր միջև ստեղծվում է թերապիական արդյունավետ համագործակցություն, ինչը նպաստում է մանկիկի քնի կարգավորմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացմանը: Այս խմբի երեխաների շրջանում չէին նկատվում անսփոփ ու անփարատ լացի դրվագներ, մայրիկները, հաճախ, բնազդաբար կարծես մեկ քայլ առաջ էին ընկնում՝ առանց այդ մասին մասնագետից հատուկ ցուցումներ ստանալու:

Երկրորդ խմբում ներառված են այն նկարները, որտեղ մայրն ու երեխան պատկերված են առանձին, որևէ կերպ չեն հատվում իրար: Այս դեպքում, ըստ

[19] Տե՛ս **Bowlby J.** Attachment and Loss, vol. 1, Great Britain, 1969, էջ 221-245:

ամենայնի, գործ ունենք կապվածության խուսափողական տեսակի հետ (տե՛ս նկ. 3):



**Նկար 3**

Այս դեպքում նույնպես չնկատվեցին մասնագիտական միջամտությունը խոչընդոտող ակնհայտ կամ շոշափելի դժվարություններ: Այդուհանդերձ, որպես կանոն, այս խմբի գրեթե բոլոր անդամները նշում էին, որ երեխան կարծես ինքն է հուշում, թե մայրիկը երբ իրեն պառկեցնի օրորոց, երբ դադարեցնի շոյանքը, իսկ երբեմն նույնիսկ ստեղծվում է տպավորություն, թե երեխան մինչև քնելը մայրիկին սենյակից դուրս է հրավիրում: Այս խմբի փոքրիկների շրջանում կարծես նկատվում է քնային բնազդի արտահայտիչ դրսևորումների յուրահատուկ ինքնավարություն:

Երրորդ խմբում են այն նկարները, որտեղ մանկիկին խորհրդանշող երկրաչափական պատկերն ամբողջությամբ ներառված է մորը խորհրդանշող երկրաչափական պատկերում: Դա կարող է նշանակել, որ մայրը ծննդաբերությունից հետո էլ շարունակում է իրեն և երեխային ընկալել որպես մեկ ամբողջություն: Այս դեպքում գործ ունենք սիմբիոտիկ-տագնապային կապի հետ (տե՛ս նկ. 4):



**Նկար 4**

Դժվար չէ նկատելը, որ այս դեպքում ո՛չ մայրը և ո՛չ էլ երեխան չունեն առանձին տարածք, շարունակում են մնալ առաջնային կլանվածության փուլում, որը, ըստ Ուինիկոտի, բնորոշ է մինչծննդյան զարգացման ընթացքին, այլ ոչ թե հետծննդյան շրջանին[20]:

Քնի կարգավորմանն ուղղված մասնագիտական հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ հիմնական բարդությունները գրանցվում են երրորդ խմբի մայրերի շրջանում, ովքեր պարբերաբար գանգատվում են տագնապային մտքերից, որ վնասում են փոքրիկին կամ սուր ու բուռն են արձագանքում երեխայի լացի դրվագներին: Մանկիկի լացը նրանց մեջ առաջացնում էր անելանելիության, անօգնականության զգացում, և ի վերջո մեթոդը կա՛մ լրիվ դադարեցվում էր, կա՛մ աշխատանքն առաջ էր շարժվում դանդաղ քայլերով, որի պատճառով քնի կարգավորման գործընթացն անհարկի երկարաձգվում էր:

**Եզրակացություն**

Ասվածից կարելի է եզրակացնել, որ հետծննդյան շրջանում մոր և մանկան մենահատուկ սիմբիոտիկ կամ, որ նույնն է՝ տագնապային կապվածությունը կարող է էականորեն խոչընդոտել քնի կարգավորման ընթացքը, քանի որ քունը կարգավորելու համար երեխային անհրաժեշտ է անվտանգ, չոր և հարթ մակերևույթի վրա քնեցնել, որը հնարավոր չէ այն դեպքում, երբ մայրը չի կարող և չի ցանկանում փոքրիկին բաց թողնել իր գրկից՝ իր այս արարքը հիմնավորելով մանկիկի լացով կամ այլ ուղեկցող իրավիճակներով: Սիմբիոտիկ կամ միահյուսված հարաբերություններում մեկ քունը կարծես թե չի բավականացնում նրանց երկուսին, դրա համար էլ թե՛ մայրը, թե՛ երեխան կիսատ ու անբավարար են քնում:

Իրականացված պիլոտային հետազոտությունը փաստում է հետծննդաբերական շրջանում մոր և երեխայի միջև հուզական կապվածության տեսակի և քնի կարգավորման ընթացքի միջև առկա նշանակալի կապը: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ տագնապային կամ սիմբիոտիկ կապվածությունը բացասաբար է ազդում ինքնուրույն քուն մտնելու երեխայի բնածին կարողության վրա, ինչն էլ իր հերթին հանգեցնում է քնի որակական և քանակական տվյալների անկման՝ մակերեսային, անորակ քուն, գիշերային հաճախակի կամ առույգ արթնացումներ, միկրոարթնացումից հետո քունը շարունակելու անհնարինություն:

Այսպիսով՝ քունը կենսական բնազդի անբաժանելի մասն է, որը նորածնի հոգեկան համակարգը պաշտպանում է արտաքին աշխարհի զգայական գերծանրաբեռնվածությունից, իսկ որակյալ ու առողջ քուն ունենալու համար անհրաժեշտ են մոր և մանկիկի հուսալի կապվածության նախադրյալներ:

---

[20] Տե՛ս Winnicott D. The child, the family, and the outside world, USA, 1964, էջ 75:

**ЭММА АРЗИЕВА** – ***Взаимосвязь между эмоциональной уникальной привязанностью матери и ребенка с процессом регуляции сна ребенка.*** – В статье рассматриваются основные проявления эмоциональной привязанности матери и младенца в послеродовом периоде и их взаимосвязь с особенностями сна младенца. Анализируются различные теории, описывающие типы привязанности, при этом подчеркивается качество и глубина связи между матерью и ребенком. Типы привязанности, в свою очередь, соотносятся с внутренним механизмами регуляции сна у младенца.

В статье выдвигается точка зрения, согласно которой поведенческие нарушения сна не зависят от порядка рождения ребенка, его возраста, пола или социально-экономического статуса семьи, поскольку они являются частью нормального процесса развития ребенка.

Автор подчеркивает, что причины поведенческих нарушений сна не являются исключительно физиологическими, а также отражают психоэмоциональное и психологическое благополучие ребенка.

В статье рассматривается сон как необходимая часть жизненного инстинкта, охраняющего ребенка от внешнего мира, перегружающего неподготовленную психику новорожденного. Полноценный и качественный сон возможен только при гармоничном сочетании психологических, физиологических и технических аспектов сна, при этом эмоциональное состояние матери по отношению к ребенку играет ключевую роль.

В связи с этим в статье представлено пилотное исследование, в центре которого-соотношение типа эмоциональной привязанности между матерью и ребенком и механизма регулирования сна младенца.

**Ключевые слова:** *поведенческие нарушения сна, регресс сна, эмоциональная привязанность, ритм сна и бодрствования, режим сна, первичная поглощенность, избегающая привязанность, тревожная привязанность, надежная привязанность, инстинкт сна*

**EMMA ARZIEVA** – ***The Impact of Maternal-Infant Attachment Style on Infant Sleep Regulation.*** – This article explores the fundamental manifestations of maternal-infant emotional attachment in the postpartum period and their correlation with the characteristics of infant sleep.

Drawing upon established attachment theories, the study highlights the depth and quality of the mother-infant bond, emphasizing its role in shaping the child's ability to regulate sleep.

The analysis underscores that behavioral sleep disturbances are not contingent upon birth order, age, gender, or the family's socio-economic status. Rather, they are inherent to the child's natural developmental trajectory. The author posits that sleep disturbances should not be viewed solely as physiological phenomena but as reflections of the child's emotional and psychological well-being.

Furthermore, sleep constitutes an essential component of the vital instinct that safeguards the infant from the overwhelming stimuli of the external world, which may otherwise inundate the immature and unprepared psyche of the newborn.

Achieving optimal and high-quality sleep necessitates the integration of physiological, and environmental factors, with maternal emotional responsiveness playing a pivotal role in this equilibrium.

In light of this, the article presents a pilot study investigating the relationship between maternal-infant attachment style and the methods employed for sleep regulation, providing empirical insights into this intricate dynamic.

**Key words***:* *behavioral sleep disturbances, sleep regression, emotional attachment, sleep-wake rhythm, sleep routine, primary engrossment, avoidant attachment, anxious attachment, secure attachment, sleep instinct*

**Գրականության ցանկ**

Бехтерев В. «Пиктограмма» как метод изучения личности в норме и при некоторых нервно-психических заболеваниях, Ленинград 1984, 26 էջ (Bekhterev V. «Piktogramma» kak metod izucheniya lichnosti v norme i pri nekotorykh nervno-psikhicheskikh zabolevaniyakh, Leningrad 1984, 26 ēj).

Винникот Д. Маленькие дети и их матери, Москва, 2013, 78 էջ (Vinnikot D. Malen'kiye deti i ikh materi, Moskva 2013, 78 ēj).

Винникот Д. От педиатрии к психоанализу, Москва, 2019, 520 էջ (Vinnikot D. Ot pediatrii k psikhoanalizu, Moskva 2019, 520 ēj).

Клайн М. Зависть и благодарность, Москва, 2001, 100 էջ (Klayn M. Zavist' i blagvdarnost', Moskva 2001, 100 ēj).

Марилауни К. Жизнь растений 1-й том, СПб., 1903, 765 էջ (Marilauni K. Zhizn' rasteniy 1-yy tom, SPb. 1903, 765 ēj).

Пентли Э. Как уложить ребенка спать без слез, Минск, 2014, 240 էջ (Pentli E. Kak ulozhit' rebenka spat' bez slez, Minsk, 2014, 240 ēj).

Фюнгерова М. Наш ребенок, Прага, 1958, 417 էջ (Fyungerova M. Nash rebenok, Praga 1958, 417 ēj).

Юнг К. О природе психе, Москва, Ваклер, 2002, 412 էջ (Yung K. O prirode psikhe, Moskva, Vakler 2002, 412 ēj).

Ainsworth M. *Patterns of Attachment*, 1978 New Jersey, 409 p.

Bowlby J. Attachment and Loss, Volume 1, 1971 England, 480 p.

Freud S. Zur Einführung des Narzißmus, 1924, Wien, 35 p.

Hartmann H. *Ego psychology and the problem of adaptation*, NY 1958, 121 p.

Weissbluth M. Healthy sleep habits, happy child, 1987 NY, 432 p.

Winnicott D. The child, the family, and the outside world, 1964 USA, 240 p.

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 2(47), հունիս, 91-99
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.2.091

# ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԴԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
## (ՀՀ աշխատաշուկայի օրինակով)

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Արագ փոփոխվող և ճգնաժամեր հարուցող ժամանակակից աշխատաշուկայում կազմակերպության ներսում հարաբերությունների կարգավորման, կայունության և հաջողության համար կարևոր է ստեղծել վստահության մթնոլոր: Բանն այն է, որ ճգնաժամային իրավիճակներում կազմակերպության ներսում հարաբերությունների բնույթը, կազմակերպական հաղորդակցման ոճը, ինչպես նաև կազմակերպության հանդեպ վստահության ձևավորման վրա ազդեցություն ունեցող այլ գործոնների ուսումնասիրությունը մարդկային ռեսուրսների կառավարման (այսուհետ՝ ՄՌԿ) մասնագետներին և ղեկավարությանը հնարավորություն կտա անհրաժեշտ ռեսուրսներ ներդնել կազմակերպության հանդեպ վստահության բարձր մակարդակ ապահովելու համար: Խնդիրն ավելի է կարևորվում հատկապես արագ փոփոխվող ներկա իրողություններում, երբ բարձր կատարողականի ապահովումն ու աշխատակիցների ներգրավվածությունը դառնում են կազմակերպության առանցքային խնդիրներից:
Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ներկազմակերպական հաղորդակցման դերն ու նշանակությունը կազմակերպության հանդեպ վստահության ձևավորման գործընթացում, ինչպես նաև առանձնացնել այն հիմնական գործոնները, որոնք ազդում են այդ գործընթացի վրա: Ենթադրվում է, որ այն ընկերություններում, որտեղ աշխատակիցները բարձր են գնահատում ներկազմակերպական հաղորդակցումն ու հարաբերությունները, կազմակերպության հանդեպ վստահությունը նույնպես բարձր է:
Հետազոտության շրջանակում կիրառվել է հարցման մեթոդը, որի արդյունքում պարզվել է, որ աշխատավայրի հանդեպ վստահության և կազմակերպությունում

* **Անահիտ Գևորգյան –** ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտ
**Анаит Геворгян –** аспирант кафедры общей психологии ЕГУ
**Anahit Gevorgyan –** PhD Student at YSU Chair of General Psychology
Anahit.gevorgyan@ysu.am https://orcid.org/0009-0000-6904-4499

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.05.2025
Գրախոսվել է՝ 30.05.2025
Հաստատվել է՝ 24.06.2025
© The Author(s) 2025

հաղորդակցման մակարդակի միջև կա դրական կոռելյացիոն կապ (r= 0.72)։ Աշխատակիցների կողմից կազմակերպությանը վստահելու գործընթացում առավել կարևոր գործոններ են ղեկավարների ազնվությունը, առողջ և դրական աշխատանքային մթնոլորտը, թափանցիկությունն ու ղեկավարների աջակցությունը։

**Բանալի բառեր** – *ՄՌ կառավարում, կազմակերպական վստահություն, հաղորդակցում, կազմակերպական ճգնաժամ, աշխատակիցների ներգրավվածություն, հոգեբանական անվտանգություն*

*Կազմակերպական վստահություն։* Ուսումնասիրելով կազմակերպական վստահության խնդիրը և այն դիտարկելով և՛ իբրև առանձին ֆենոմեն, և՛ իբրև միջանձնային ու խմբային հարաբերությունների կարևոր բաղադրիչ՝ մասնագետները տարբեր կերպ են այն սահմանում՝ ընդգծելով դրա տարբեր բաղադրիչները։ Որոշ հեղինակներ, օրինակ, վստահությունը դիտարկում են որպես մյուս կողմի գործողությունների նկատմամբ խոցելի լինելու հոգեբանական պատրաստակամություն՝ հիմնված այդ կողմի մտադրությունների և վարքի վերաբերյալ դրական ակնկալիքների վրա[1]։ Հեղինակների մեկ այլ խումբ վստահությունը բնութագրում է որպես գործատուի հանդեպ աշխատակցի հավատի ու աջակցության զգացում[2], որպես մեկ այլ մարդու գործողությունների շահավետ, բարենպաստ կամ առնվազն ոչ վնասակար լինելու հավանականության վերաբերյալ համոզմունք[3]։

Վստահությունը բազմաչափ հասկացություն է, քանի որ դրա վրա ազդում են տարբեր գործոններ, որոնցից կարելի է առանձնացնել առավել հաճախ հանդիպող հետևյալ երեքը՝

- Կոմպետենտություն-հմտությունների համախումբ, որը բնորոշ է կոնկրետ ոլորտի։ Եթե անձը տիրապետում է անհրաժեշտ հմտությունների, կարող է վստահելի համարվել համապատասխան աշխատանք կատարելու համար։
- Բարյացակամություն-ենթադրվում է, որ վստահորդը առաջնորդվում է վստահողի շահերով և ձգտում է նրա բարօրությանը՝ առանց սեփական օգուտի ակնկալիքի։ Այն արտահայտում է վստահորդի դրական վերաբերմունքը վստահողի նկատմամբ։

---

[1] Տե՛ս **Pirson M. A., Malhotra D.** (2011). Foundations of Organizational Trust. What Matters to Different Stakeholders?, Organizational Science. **Mayer R C., Davis J. H., Schoorman F. D.** (1995), An Integrative Model of Organizational Trust, The Academy of Management Review, Vol. 20, № 3, pp. 709-734 / https://www.jstor.org/stable/258792/

[2] Տե՛ս **Gilbert J. A., Tang T.** (1998). An Examination of Organizational Trust Antecedents, Public personnel Management, 27, էջ 321-338։

[3] Տե՛ս **Robinson S. L.** (1996). Trust and Breach of the Psychological Contrast, Administrative Science Quarterly, Vol. 41, № 4, էջ 74-599/ https://www.jstor.org/stable/2393868/

- Ամբողջականություն-վստահող կողմը ենթադրում է, որ վստահորդը կիսում է իր համար ընդունելի արժեքներն ու սկզբունքները[4]:

Վերոնշյալ գործոններից բացի՝ կարևոր են նաև կազմակերպության հուսալիության, անկեղծության, վերահսկելիության, բավարարվածության զգացման և նվիրվածության գործոնները, որոնց շնորհիվ աշխատակիցներն ավելի արդյունավետ են, էներգիայով լի, գործընկերների հետ լավ են հաղորդակցվում և ավելի երկար են աշխատում ընկերությունում, որոնք էլ իրենց հերթին դրական ազդեցություն են ունենում նրանց կատարողականի վրա[5]: Այս առնչությամբ կարևոր է նաև ղեկավարման վարքաձևը՝ աշխատանքի գնահատումը, աշխատակիցների հետ հետադարձ կապը, տեղեկատվության տրամադրումն ու հարաբերությունների կառուցումը[6]:

Կազմակերպության հանդեպ վստահությունը ուղղակիորեն ազդում է ընկերության գործունեության արդյունավետության և աշխատանքային դրական մթնոլորտի ձևավորման վրա, ինչի կարևորությունը հատկապես ընդգծվում է ճգնաժամային պայմաններում, երբ վտանգված են կազմակերպության կայունությունն ու գործունեությունը: Պատահական չէ, որ հանրային կապերի և ճգնաժամերի կառավարման մասնագետները կազմակերպական ճգնաժամերը նկարագրում են որպես «սպառնալիքներ ու բացասական իրադարձություններ, որոնք պատճառների և հնարավոր հետևանքների անորոշության պայմաններում պահանջում են կազմակերպության շտապ արձագանքը»[7]:

Ի դեպ, կազմակերպական ճգնաժամերի պատճառները կարող են լինել թե՛ ներքին, թե՛ արտաքին (քաղաքական, ֆինանսատնտեսական խնդիրներ, բնական աղետներ, մարդկային սխալներ, հեղինակության վնաս և այլն): Նման պայմաններում արդյունավետ կառավարումը պահանջում է մի շարք գործողությունների իրականացում ինչպես ճգնաժամային, այնպես էլ նախաճգնաժամային փուլում: Ուստի կարևոր է ուսումնասիրել այն գործոնները, որոնք ազդում են կազմակերպության արդյունավետության և աշխատակիցների ներգրավվածության վրա, ու աշխատել դրանց բարձր մակարդակ ապահովելու ուղղությամբ՝ ճգնաժամային պայմաններում ընկերության հաջողությունը չվտանգելու համար:

Նման գործոններից մեկը ճգնաժամային պայմաններում կազմակերպական հաղորդակցումն է, որի հիմնական նպատակն է անձնակազմին և շահառուներին տեղեկացնել ճգնաժամի մասին՝ ներկայացնելով դրա ծավալները,

---

[4] Տե՛ս **Kulpers S., Wolbers J.** (2021). Organizational and Institutional Crisis Management, էջ 4 https://doi.org/10.1093/acrefore/9780190228637.013.1611/

[5] Տե՛ս **Delahaye K. P.** (2003). Guideline for Measuring Trust in Organizations, Institute for Public Relations:

[6] Տե՛ս **Zak P. J.** (2017). The Neuroscience of Trust, Harvard Business Review, էջ 84-90 /https:/hbr.org/2017/01/the-neuroscience-of-trust?registration=success /

[7] **Kulpers S., Wolbers J.** (2021). Organizational and Institutional Crisis Management, p. 4 https://doi.org/10.1093/acrefore/9780190228637.013.1611/

հնարավոր հետևանքները ու կազմակերպության ձեռնարկած քայլերը[8]: Անորոշությունը մարդկանց մեջ կարող է առաջացնել հուզական լարվածություն, ինչը լրացուցիչ խոչընդոտ է ճգնաժամի հաղթահարման համար: Արդյունավետ հաղորդակցումը նվազեցնում է անորոշությունը՝ խթանելով աշխատակիցների ներգրավվածությունը կազմակերպության գործունեությանը: Կազմակերպության հաղորդակցման մակարդակը բացահայտելու նպատակով սույն հոդվածի շրջանակներում անցկացվել է հետազոտություն:

*Ընտրանքի նկարագրություն:* Հետազոտական ընտրանքը ներառում է ՀՀ-ում աշխատանքային գործունեություն ծավալող 18-60 տարեկան 40 անձի: Նկար 1-ում ներկայացված է հարցվածների ժողովրդագրական բաշխվածությունը ըստ սեռի, տարիքի և կազմակերպությունում աշխատելու տևողության: Հարցվածների 75%-ը կանայք են, 25%-ը՝ տղամարդիկ: Մասնակիցների 37,5%-ը տվյալ կազմակերպությունում աշխատում է 1-3 տարի, 37,5%-ը՝ մինչև 1 տարի, 15%-ը՝ 4-6 տարի, իսկ 10%-ը՝ 7 տարի և ավելի:




**Նկար 1.** *Հարցման մասնակիցների բաշխումը ըստ տարիքի, սեռի և կազմակերպությունում աշխատելու տևողության*

*Հետազոտական մեթոդներ:* Հետազոտությունը իրականացվել է հարցման մեթոդով: Հարցարանը, որը չափում է հոգեբանական անվտանգության մակարդակն ու կազմակերպական ճգնաժամերին աշխատակիցների վերաբերմունքը, բաղկացած է 4 հիմնական մասից.

[8] Տե՛ս **Мелконян Н., Асриян Э.** (2021). Управление коммуникациями в условиях кризиса, Публичное управление, 1, 2021, էջ 214-224:

1. Ժողովրդագրական և աշխատանքային գործունեության վերաբերյալ հարցեր,
2. Կազմակերպական հաղորդակցման մակարդակի վերաբերյալ հարցեր,
3. Կազմակերպական վստահության մակարդակը գնահատող հարցեր,
4. Կազմակերպության հանդեպ վստահության ձևավորման ամենակարևոր գործոնի առանձնացում:

Ժողովրդագրական և աշխատանքային գործունեությանը վերաբերող հարցերով հստակեցվել են հարցման մասնակիցների տարիքը, սեռը, զբաղվածությունը և տվյալ կազմակերպությունում աշխատելու տևողությունը: Կազմակերպական հաղորդակցման մակարդակի բացահայտմանն ուղղված հարցերը մշակելիս հիմք են ընդունվել այնպիսի գործոններ, ինչպիսիք են *ընդհանուր տեղեկացվածության մակարդակը, հաղորդակցման որակն ու արդյունավետությունը և տեղեկատվության հասանելիությունը* ինչպես բնականոն, այնպես էլ ճգնաժամային գործունեության պայմաններում:

Կազմակերպական վստահության չափման համար հիմք է ծառայել հանրային կապերի ինստիտուտի մշակած «Կազմակերպությունում վստահության չափման ուղեցույցը»[9]: Հարցարանում ներառվել են այնտեղ առանձնացված հարցերը, որոնք նախատեսված են կազմակերպական վստահության առավել կարևոր գործոնների՝ ամբողջականության, կոմպետենտության ու հուսալիության չափման համար:

Հարցման մասնակիցները 1-5 բալանոց սանդղակով գնահատել են իրենց վստահությունը կազմակերպության հանդեպ և այնտեղ առկա հաղորդակցման մակարդակը: Սանդղակում 1 միավորը ցույց է տալիս ներկայացված պնդմանը նրանց բացարձակ անհամաձայնությունը, իսկ 5 միավորը՝ բացարձակ համաձայնությունը:

*Արդյունքների վերլուծություն*: Նկար 2-ում ներկայացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կազմակերպական վստահության և ներկազմակերպական հաղորդակցման մակարդակի միջև կա դրական կոռելյացիա՝ r=0.72 (ըստ Պիրսոնի), ինչը նշանակում է, որ որքան դրական է գնահատվում աշխատակիցների կողմից կազմակերպական հաղորդակցման մակարդակը, այնքան ավելի բարձր է նրանց վստահությունը տվյալ կազմակերպության նկատմամբ:

Կազմակերպական վստահությունը դրական կոռելյացիոն կապի մեջ է նաև աշխատանքի տարրերի մասին հաղորդակցման և ճգնաժամային հաղորդակցման մակարդակի հետ, սակայն այդ կապը միջին ուժգնության է:

Հարցման մասնակիցների կողմից առանձնացվել են կազմակերպության հանդեպ վստահության ձևավորման վրա ազդեցություն ունեցող ամենակարևոր գործոնները, որոնք ներկայացված են նկար 3-ում:

---

[9] Տե՛ս **Delahaye K. P.** նշվ. աշխ.:

Ինչպես երևում է, հարցման մասնակիցները առավել կարևորում են ազնվությունը, առողջ մթնոլորտն ու հարաբերությունները, թափանցիկությունը և աջակցող ղեկավարության առկայությունը: Հատկանշական է, որ առավել հաճախ հանդիպող այս գործոններից յուրաքանչյուրը կապված է հաղորդակցման հետ, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է կազմակերպության հանդեպ վստահության և ներկազմակերպական հաղորդակցման մակարդակի միջև կապի առկայությունը:




**Նկար 2.** *Կազմակերպությունում հաղորդակցման մակարդակի և կազմակերպության հանդեպ վստահության միջև կոռելյացիա*




**Նկար 3.** *Կազմակերպության հանդեպ վստահության ձևավորման վրա ազդեցություն ունեցող գործոնները*

Ավելի մանրամասն դիտարկելով հարցման մասնակիցների շրջանում կազմակերպության հանդեպ վստահության մակարդակն ու կազմակերպական հաղորդակցման գնահատականը՝ նկատում ենք էական տարբերություն՝ կախված այն բանից, թե որքան ժամանակ են նրանք աշխատում տվյալ միջավայրում: Կազմակերպություններում առավել երկար աշխատող աշխատակիցներն ավելի ցածր են գնահատում կազմակերպությունում հաղորդակցման մակարդակը և իրենց վստահությունը կազմակերպության հանդեպ (նկար 4):




**Նկար 4.** *Կազմակերպության հանդեպ վստահության և կազմակերպական հաղորդակցման համեմատական վերլուծություն՝ըստ հարցվածների աշխատանքի տևողության*

*Եզրակացություններ*: Ընկերության արդյունավետ կառավարումը, կատարողականի բարձր մակարդակի ապահովումն ու աշխատակիցների ներգրավվածությունը ղեկավարների և ՄՌԿ մասնագետների կարևոր խնդիրների շարքում են: Ժամանակակից փոփոխվող աշխարհում, երբ ճգնաժամային իրադարձությունները ազդեցություն են ունենում թե՛ անհատների, թե՛ կազմակերպությունների վրա, այս հարցը դառնում է առանցքային: Մասնագետները հավելյալ ներդրումներ պետք է կատարեն դրական աշխատանքային մթնոլորտ ստեղծող և աշխատակիցների ներգրավվածությանը նպաստող գործոնների ուղղությամբ: Բազմաթիվ ուսումնասիրություններ հաստատում են այդ գործոններից մեկի՝ կազմակերպական վստահության մեծ նշանակությունը աշխատակիցների ներգրավվածության և կատարողականի բարձրացման առումով:

Սա հատկապես կարևոր է ճգնաժամային պայմաններում, երբ վտանգվում են թե՛ աշխատակիցների կատարողականը, թե՛ կազմակերպության արդյունավետությունը: Այդ պայմաններում վստահությունն ու դրական վերաբերմունքը դառնում են նշանակալի: Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել.

• Կազմակերպության հանդեպ վստահության և հաղորդակցման մակարդակի միջև գոյություն ունի դրական կոռելյացիա (r=0.72): Այսինքն՝ որքան բարձր է գնահատվում կազմակերպական հաղորդակցությունը, այնքան ավելի բարձր է վստահության մակարդակը: Վերջինս խթանում է աշխատակիցների ներգրավվածությունն և կատարողականը: Ուստի ՄՌԿ մասնագետների և

ղեկավարների համար կարևոր է ներդնել ռեսուրսներ բարձրորակ հաղորդակցում ապահովելու համար ինչպես բնականոն, այնպես էլ ճգնաժամային իրավիճակներում:

• Աշխատակիցների վստահության ձևավորման գործում առանձնահատուկ կարևորություն ունեն ղեկավարների ազնվությունը, առողջ և դրական աշխատանքային մթնոլորտը, թափանցիկությունն ու ղեկավարների աջակցությունը: Սա ևս մեկ անգամ ընդգծում է հաղորդակցման առանցքային դերը վստահության ձևավորման գործընթացում:

• Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ընկերությունում ավելի երկար աշխատող գործընկերները ավելի ցածր են գնահատում հաղորդակցման մակարդակը, ինչը բացասաբար է անդրադառնում նաև վստահության մակարդակի վրա: Սա կարևոր ազդակ է ՄՌԿ մասնագետների և ղեկավարների համար՝ հաղորդակցման ռազմավարությունը վերանայելու և դրական փոփոխություններ իրականացնելու առումով, քանի որ փորձառու աշխատակիցների պահպանումը մեծ նշանակություն ունի կազմակերպության զարգացման առումով: Միաժամանակ կարևոր է հիշել, որ հաղորդակցումը երկկողմանի գործընթաց է, որը ներառում է ոչ միայն տեղեկատվության փոխանցումը, այլև աշխատակիցների կարծիքների հավաքագրումը և դրանց կիրառումը կազմակերպության և աշխատակիցների վերաբերյալ կարևոր որոշումներ կայացնելիս:

**АНАИТ ГЕВОРГЯН** – ***Роль организационной коммуникации в процессе формирования доверия в организации (на примере рынка труда РА).*** – В современных условиях быстро меняющегося рынка труда создание атмосферы доверия внутри организации имеет решающее значение для её стабильности и успеха. Доверие выступает как фундаментальный элемент отношений между сотрудниками и организацией, приобретая особую важность в условиях кризиса. Изучение роли организационной коммуникации и других факторов, влияющих на формирование доверия, позволит HR-специалистам и руководящему составу направить ресурсы для обеспечения высокого уровня доверия в организации. Это особенно актуально в условиях современного быстро меняющегося окружения, когда обеспечение высокой эффективности организации и вовлеченности сотрудников является одной из ключевых задач.

Цель исследования заключается в изучении роли организационной коммуникации в процессе формирования доверия к организации, а также в выявлении основных факторов, влияющих на формирование доверия. Предполагается, что в тех организациях, где сотрудники высоко оценивают коммуникацию, уровень доверия к организации также выше. Для проведения исследования использовался метод опроса.

По результатам исследования установлена положительная корреляционная связь между доверием к организации и уровнем коммуникации в организации (r=0.72). В процессе формирования доверия сотрудников к организации наиболее важными факторами являются честность руководства, здоровая и позитивная рабочая атмосфера, прозрачность и поддержка со стороны руководства.

**Ключевые слова:** *управление персоналом, организационное доверие, коммуникация, организационный кризис, вовлеченность сотрудников, психологическая безопасность*

**ANAHIT GEVORGYAN – *The Role of Organizational Communication in the Trust-Building Process in the Organization (on the Example of the RA Labor Market).*–** In today's fast-changing labor market, creating an atmosphere of trust within an organization is crucial for its stability and success. Trust serves as a foundation in the relationship between employees and the organization, gaining even more importance during times of crisis. Examining the role of organizational communication and other influential factors in building trust will enable HR professionals and leadership teams to direct resources to ensure a high level of trust within the organization. This is especially important in the rapidly changing environment, where ensuring high organizational performance and employee engagement are among organizations' key challenges.

This research aims to study the role of organizational communication in the process of building trust in the organization, as well as to identify the key factors that influence trust formation. It is assumed that in organizations where employees rate the quality of communication high, trust in the organization is also at a higher level. The survey method was used to conduct the research.

According to the research results, there is a positive correlation between trust in the organization and the level of communication within the organization (r=0.72). In the process of employees' trust in the organization, the most important factors are leadership honesty, a healthy and positive work environment, transparency, and leadership support.

**Key words**: *HR management, organizational trust, communication, organizational crisis, employee engagement, psychological safety.*

**Գրականության ցանկ**

Zak P. J. (2017). The Neuroscience of Trust, Harvard Business Review, pp. 84-90 https://hbr.org/2017/01/the-neuroscience-of-trust?registration=success

Pirson M. A., Malhotra D. (2011), Foundations of Organizational Trust. What Matters to Different Stakeholders? , Organizational Science

Mayer R C., Davis J. H., Schoorman F. D.(1995). “An Integrative Model of Organizational Trust”, The Academy of Management Review, Vol. 20, No. 3, pp. 709-734 / https://www.jstor.org/stable/258792 / (DOI: 10.2307/258792.)

McEvily B., Tortoriello M. (2011). “Measuring trust in organizational research: Review and recommendations”, Journal of Trust Research, 1: 1, p. 23-63

Delahaye P. K.(2003), Guideline for Measuring Trust in Organizations, Institute for Public Relations

Kulpers S., Wolbers J. (2021). Organizational and Institutional Crisis management, https://doi.org/10.1093/acrefore/9780190228637.013.1611 / (DOI: 10.1093/acrefore/9780190228637.013.1611.)

Gilbert J. A., Tang T. (1998). An Examination of Organizational Trust Antecedents, Public personnel Management, 27, p. 321-338

Robinson S. L. (1996). Trust and Breach of the Psychological Contrast, Administrative Science Quarterly, Vol. 41, No. 4, pp. 74-599 / https://www.jstor.org/stable/2393868 /

Мелконян Н., Асриян Э. (2021). Управление коммуникациями в условиях кризиса, Публичное управление, 1, 2021, 214-224 стр.( Melkonyan N., Asriyan E. (2021), Upravlenie kommunikatsiyami v usloviyakh krizisa, Publichnoe Upravlenie, 1, 2021, 214-224 str.)

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а
Address: 52a, Kh. Abovyan str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

| | |
|---|---|
| Հրատարակչական խմբագիր և թողարկման պատասխանատու | **Արմեն Հովակիմյան** |
| Издательский редактор и ответственный выпуска | **Армен Овакимян** |
| Publishing Editor and Issued by | **Armen Hovakimyan** |
| Վերստուգող սրբագրիչ՝ | **Գայանե Գրիգորյան** |
| Контрольный корректор | **Гаяне Григорян** |
| Proofreader | **Gayane Grigoryan** |
| Տեխնիկական խմբագիր՝ | **Աննա Մկրտչյան** |
| Технический редактор: | **Анна Мкртчян** |
| Technical Editor: | **Anna Mkrtchyan** |

Ստորագրված է տպագրության 26 06. 2025: